

ՀԻՍՏՈՒՍ ԶՐԻՍՏՈՍԻ ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ ԵԿԵՂԵՑԻ • ԱՊՐԻԼ 2015

Լիսահո՞նա



Փրկչի սուրբ
զոհաբերությունը
հասկանալը, էջ 34

Ինչո՞ւ թույլ լինելը մեղք չէ, էջ 20

Ինչպե՞ս անցկացնել հաջող
տնային ընտանեկան նրբեր,
էջեր 10, 80



*«Ձեզանից ով է այն մարդը, որ հարյուր ոչխար ունենա և նրանցից մեկը կորցնե.
չի՞ թողնի իննսունևեցու անապատում և այն կորածի ետևից գնա, մինչև որ գտնե նրան:
Եվ երբոր գտնե, ուրախանալով իր ուսերի վրա կրնե նրան:»*

Ղուկաս ԺԵ.4–5



ՈՒՂԵՐՁՆԵՐ

- 4 Առաջին Նախագահության Ուղերձ: Նախագահ Մոնսոնը կոչ է անում քաջ լինել**
Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն
- 7 Այցելող Ուսուցիչների Ուղերձ: Հիսուս Քրիստոսի հատկանիշները. Նենգությունից կամ կեղծավորությունից գերծ**

ԸՆՏՐՎԱԾ ՀՈԴՎԱԾՆԵՐ

- 14 Կանանց հոգևոր ազդեցությունը**
Սթարլա Ավերքամփ Բաթլեր
Որպես կին ձեր ազդեցությունը անստնամանելից այն կողմ է անցնում:
- 20 Թույլ լինելը մեղք չէ**
Վենդի Ուլրիխ
Մոլորեք, ինչպես տարբերել մեղքերը և թույլությունները և ինչպես թույլությունները ուժեղ կողմեր դարձնել:

26 Մաքուր կրոն

Երեց Վ. Քրիսթֆեր Վադել
Կարդացեք անեսասներ ծառայության այս երեք քայլերի մասին:

30 Ինձ հետ եղիր Դու միշտ

Ջոնաթան Հ. Վեսթուլեր
Օրհներգ երգելը մեծ ազդեցություն գործեց կորեկան աղբյուրների վրա:

34 Փրկչի անեսասներ և սուրբ օրինակը

Նախագահ Բոյդ Կ. Փաքեր
Փրկչի Քաղության միջոցով մենք կարող ենք վճարել մեղքի և մեղավորության մեր հոգևոր պարտքերը:

80 Տնային ընտանեկան երեկոյի 100-ամյակը


1915թ. Նախագահ Ջոզեֆ Ֆ. Սմիթը և նրա խորհրդականները հրավիրեցին անդամներին սկսել անցկացնել տնային ընտանեկան երեկոներ, բացառելով նրա ձևաչափը, նպատակները և օրհնությունները:

ԲԱԺԻՆՆԵՐ

- 8 Մենք խոսում ենք Քրիստոսի մասին: Հավատքի զորությունը**
Էմբեր Բարլոու Դալ
- 10 Մեր տները, մեր ընտանիքները: Ընտանեկան տնային երեկո. դուք կարող եք դա անել**
- 12 Ավետարանի դասականներ: Նա հարություն առավ**
Նախագահ Դեյվիդ Օ. Մակքեյ
- 40 Վերջին Օրերի Սրբերի ձայները**

ԿԱԶՄԻ ՎՐԱ

Առջևում. Էմմաուսի ճանապարհը, Լիզ Լեմոն Սվինդլ, չբազմացնել: Ջերեմի Վինբորգ: Ներսի կազմ. Լուսանկարը՝ Ջիմ Ջեֆրի: Ետևի կազմի ներսում. Լուսանկարը՝ Քոդի Բեյլի:



44

44 Առաջ գնացեք հավատքով
Երեց Էսթրնի Դ. Փերքիսս
Մովորեք Նեպիից ինչ անել, երբ
կարևոր որոշումների առաջ եք
կանգնում:



**Տեսեք, թե
կարող եք
գտնել այս
համարում
թաքնված
Լիահոնան:
Հուշում.
Որտե՞ղ
կարող եք
վառել մոմը:**



54

- 49 Պատահա՛նք:** Փնտրեք Նրան
- 50 Ջոզեֆի շնորհիվ**
Նկարները՝ Թեդ Բարնսի
Կան առնվազն վեց ճանապարհ-
ներ, որոնք փոխում են ձեր
կյանքը Մարգարե Ջոզեֆ Սմիթի
շնորհիվ:
- 53 Կենդանի քրիստոսը**
Նախագահ Էդրա Թավթ Բենսոն
Աղա՞մ Նեպիի՞ Մովսե՞ս Դոմ
կգարմանաք, երբ իմանաք,
թե ով էր ամենակարևոր
մարգարեն:
- 54 Հնազանդության Փրկչի
օրինակը**
- 58 Մեր տարածքը**
- 60 Ինչպես լինել իմաստուն**
Երեց Նիլ Լ. Անդերսեն
Ո՞րն է տարբերությունը աշ-
խարհի իմաստության և Աստծո
իմաստության միջև:
- 61 Կարևորը**
- 62 Մի հոտ և մի Հովիվ**
Հովվի աշխատանքի մանրա-
մասները հասկանալը մեզ կա-
րող է ավելի մոտեցնել Փրկչին:
- 64 Հարցեր և պատասխաններ**
Ինչպե՞ս կարող եմ այնքան ան-
կաշկանդ զգալ ինձ, որպեսզի իմ
ենթակոպուսի հետ խոսեմ ինձ
մտահոգող խնդիրների կամ
հարցերի մասին:



75

- 66 Ո՞վ է քո հերոսը:**
Շառլոտ Մաե Շեփարդ
Էլլին վախենում էր ասել դասա-
րանին, թե ով էր իր իսկական
հերոսը:
- 68 Աղոթքները և տաճարները**
Մակթել Ջորջ
Երբ Դանին այցելեց տաճարը
Անգլիայում, նա կարևոր դաս
սովորեց աղոթքի մասին:
- 70 Հատուկ վկա: Ինչո՞ւ է
հնազանդ լինելն այդքան
կարևոր:**
Երեց Ռասսել Մ. Նելսոն
- 71 Պայծառ միտք**
- 72 Սուրբ գրքերի ժամ: Հիսուսը
բուժում է բորոտին**
Երին Սանդերսոն
- 74 Սուրբ գրքերի կերպարները:
Հիսուսը բուժում է
հիվանդներին**
- 75 Ճիշտ ուղին**
Երեց Կլաուդիո Դ. Ցիվիկ
Ճիշտ ուղով ընթանալը փոխում
է ամեն-ինչ:
- 76 Փոքր երեխաների համար:
Գիտե՞մ, Հիսուսը սիրում է ինձ**
Ջեյն Մաքքրայդ Չոուս

ԱՊՐԻԼ 2015 ՀԱՏՈՐ 16 ՀԱՄԱՐ 1
ԼԻԱՀՈՆԱ 12564 201

Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու պաշտոնական միջազգային ամսագիր

Առաջին Նախագահություն. Թոմաս Ա. Մոնտե, Շերիլ Բ. Այրիս, Դիտեր Ֆ. Ուլտրի

Տասներկու Առաջնորդների Քվորում. Բոյլ Ք. Փաքեր, Լ. Թոմ Փերի, Ռասսել Մ. Նեյտոն, Դալին Շ. Օնգս, Մ. Ռասսել Բալարո, Ռիչարդ Գ. Սքոթ, Ռոբերտ Դ. Շելլ, Ջեֆրի Ռ. Շուլան, Դեյվիդ Ա. Բեդլար, Քվեյթին Լ. Քոդ, Դ. Թոդ Քրիստոֆերսոն, Նիլ Լ. Անդերսոն

Խմբագիր. Քրեյգ Ա. Քարոլս

Խորհրդատուներ. Մերվին Բ. Անդրյու, Քրիստոֆեր Գոլդեն, Լարի Ռ. Լորենս, Ջեյմս Բ. Մարտին, Ջոզեֆ Վ. Սիտսո

Գլխավոր տնօրեն. Դեյվիդ Տ. Ուոլթեր

Ընտանիքների և անդամների աջակցման տնօրեն. Վինսենթ Ա. Վոգլ

Եկեղեցու Ամսագրերի տնօրեն. Այան Ռ. Լոյբերգ

Գործարար ղեկավար. Գարֆ Քենտ

Գլխավոր խմբագիր. Ռ. Վալ Ջոնսոն

Գլխավոր խմբագրի օգնական. Ռայան Քար

Հրապարակման օգնական. Լիզա Կարոլինա Լոպեզ

Գործընկեր և խմբագրողներ. Բրիթանի Բիթլ, Դեյվիդ Դիքսոն, Դեյվիդ Ա. Էդվարդս, Մեթյուն Դ. Ֆիլոն, Լորի Ֆուլեր, Գարեթ Շ. Գարֆ, Լամեն Փորթեր Գալեք, Միլի Մեն Լիվին, Մայքլ Ռ. Ռոբիս, Մայի Ջոնսոն Օդեքրիկ, Ջոշուա Ջ. Փերկի, Յան Փինթո, Ռիչարդ Մ. Ռոմնի, Պոլ Վանդերբերգ, Մարիսա Վիդալ

Արվեստի գծով գործադիր տնօրեն. Ջ. Սքոթ Նադսեն

Արվեստի տնօրեն. Թեդ Ռ. Փեթերսոն

Չևավորում. Ջանեթ Էնդրյուս, Ֆեյ Պ. Անդրյու, Մենդի Մ. Բենթլի, Ս. Քիմբալ Բոթ, Թոմաս Չայր, Նեյջ Ջինս, Քոլին Հիլքս, Էրիկ Պ. Ջոնսոն, Մյուգան Լոֆգրեն, Սքոթ Մ. Մուլ, Մարք Վ. Ռոբիսոն, Բրեդ Թիլդ, Կ. Նեյլո Վոլենհիտստ

Մտավոր սեփականության համակարգող. Բրեթ Նեբերեր Օս

Հրատարակչության տնօրեն. Ջեն Էնն Փեթերս

Հրատարակում. Թոմաս Բոթոմի Բրիք, Ջուլի Բրոդեթ, Քեթի Դաքսեր, Բրայան Վ. Գիլի, Դենիզ Զոլեր, Գինի Ջ. Նիլսոն, Գեյլ Թեյթ Ռաֆերթի

Նախատպագրություն. Ջեֆ Մ. Մարթին

Տպագրության տնօրեն. Քրեյգ Վ. Սեյվիկ

Բաշխման տնօրեն. Սթեֆեն Ռ. Քրիստենսեն

Միացյալ Նահանգներից և Կանադայից դուրս բաժանորդագրման և գների մասին տեղեկանքները համար այցելել store.lds.org կամ դիմել Եկեղեցու ձեռնարկային բաշխման կենտրոն կամ Թիխոնի ղեկավարին:

Չեռագրերը և հարցերը ներկայացրեք wagwag@liahona.lds.org; Է-փոստով՝ liahona@ldschurch.org; կամ փոստով՝ *Liahona*, Rm. 2420, 50 E. North Temple St., Salt Lake City, UT 84150-0024, USA:

Լիահոնան (Մորմոնի Գրքի տեքստի, որը Նշանակում է «կողմնացույց» կամ «ուղեցույց») հրատարակվում է անգլերեն, ալբաներեն, բիսլամա, բուլղարերեն, գերմաներեն, ռուսերեն, էստոներեն, թագալոգ, թայվերեն, թամիլ, թայերեն, թելուգու, թուրքերեն, ինդոնեզերեն, իտալերեն, իսպաներեն, իսրայելերեն, լատիշերեն, լեհերեն, լատվերեն, լիտվերեն, կամբոջերեն, կիրիբատի, կորեերեն, հայերեն, հայերեն, հինդի, հոլանդերեն, հունարեն, հունգարերեն, ճապոներեն, մալագազի, մալայերեն, մոնղոլերեն, նորվեգերեն, փիլիպինյան, չինարեն, պորտուգալերեն, ռումիներեն, ռուսերեն, սամոյերեն, սինհալա, սլովեներեն, սլոնոսկաներեն, ուկրաիներեն, ուրդու, քերական, ֆիններեն, ֆիջիերեն և ֆրանսերեն լեզուներով: (Հրատարակչության համախառնությունը տարբերվում է ըստ լեզուների):

© 2015 by Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները վերապահված են: Տպագրված է Ամերիկայի Միացյալ Նահանգներում:

Լիահոնայի տեքստը և տեսողական նյութերը կարող են բազմացվել եկեղեցում կամ տանը առանձին, ոչ-առևտրային օգտագործման նպատակով: Տեսողական նյութերը չեն կարող բազմացվել, եթե սեփականության հատուկ նշան է արված: Հեղինակային իրավունքի վերաբերյալ հարցերը ուղղեք հետևյալ հասցեով. Intellectual Property Office, 50 E. North Temple St., Salt Lake City, UT 84150, USA; կամ էլ-փոստով. cor-intellectualproperty@ldschurch.org:

Լիահոնան տարբեր լեզուներով կարելի է գտնել www.liahona.lds.org ինտերնետային կայքում:

For Readers in the United States and Canada: April 2015 Vol. 16 No. 1. LIAHONA (USPS 311-480) Armenian (ISSN 1525-7614) is published four times a year (April, May, October, and November) by The Church of Jesus Christ of Latter-day Saints, 50 E. North Temple St., Salt Lake City, UT 84150. USA subscription price is \$4.00 per year; Canada, \$4.80 plus applicable taxes. Periodicals Postage Paid at Salt Lake City, Utah. Sixty days' notice required for change of address. Include address label from a recent issue; old and new address must be included. Send USA and Canadian subscriptions to Salt Lake Distribution Center at address below. Subscription help line: 1-800-537-5971. Credit card orders (Visa, MasterCard, American Express) may be taken by phone. (Canada Poste Information: Publication Agreement #40017431)

POSTMASTER: Send all UAA to CFS (see DMM 707.4.12.5). NONPOSTAL AND MILITARY FACILITIES: Send address changes to Distribution Services, Church Magazines, P.O. Box 26368, Salt Lake City, UT 84126-0368, USA.

Մտքեր ընտանեկան երեկոյի համար

Այս համարը պարունակում է հոդվածներ և միջոցառումներ, որոնք կարող են օգտագործվել ընտանեկան երեկոյի համար: Սկսե՛ք երկու օրինակ:



«Ինձ հետ եղիր դու միշտ», էջ 30.

Եղիտ ինչպես «Ինձ հետ եղիր դու միշտ» օրհներգի բառերն օգնեցին Փեթ Մի-Յունգին մկրտվելու որոշում կայացնել, օրհներգերը կարող են զորեղ ազդեցություն ունենալ մեր կյանքում: Մտաբերեք մի այնպիսի ժամանակ, երբ օրհներգի բառերն օրհնել են ձեր կյանքը և խորհեք փորձառությունը ձեր ընտանիքի հետ կիսելու մասին: Հրավիրեք ընտանիքի յուրաքանչյուր անդամի ընտրել սիրած օրհներգ և պատմել, թե ինչպես է այն օրհնել ձեր կյանքը: Ապա ձեր ընտանիքով երգեք յուրաքանչյուր օրհներգը: (Դուք կարող եք սա անել մի քանի շաբաթների ընթացքում:)

«Աղոթքներ և տաճարներ», էջ 68.

Այս պատմությունը կարդալուց հետո ցուցադրեք կամ թվարկեք ձեր քաղաքի տարբեր եկեղեցիներ և ձեր ընտանիքի հետ քննարկեք այս հարցերը. Ի՞նչ նմանություններ մենք ունենք ուրիշ եկեղեցիների հետ: Ի՞նչ է երկնային Հայրը զգում Իր բոլոր զավակների հանդեպ: Ինչպե՞ս մենք պետք է վերաբերվենք այն մարդկանց, ովքեր ունեն այլ համոզմունքներ: Խորհեք Տասներկու Առաքյալների Քվորումից Դալին Շ. Օնգսի «Հավասարակշռելով ճշմարտությունն ու հանդուրժողականությունը» հոդվածն օգտագործելու մասին (*Լիահոնա*, փետրվար 2013, 28–35), որը կօգնի պատասխանել այս հարցերին:

ՉԵՐ ԼԵԶՎՈՎ

Լիահոնան և Եկեղեցու այլ նյութերը տարբեր լեզուներով մատչելի են languages.lds.org կայքում:

ԱՅՍ ՀԱՄԱՐԻ ԹԵՄԱՆԵՐԸ

Հանդարտե՛ք ջույգ են տալիս հողիս հողիս առաջին էջը:

- Աղոթք,** 68
- Այսաշխարհություն,** 34, 77
- Աստվածային Էություն,** 58
- Բժշկում,** 8, 89, 74
- Դարձ,** 30
- Եկեղեցու ղեկավարները,** 53, 77
- Երաժշտություն,** 30, 40
- Ընտանեկան երեկո,** 10, 80
- Ընտանիք,** 10, 50
- Ընտրություն,** 4, 20, 44
- Շառայություն,** 26, 42
- Ծովապահություն,** 30
- Կանայք,** 14
- Հավատք,** 8, 20, 53
- Հարություն,** 12, 49
- Հիսուս Քրիստոս,** 7, 8, 12, 20, 34, 34, 49, 54, 62, 66, 89, 74, 76
- Հնազանդություն,** 53, 54, 58
- Մահ,** 30, 41
- Մարգարեներ,** 53
- Մեղք,** 20, 34
- Միսիոներական աշխատանք,** 30, 40
- Ներում,** 20, 34
- Նոր Կտակարան,** 54, 62, 89, 74
- Որոշումներ,** 53, 60, 75

- Պատվիրաններ,** 70, 75
- Պոռնոգրաֆիա,** 34
- Ջոզեֆ Սմիթ,** 12, 50
- Սեր,** 76
- Սուրբ Հոգի,** 30, 41, 42, 43, 44, 50, 58
- Վերականգնում,** 50
- Վիշտ,** 30, 41
- Տաճարային աշխատանք,** 30, 43
- Քահանայություն,** 50
- Քաջություն,** 4
- Քավություն,** 20, 34, 49
- Օրինակ,** 14, 66
- մեղք,** 20, 34
- սատանա,** 34, 74



Նախագահ
Թոմաս Ս.
Մոնսոն


Նախագահ Մոնսոնը կոչ է անում **ՔԱՉ** լինել

Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը նշել է, որ ժամանակակից անցնում է, իսկ մենք կանչված ենք կատարելու զանազան ընտրություններ:

Նա ասել է, որ իմաստուն ընտրություններ կատարելու համար մեզ քաջություն է անհրաժեշտ. «քաջություն՝ ասելու ոչ, քաջություն՝ ասելու այո: Որոշումները ճակատագիր են կերտում»:¹

Հետևյալ մեջբերումներում Նախագահ Մոնսոնը հիշեցնում է Վերջին Օրերի Սրբերին, որ նրանց քաջություն է պետք, որ պաշտպան կանգնեն ճշմարտությանը և արդարությանը, պաշտպանեն այն, ինչին հավատում են, և դիմակայեն աշխարհին, որը մերժում է հավերժական արժեքները և սկզբունքները:

«Քաջ լինելու կոչ մշտապես տրվում է մեզանից յուրաքանչյուրին», - ասել է նա: «Դա միշտ այդպես է եղել, և արդպես էլ միշտ կլինի»:²



Քաջությունն առաջ է բերում Աստծո հավանությունը

«Մենք բոլորս էլ կհանդիպենք վախի, ծաղրանքի և ընդդիմության: Եկեք բոլորս ունենանք քաջություն՝ չենթարկվելու տարածված կարծիքին, քաջություն՝ համարձակորեն պաշտպանելու մեր սկզբունքները: Փոխզիջման չգնալու քաջությունը օրինում է մեզ Աստծո հավանությամբ: Քաջությունը կարևոր և էական արժանիք է դառնում ոչ այնքան այն ժամանակ, երբ այն վերաբերվում է հոժարակամ արհաբար մահանալուն, այլ պարկեշտորեն ապրելու վճռականություն ունենալուն: Առաջ շարժվելով և ապրելով այնպես, ինչպես պետք է ապրենք, մենք անկասկած օգնություն կստանանք Տիրոջից և կարող ենք մխիթարություն գտնել Նրա խոսքերում»:³

Քաջարի դիմակայել

«Ի՞նչ է նշանակում համբերել: Ես սիրում եմ այս սահմանումը՝ *քաջարի դիմակայել*: Քաջությունը գուցե անհրաժեշտ է հավատալու համար, երբեմն այն անհրաժեշտ կլինի, որ դուք հնազանդվեք: Դրա կարիքն անշուշտ կունենաք, համբերելով մինչև այն օրը, երբ դուք կհեռանաք այս մահկանացու կյանքից»:⁴

Քաջություն ունենալ կանգնելու ճշմարտության համար

«Թող որ դուք քաջություն ունենաք ամուր կանգնելու ճշմարտության և արդարակեցության համար: Քանի որ այսօր հասարակության չափանիշներն արագորեն հեռանում են մեզ տրված Տիրոջ արժեքներից և սկզբունքներից, ձեզ գրեթե միշտ կոչ կանեն պաշտպանել այն, ինչին դուք հավատում եք: Եթե ձեր վկայության արմատները խորը չեն գնացել, դժվար կլինի դիմակայել նրանց ծաղրանքին, ովքեր կասկածի են ենթարկում ձեր հավատքը: Եթե ավետարանի, Փրկչի և մեր Երկնային Հոր մասին վկայությունը խորը արմատներ է գցել, ապա այն կազդի այն ամենի վրա, որ կանեք ձեր կյանքում»:⁵

Մենք պետք է ունենանք հոգևոր և բարոյական քաջություն

«Հեռուստատեսությամբ, կինոնկարներում և այլ լրատվամիջոցներով հաղորդվող ուղերձները [այսօր] շատ հաճախ ուղղակիորեն հակասում է այն ամենին, ինչ մենք ցանկանում ենք մեր երեխաներն ընդունեն և իրենց սրտում պահեն: Մեր պարտականությունն է ոչ միայն սովորեցնել նրանց լինել հաստատուն հոգով և վարդապետության մեջ, այլև օգնել նրանց մնալ այդպիսին՝ անկախ նրանից դրանում ինչպիսի ուժերի նրանք կբախվեն: Մա շատ ժամանակ և ջանքեր կպահանջի մեզանից, և որպեսզի օգնենք մյուսներին, մենք ինքներս պետք է հոգևոր և բարոյական քաջություն

ունենանք, որպեսզի դիմակայենք չարին, որ տեսնում ենք ամենուր»:⁶

Թող որ մենք միշտ լինենք խիզախ

«Օրեցօր անցնող կյանքով քայլելիս մեր հավատքն անխուսափելիորեն կփորձվի: Երբեմն կլինենք մարդկանցով շրջապատված, բայց դեռևս փոքրամասնություն կկազմենք կամ անգամ միայնակ կլինենք այն հարցում, թե ինչն է ընդունելի, և ինչը՝ ոչ: . . .

Թող որ մենք միշտ լինենք խիզախ և պատրաստ պաշտպանելու մեր համոզմունքները, և եթե այդ ընթացքում մենք պետք է միայնակ մնանք, թող որ դա ամենք քաջաբար, ամրացած գիտելիքով, որ իրականում մենք երբեք միայնակ չենք, երբ կանգնում ենք մեր Երկնային Հոր հետ»:⁷ ■

ՈՒՍՈՒՑԱՆՈՒՄ ԱՅՍ ՈՒՂԵՐԶԻՑ

Դուք կարող եք խնդրել Նրանց, ում ուսուցանում եք, մտածել եկող շաբաթ սպասվող իրավիճակի մասին, լինի դա տանը, աշխատավայրում, դպրոցում կամ եկեղեցում, որը կպահանջի Նրանցից գործել քաջաբար: Նրանք միգուցե որևէ մտավախություն ունեն, համբերություն ցուցաբերեն ինչ-որ դժվար իրավիճակում, պաշտպանեն իրենց համոզմունքները կամ որոշեն ավելի լիարժեքորեն հնազանդվել ավետարանի որևէ սկզբունքին: Հրավիրեք Նրանց կիսվել իրենց մտքերով կամ գրի առնել դրանք:

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Թոմաս Ս. Մոնսոն, «Ընտրության երեք դասերը», *Հիստորիա*, նոյ. 2010, 67, 68:
2. Թոմաս Ս. Մոնսոն, «Քաջության կոչ», *Հիստորիա*, մայիս 2004, 55:
3. Թոմաս Ս. Մոնսոն, «Զորացիր և քաջ եղիր», *Հիստորիա*, մայիս 2009, 69:
4. Թոմաս Ս. Մոնսոն, «Հավատացեք, հնազանդվեք և համբերեք», *Հիստորիա*, մայիս 2012, 129:
5. Թոմաս Ս. Մոնսոն, «Որ դուք քաջություն ունենաք», *Հիստորիա*, մայիս 2009, 126:
6. Թոմաս Ս. Մոնսոն, «Երեք նպատակներ պետք է ուղեկցեն ձեզ», *Հիստորիա*, նոյ. 2007, 118–119:
7. Թոմաս Ս. Մոնսոն, «Խիզախություն ունեցիր կանգնելու միայնակ», *Հիստորիա*, նոյ. 2011, 60, 67:

Մեկ ուրիշի համար լինել Սարա

Մակքենզի Միլլեր

Մի ժամանակ ինձ համար դժվար էր օգտագործել իմ համոզմունքները պատասխանելու համար այնպիսի մի հասարակ հարցի, ինչպիսին է՝ «Ինչո՞ւ դուք սուրճ չեք խմում»: Նախկինում ես բերում էի այնպիսի պատճառաբանություններ, ինչպիսին են՝ «Այն շատ դառն է» կամ «Համն ինձ դուր չի գալիս»:

Ինչո՞ւ էի ես ամաչում: Ինչո՞ւ էի ես վախենում խիզախորեն խոսել այն ամենի մասին, ինչին ես հավատում էի: Այժմ, երբ ետ եմ նայում, ես չեմ կարողանում պարզ հասկանալ, թե ինչից էի ես վախենում: Սակայն ես պարզ հիշում եմ, թե երբ սկսեցի թաքնվել պատճառաբանությունների ետևում:

Մի օր իմ ավագ դպրոցում անգլերենի դասի ժամանակ ուսուցիչը հայտարարեց, որ մենք դիտելու ենք հեռուստատեսային մի ծրագրի հատված, որը ես գիտեի, որ չպետք է դիտել: Մինչ մյուս երեխաներն ուրախությամբ ընդունեցին այդ լուրը, մեր դասարանի Սարան ձեռք բարձրացրեց և հարցրեց, թե կարող էր դուրս գալ:

Երբ ուսուցիչը հարցրեց, թե ինչու, Սարան պարզապես պատասխանեց. «Քանի որ ես մորմոն եմ և ես չեմ դիտում հաղորդումներ, որտեղ կա անպարկեշտություն»:

Դասարանի առջև կանգնելու նրա քաջությունը հրաշալի էր: Երախտապարտ եմ Սարային, քանի որ ես նույնպես կանգնեցի և մինչև ծրագրի վերջը սպասեցի դրսում՝ մաքուր խղճով:

Ես ընդմիշտ փոխվեցի: Ես սկսեցի բացատրել իմ համոզմունքները՝ թեմայից խուսափելու փոխարեն: Եվ արդյունքում ես ինքնավստահություն ձեռք բերեցի և նույնիսկ ավելի շատ սկսեցի մասնակցել Եկեղեցու և դպրոցի միջոցառումներին:

Ես երբեք չասացի Սարային, թե ինչ մեծ նշանակություն ունեցավ նրա օրինակն ինձ համար, սակայն ես փորձում եմ հետևել նրա ինքնավստահության օրինակին: Ես այժմ գիտակցում եմ, որ Աստծո հրաշալի, սրբազան Եկեղեցու անդամը լինելն ամենևին էլ ամոթալի բան չէ: Ես հուսով եմ, որ կարող եմ իմ օրինակով մեկ ուրիշի համար լինել Սարա:

Հեղինակն սալթում է Յոսալթում, ՄՄՆ:

ԵՐԵՄԻԱՆԵՐ

Քաջության օրինակներ սուրբ գրություններում

Նախագահ Մոնսոնը մեզ ուսուցանում է քաջություն ունենալ և պատրաստ լինել պաշտպանելու այն, ինչին մենք հավատում ենք: Սուրբ գրություններում կան շատ մարդկանց օրինակներ, ովքեր քաջություն են ցուցաբերել: Կարդացեք յուրաքանչյուր անվան դիմաց գտնվող սուրբ գրությունը: Ինչպե՞ս են այս մարդիկ քաջություն ցուցաբերել և պաշտպանել այն, ինչն իրենք գիտեին, որ ճիշտ էր: Ազատ մասն օգտագործեք գրելու կամ նկարելու համար ձեր պատասխանները:

Ջոզեֆ Սմիթ (Ջոզեֆ Սմիթ-Պատմություն 1.11–17)

Դանիել (Դանիել 9.7, 10–23)

Սամուել Լամանացի (Չեղաման 13.2–4, 16.1–7)

Եսթեր (Եսթեր 7.5–14, Ե. 1–8, Լ. 1–6)

Մոլորվող ուսումնասիրեք այս նյութը և փորձեք հասկանալ, թե ինչով պետք է կիսվեք: Փրկչի կյանքը և դերերը հասկանալը ինչպե՞ս կ'ենթադնեն ձեր հավատքը Նրա հանդեպ և կօրինեն նրանց, ում դուք այցելում և ուսուցանում եք: Լրացուցիչ տեղեկության համար, այցելեք reliefsociety.lds.org:

Հիսուս Քրիստոսի հատկանիշները. նենգությունից կամ կեղծավորությունից զերծ

Սա Այցելող Ուսուցիչների Ուղեորների այն շարքից է, որը նախատեսված է Փրկչի հատկանիշներին:

Հասկանալը, որ Հիսուս Քրիստոսը նենգությունից կամ կեղծավորությունից զերծ է, կօգնի մեզ հավատարմորեն փորձել հետևել Նրա օրինակին: Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ջոզեֆ Բ. Վիրթլին (1917–2008) ասել է. «Նենգություն գործել նշանակում է խաբել կամ մոլորեցնել: . . . Նենգությունից զերծ անձնավորությունը անմեղ, անկեղծ միտում ունեցող և մաքուր շարժառիթներ ունեցող անձնավորություն է, ում կյանքն արտացոլում է ազնվության սկզբունքների պարզ կիրառումը նրա ամենօրյա գործողություններում: . . . Ես կարծում եմ, որ Եկեղեցու անդամների նենգությունից զերծ լինելու անհրաժեշտությունն այսօր ավելի հրատապ է, քան եղել է այլ ժամանակներում, քանի որ շատերն աշխարհում, ըստ երևույթի, չեն հասկանում այս արժանիքի կարևորությունը»:¹

Առաջին Նախագահության



Երկրորդ Խորհրդական Նախագահ Դիտեր Ֆ. Ուլսդորֆն ասել է. «Մեզանից ոչ ոք էլ այնքան Քրիստոսանման չէ, որքան գիտենք, որ պետք է լինենք: Այնուամենայնիվ, մենք լրջորեն ցանկանում ենք հաղթահարել մեր թուլությունները և մեղք գործելու միտումները: Սրտով և հոգով մենք ձգտում ենք դառնալ ավելի լավը՝ Հիսուս Քրիստոսի Քավության օգնությամբ»:²

Մենք գիտենք, որ «մենք կդատվենք համաձայն մեր գործերի, մեր սրտի ցանկությունների և ըստ այն բանի, թե ինչպիսի մարդ ենք մենք դարձել»:³ Սակայն, երբ մենք ձգտենք ապաշխարել, մենք կդառնանք ավելի մաքուր. և «Երանի նորանց, որ սրտով մաքուր են, որ նորանք Աստուծուն կտեսնեն» (Մատթեոս Ե.8):

Լրացուցիչ սուրբ գրություններ

Մաղմոս ԼԲ.2, Հակոբոս Գ.17,
Ա Պետրոս Բ.1–2, 22

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Joseph B. Wirthlin, “Without Guile,” *Ensign*, May 1988, 80, 81.
2. Դիտեր Ֆ. Ուլսդորֆ, «Եկեք, միացեք մեզ», *Լիստոնա*, նոյեմբեր 2013, 23:
3. *Հեռապրկ 2. Շատայնել եկեղեցում* (2010), 1.2.1:

Խորհեք այս մասին

Ի՞նչ կարող ենք սովորել նենգությունից զերծ լինելու մասին փոքր երեխաներից: (Տես Սուրբ Գրքերի Ուղեցույց, «Նենգություն»):



Հավատք,
Ընտանիք,
Սփոփանք

Սուրբ գրություններից

Փոքր երեխաները զերծ են նենգությունից: Հիսուս Քրիստոսն ասել է. «Թույլ տուեք երեխաներին ինձ մօտ գան, եւ մի արգիլեք դորանց. որ այդպիսիներին է Աստուծոյ արքայութիւնը: . . . Եւ [երեխաներին] առաւ գիրկը, ձեռքը դրաւ նորանց վերայ, եւ օրհնեց նորանց» (Մարկոս Ժ.14, 16):

Քրիստոսը նաև սպասավորեց երեխաներին Ամերիկաներում Իր Խաչելությունից հետո: Նա պատվիրեց, որ մարդիկ Իր մոտ բերեին իրենց փոքր երեխաներին և «դրեցին նրանց ներքև՝ գետնի վրա, նրա շուրջը, և Հիսուսը կանգնեց մեջտեղում. . .

. . . [Եվ] նա արտասովեց, և բազմությունը վկայեց դա, և նա վերցրեց նրանց փոքր երեխաներին, մեկ առ մեկ, և օրհնեց նրանց, և նրանց համար աղոթեց Հորը: . . .

Եվ երբ նրանք նայեցին՝ տեսնելու համար, նրանք գցեցին իրենց աչքերը դեպի երկինք, և . . . նրանք տեսան հրեշտակներ՝ իջնելիս երկնքից, կարծես թե կրակի մեջ էին. և նրանք իջան վար և օղակեցին այն փոքրիկների շուրջը, . . . և հրեշտակները սպասավորում էին նրանց» (3 Նեփի 17.12, 21, 24):

ՀԱՎԱՏՔԻ ԶՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Էմբեր Բարլոու Դալ

Եթե Երկնային Հայրը ազատեր մեզ մեր դժվարություններից, պարզապես քանի որ մենք խնդրում ենք, Նա կզրկեր մեզ այն փորձառություններից, որոնք անհրաժեշտ են մեր փրկության համար:

Մի տարի քոլեջում ես քննություն էի հանձնում, երբ պարանոցս սկսեց ցավել: Քննության լարված պահերից հետո էլ ցավը չանցավ: Ես խորհրդակցեցի բժիշկների հետ և փորձեցի զանազան բուժումներ, սակայն ցավը դեռևս շարունակվում էր: Հաջորդ տարվա ընթացքում, մինչ ես պայքարում էի, որ հաղթահարեի այս ցավը, ես նաև պայքարում էի իմ հավատքը մեծացնելու համար: Ես շատ ժամանակ էի անցկացնում աղոթքով, ուսումնասիրում էի սուրբ գրությունները և խնդրում էի քահանայության օրհնություններ: Այնպիսի զգացողություն ունեի, որ եթե պարզապես բավականաչափ հավատք ունենայի, ես կբժշկվեի:

Հիսուս Քրիստոսը բուժեց հիվանդներին, կույրերին, կաղերին, բորոտներին, ասելով՝ «ձեր հաւատքը պէս թող լինի ձեզ» (Մատթեոս Թ.29): Ես գիտեի, որ Նա զորություն ուներ բուժելու ինձ, ինչպես Նա բժշկել էր շատ ուրիշների Իր մահկանացու ծառայության ընթացքում: Ուստի, ես եզրակացրեցի, որ միայն իմ թերահավատությունն էր, որ խոչընդոտում էր իմ բուժմանը, ուստի, ես կրկնապատկեցի իմ ջանքերը: Մինչ ես շարունակում էի ֆիզիոթերապիան, ես աղոթում և ծոմ էի պահում, ուսումնասիրում և հավատում էի: Մակայն իմ ցավերը շարունակվում էին:

Սուրբ գրությունները սովորեցնում են մեզ, որ հավատքով մենք կարող ենք հրաշքներ գործել (տես Մատթեոս ԺԷ.20), Որտե՞ղ էր զորությունը իմ հավատքում: Ի վերջո, ես լուր ընդունեցի իմ իրավիճակը, եղանակներ գտա ցավի հետ կապված անհարմարությունները հաղթահարելու համար և որոշեցի բավարարվել նրանով, որ պահեի

հավատքի և բուժման ողջ հասկացողությունը հետագայի համար:

Տարիներ անց ես խոսում էի իմ ընկերներից մեկի հետ, ով տառապում էր սարսափելի սրտխառնոքով, որի պատճառով նա մեկ անգամ չէր, որ հիվանդանոց էր ընկել իր առաջին հղիության ընթացքում: Երիներ ուզում էր ևս մեկ երեխա ունենալ, սակայն նա վախենում էր, որ ստիպված է լինելու տանել նույն անհարմարությունները, որոնց հանդիպել էր իր առաջին հղիության ընթացքում: Նա ասաց ինձ, որ ծոմ էր պահում և աղոթում, և իսկապես հավատում էր, որ Երկնային Հայրը երկրորդ անգամ դա չէր պահանջի իրենից:

Մինչ մենք քայլում էինք, ես հիշեցի հետևյալ սուրբ գրությունը. «Դադարեցեք եւ ճանաչեցեք, որ ես եմ Աստված» (Մաղմուս ԽԶ.10):

Ես մտածեցի իմ փորձառության մասին, երբ սովորեցի դադարել անհանգստանալ իմ հիվանդության ընթացքում և հորդորեցի Երիներին շարունակել հավատալ, սակայն այդ հավատքը կախվածության մեջ չդնել այն բանից, թե արդյոք իր հաջորդ հղիության ընթացքում կունենար սրտխառնոց, թե ոչ:

Երբ ես շարունակեցի ուսումնասիրել հավատքի սկզբունքը, ուշադրությունս սևեռեցի հավատքի վերաբերյալ Ալմայի խոսքերի վրա, որտեղ նա սովորեցնում է, որ «Եթե դուք ունեք հավատք, դուք հույս ունեք բաների համար, որոնք տեսանելի չեն, որոնք ճշմարիտ են» (Ալմա 32.21):

Խորհելով այս սուրբ գրության շուրջ՝ ես բացահայտեցի, որ հավատքն այն չէր, ինչ ես էի կարծում: Ալման մեզ սովորեցնում է, որ



ՎԵՐ ԿԱՆԳՆԵԼ ՓՈՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

«Արդյո՞ք իմաստուն չէ, որ [Երկնային Հայրը] տալիս է մեզ փորձություններ, որպեսզի մենք կարողանանք վեր կանգնել դրանցից, պարտականություններ, որոնք մենք կկարողանանք կատարել, աշխատանք՝ մեր մկաններն ամրացնելու համար, վշտեր՝ մեր հոգիները փորձելու համար: Մի՞թե մենք չենք ենթարկվում գայթակղությունների, որպեսզի փորձենք մեր ուժը, հիվանդության, որպեսզի սովորենք համբերատարություն, մահվան, որպեսզի կարողանանք անմահանալ և փառավորվել:

Եթե բոլոր հիվանդները, ում համար մենք աղոթում ենք, բուժվեին, եթե բոլոր արդարները պաշտպանվեին և ամբարիշտները կործանվեին, Հոր ամբողջ ծրագիրը կխափանվեր և վերջ կդրվեր ավետարանի հիմնական սկզբունքին՝ ազատ ընտրությանը: Կարիք չէր լինի, որ որևէ մեկն ապրեր հավատքով»:

Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալ (1895–1985), Եկեղեցու Նախագահների Ուսմունքները. Սպենսեր Վ. Քիմբալ (2006), 15:



հավատքը հույսն է առ ճշմարիտ սկզբունքները: Հավատք ունենալ չի նշանակում հավատալ, որ մեր Երկնային Հայրը մեզ միշտ կտա այն, ինչ մենք խնդրում ենք, երբ մենք խնդրենք այն: Հավատալը, որ Քրիստոսը կբուժի իմ պարանոցը կամ որ Նա Էրինին կշնորհի սրտխառնոցից զերծ հղիություն, հավատք չէ առ ճշմարիտ սկզբունքները: Այնուամենայնիվ, մենք կարող ենք հավատալ, որ Քրիստոսն ունի բժշկելու զորություն, որ Նա մտահոգվում է մեզ համար, որ Նա կգորացնի մեզ, և եթե մենք համբերենք մինչև վերջ, մենք կարող ենք որակավել հավերժական կյանքի համար:

Տերը խոստացել է. «Ինչ բան, որ դու խնդրես հավատքով, հավատալով, որ դու պիտի ստանաս Քրիստոսի անուոնով, դու կստանաս այն» (Եսեմով 1.15): Ես հավատում եմ, որ այս խոստումի զորությունը գտնվում է Քրիստոսի անուոնի հավատալու

խորհրդի մեջ: Աստվածաշնչի բառարանը աղոթքի մասին մեզ սովորեցնում է հետևյալը. «Մենք աղոթում ենք Քրիստոսի անուոնով, երբ մեր միտքը Քրիստոսի միտքն է և մեր ցանկությունները Քրիստոսի ցանկություններն են. երբ Նրա խոսքերը կենում են մեզանում (Հովհաննես ԺԵ.7): Ապա մենք խնդրում ենք այն բաները, որոնք հնարավոր է, որ Աստված շնորհի: Ծառ աղոթքներ անպատասխան են մնում, քանի որ դրանք ընդհանրապես չեն ասվում Քրիստոսի անուոնով. դրանք ոչ մի կերպ չեն ներկայացնում Նրա միտքը, այլ մարդու եսասիրության արդյունքն են»:

Երբ մենք հավատքով մի բան ենք խնդրում, որը ներդաշնակ է Աստծո կամքի հետ, Նա կշնորհի մեզ համաձայն մեր ցանկությունների: Երկնային Հայրը գիտի մեզ, սիրում է մեզ և ցանկանում է մեզ համար ամեն անհրաժեշտ

բան, որոնք թույլ կտան, որ վերադառնանք Նրա մոտ: Եվ երբեմն դա ներառում է փորձություններ, դժվարություններ և մարտահրավերներ (տես Ա Պետրոս Ա.7): Եթե Երկնային Հայրը ազատեք մեզ մեր դժվարություններից միայն այն պատճառով, որ մենք խնդրում ենք, Նա կգրկեր մեզ այն փորձառություններից, որոնք անհրաժեշտ են մեր փրկության համար: Մենք պետք է սովորենք վստահել մեզ համար նախատեսված Աստծո ծրագրին և ենթարկենք մեր կամքը Նրա կամքին: Եթե մենք համապատասխանեցնենք մեր ցանկությունները Նրա ցանկություններին և ընդունենք, որ մեր հույսն ամբողջովին պետք է դնենք Նրա վրա, մենք կարող ենք որակավել «մեր» հավատքի վախճանն ընդունելով, այսինքն [մեր] հոգիների փրկությունը» (Ա Պետրոս Ա.9): ■

Հեղինակն սպրով է Օրեգոնում, ԱՄՆ:

ԸՆՏԱՆԵԿԱՆ ՏՆԱՅԻՆ ԵՐԵԿՈՒՄ ԴՈՒՔ ԿԱՐՈՂ ԵՔ ԴԱ ԱՆԵԼ

Անկախ նրանից, թե ինչպիսին է ձեր ընտանիքը, ընտանեկան տնային երեկոն կարող է օրհնել և ամրացնել ձեզ:

Հայրը հոգնած գալիս է տուն
Հաշխատանքային երկար օրվա-
նից հետո և գտնում իր ընտանիքի
մնացած անդամներին միանման
մռայլ զգացմունքների պայքարում:
Երկուշաբթի երեկո է, և ընտանե-
կան տնային երեկո անցկացնելն
անհնարին է թվում: Օգնության
աղոթք հղելուց հետո հայրն ու
մայրը որոշում են ամեն բան անել
պարզ ու հասարակ ձևով: Նրանք
կանչում ու մեկտեղ են հավաքում
իրենց ընտանիքին, օրհներգ են
երգում և միասին աղոթում: Նրանք
յուրաքանչյուրին տալիս են մի փոք-
րիկ մոմ, որը պետք է վառեն, երբ
պատմեն այն մասին, ինչը նրանց
վերջերս ոգեշնչել է: Մութ սենյա-
կում մոմերի լույսը ներկայացնում
է ոգեշնչումը և կենտրոնացնում է
երեխաների ուշադրությունը: Մինչ
կիսվում են վկայություններով,
քաղցր խաղաղության և սիրո
զգացումները լցնում են տունը:
Ընտանիքը երեկոն ավարտում է
երախտագիտությամբ, որ իրենք
անց են կացրել տնային երեկո:

Դուք գիտե՞ի՞ք, որ ընտանեկան
տնային երեկոն Եկեղեցու ծրագիր
է աղեն 100 տարի: 1915թ. ապրի-
լին Առաջին Նախագահությունը
հանձնարարեց անդամներին ամեն
շաբաթ մեկ երեկո տրամադրել ըն-
տանեկան աղոթքի, երաժշտության,
ավետարանի ուսումնասիրության,
պատմությունների և խաղերի: (Էջ
80-ում տես Առաջին Նախագա-
հության նամակից քաղվածքը:) Մարգարեները շարունակում են
մեզ հիշեցնել ընտանեկան տնային
երեկոյի կարևորության մասին:

«Մենք չենք կարող մեզ թույլ տալ
անուշադրության մատնել երկնքից
ոգեշնչված այս ծրագիրը», - ասել
է Նախագահ Թոմաս Ս. Մոնտրո:
«Այն կարող է հոգևոր աճ բերել
ընտանիքի յուրաքանչյուր անդամի,
օգնելով նրան խուսափել զայթակ-
ղություններից, որոնք ամենուր են»:¹

Միա մի քանի խորհուրդ, որոնք
կարող եք մտապահել, մինչ դուք
դարձնում եք ընտանեկան տնային
երեկոն ձեր շաբաթվա մի մասը:

Մա ինձ է վերաբերվում: «Ըն-
տանեկան տնային երեկոները
յուրաքանչյուրի համար են», - ասել
է Տասներկու Առաքյալների Քվորու-
մից Երեց Լ. Թոմ Փերին:² Մենք բո-
լորս էլ՝ ամուսնացած կամ ամուրի,
երեխաներ ունեցող կամ չունեցող,
կարող ենք ժամանակ նվիրել ըն-
տանիքն ամրապնդելուն և ավետա-
րանն ուսումնասիրելուն:

Ես կարող եմ ժամանակ գտնել:
Եկեղեցին օրինակ է ծառայում՝
ազատ պահելով երկուշաբթի
երեկոները Եկեղեցու միջոցառում-
ներից: Դուք կարող եք ցույց տալ
Տիրոջը և ձեր ընտանիքին, որ հո-
ժար եք ժամանակ տրամադրելու
մի բանի, ինչն ամենակարևորն է:

*Ես կարող եմ գտնել իմ ընտա-
նիքի համար հարմար միջոցը:*
Եթե ձեր ընտանիքի անդամները
տարբեր վայրերում են բնակվում,
փորձեք «ընտանեկան առցանց
երեկո» անցկացնել՝ խոսելով
ընտանիքի անդամների հետ առ-
ցանց կամ հեռախոսով: Որևէ մեկը
ստիպված է աշխատել մինչև ուշ
ժամ: Անցկացրեք «ընտանեկան
երեկո զբոսայգում» աշխատավայրի

մոտ ընդմիջման ընթացքում: Մի
ամուսնավուծված հայր անց էր
կացնում «ընտանեկան նամակի
երեկո» ամեն երկուշաբթի, գրելով
իր զավակներին, ովքեր հեռվում
էին ապրում:³ Թող որ խոչընդոտ-
ները խթան հանդիսանան ավելի
մեծ ստեղծագործական կարողու-
թյունների համար:

Ես կարող եմ սկսել այս շաբաթ:
Ընտանեկան երեկոն կարող է
կազմակերպվել համաձայն ձեր
ընտանիքի կարիքների և պայման-
ների: Միա մի քանի ընդհանուր
խորհուրդներ.

- Սկսեք և ավարտեք աղոթքով:
- Օգտագործեք երաժշտություն՝
ներառելով օրհներգերը և
Երեխաների Խմբի երգերը:
- Ուսումնասիրեք սուրբ գրու-
թյունները և վերջին օրերի
մարգարեների խոսքերը:
- Ամեն շաբաթ ներառեք բազ-
մազան ֆիզիկական միջո-
ցառումներ, ծառայության
ծրագրեր և ավետարանի վրա
հիմնված միջոցառումներ:
- Զվարճացեք: Խաղացեք մի
խաղ կամ թեթև ուտեստներ
պատրաստեք:
- Եղեք հետևողական: Եթե դուք
չեք կարող անել դա երկու-
շաբթի օրերին, գտեք մեկ
այլ հարմար օր:

*Ես ցանկանում եմ ստանալ
օրհնությունները:* Մարգարեները
խոստացել են, որ եթե մաս-
նակցենք ընտանեկան տնային
երեկոյի, արդյունքում կստա-
նանք մեծ օրհնություններ. տանը



կմեծանասերն ու հնազանդությունը: Հավատք կզարգանա երիտասարդների սրտերում: Ընտանիքները «գործություն ձեռք կբերեն կասեցնելու չարի ազդեցությունները և գայթակղությունները», որ շրջապատում են իրենց:⁴

Մինչդեռ ձեր ընտանեկան տնային երեկոները կարող են ամեն անգամ կատարյալ փորձառություններ չլինել, ձեր ընտանիքը կամրանա և կօրհնվի ձեր ջանքերի արդյունքում: «Յուրաքանչյուր ընտանեկան երեկո մի վրձնահարված է մեր հոգու կտավի վրա», - սովորեցրել է Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դեյվիդ Ա. Բեդնարը: «Ոչ մի դեպք չի թվում շատ տպավորիչ

կամ հիշարժան: Բայց ճիշտ ինչպես . . . ներկի վրձնահարվածները լրացնում են միմյանց և առաջացնում տպավորիչ մի գլուխգործոց, այնպես էլ մեր կատարած փոքր թվացող արարքները կարող են առաջ բերել նշանակալի հոգևոր արդյունքներ»:⁵ ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Thomas S. Monson, "Constant Truths for Changing Times," *Liahona*, May 2005, 19
2. L. Tom Perry, "Therefore I Was Taught," *Ensign*, May 1994, 38.
3. "Family Home Evening: Any Size, Any Situation," *Ensign*, Dec. 2001, 42.
4. First Presidency, in James R. Clark, comp., *Messages of the First Presidency of The Church of Jesus Christ of Latter-day Saints*, 6 vols. (1965-75), 4:339.
5. Դեյվիդ Ա. Բեդնար, «Ավելի ջանասեր և մտաճոռ տան համար», *Լիսինա*, նոյ. 2009, 19-20:

ՄԵԾԱԳՈՒՅՆ ԱՌԱՋՆԱՇԵՐԹՈՒԹՅՈՒՆ ՏԱԼ

«Մենք խորհուրդ ենք տալիս ծնողներին և երեխաներին մեծագույն առաջնահերթություն համարել ընտանեկան աղոթքը, ընտանեկան տնային երեկոն, ավետարանի ուսումնասիրությունը և ուսուցումը, և ընտանեկան առողջ միջոցառումները: Թեպետ արժանի և պատշաճ այլ պահանջներ կամ միջոցառումներ կարող են լինել, դրանք չպետք է փոխարինեն աստվածայնորեն նշանակված պարտականություններին, որ միայն ծնողները և ընտանիքները կարող են ինչպես հարկն է կատարել»:

Առաջին Նախագահության նամակ, փետ. 11, 1999:

ՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՎ

Այսօր աշխարհի ամենակարևոր
կարիքը անսասան հավատքն է
առ Քրիստոսը:



**Նախագահ
Դեյվիդ Օ. Մակքեյ
(1873–1970)**

Եկեղեցու իններորդ
նախագահ

Դերլիդ Օ. Մակբեյը
ծնվել է 1873թ.
սեպտեմբերի 8-ին:

Նա կարգվել է որպես Առաքյալ 1906թ. սպրիլի 9-ին 32 տարեկան հասակում, իսկ 1951թ. սպրիլի 9-ին հաստատվել է որպես Եկեղեցու իններորդ Լախագահ: Միս մի հատված այն երաշխիք, որը նա ունեցավ 1966թ. սպրիլի գերագույն համաժողովին: Երաշխիք ստեղծությունը կարող էր գտնել Համաժողովի գեկույցներում, սպրիլ 1966, 55-59:

Եթե հրաշքը գերբնական իրադարձություն է, որի ենթադրյալ զորությունը վեր է մարդու սահմանափակ իմաստությունից, ապա Հիսուս Քրիստոսի Հարությունը բոլոր ժամանակների ամենազարմանալի հրաշքն է: Դրա միջոցով ակնհայտորեն բացահայտվում է Աստծո ամենազոր լինելը և մարդու անմահությունը:

Հարությունը հրաշք է, այնուամենայնիվ, միայն այն տեսանկյունից, որ այն վեր է մարդկային ընկալումից և հասկացողությունից: Բոլոր նրանց համար, ովքեր ընդունում

ԿԵՆԴԱՆԻ ՔՐԻՍՏՈՍԸ

Կարդացե՛ք Հիսուս Քրիստոսի մասին վկայությունները, որոնք տրվել են ժամանակակից առաքյալների և մարգարեների կողմից.
Լիահոնա, ապրիլ 2000, 2–3:

Են այն որպես փաստ, դա լոկ
կյանքի համընդհանուր օրենքի
դրսևորում է: . . .

Հիմնավորեք այն որպես փաստ, որ Քրիստոսը վերցրեց իր մարմինը և հայտնվեց որպես փառավորված և հալոթյուն առած էակ, և դուք կպատասխանեք դարեր շարունակ տրվող հարցին. «Եթե մարդս մեռաւ, մի՞թե կկենդանանայ»: (Հոբ ԺԴ.14):

Հարուժյան վկաները

Որ Քրիստոսի փաստացի հարությունը գերեզմանից իրականություն էր աշակերտների համար, ովքեր նրան շատ լավ էին ճանաչում, անտարակուսելի փաստ է: Իրենց մտքում նրանք ոչ մի կասկած չունեին: Նրանք փաստի վկաներն էին. նրանք գիտեին, քանի որ տեսել էին իրեց աչքերով, նրանց ականջները լսել էին, նրանց ձեռքերը զգացել էին հարություն առած Քավչի ֆիզիկական ներկայությունը:

Պետրոսը՝ ավագ Առաքյալը, երբ տասնմեկը հավաքվել էին ընտրելու մեկին, ով կգրադեցներ Հուդա Իսկարիոթատացու տեղը, ասաց. «Հիմա պետք է այս մարդկանցիցը . . . սորանցից մեկը մեզ հետ վկայ լինի նորա յարութեանը» (Գործք Ա.21–22): . . .

Մեկ այլ առիթով Պետրոսը հայտարարեց իրենց թշնամիների առջև, հենց այն մարդկանց, ովքեր Հիսուսին մահվան էին մատնել խաչի վրա. «Ով Իսրայելացի մարդիկ, այս խօսքերը լսեցեք . . .

Այս Յիսուսին Աստուած յա-
րութիւն տուաւ որի վկա-
ներն ենք մենք ամենքս»
(Գործք Բ.22, 32): . . .

Լրացուցիչ վկաներ

Հիսուս Քրիստոսի Վերջին
Օրերի Սրբերի Եկեղեցին Պետրոսի,
Պողոսի, Հակոբոսի և բոլոր վաղեմի
Առաքյալների հետ միասին ընդու-
նում է Հարությունը ոչ միայն որպես
իրական ճշմարտություն, այլ որպես
երկրի վրա Քրիստոսի աստվածա-
յին առաքելության կատարում:

Իսաչի վրա Հիսուսի մահից հազար ութ հարյուր տարի անց Մարգարե Ջոզեֆ Սմիթը հայտարարեց, որ հարություն առած Տերը հայտնվեց իրեն, ասելով. «Ես տեսա երկու Անձնավորություն, ինձանից վեր՝ օդի մեջ կանգնած, որոնց պայծառությունն ու փառքն ամեն նկարագրությունից վեր էր: Նրանցից մեկը խոսեց ինձ հետ, դիմելով ինձ անունով, և ասաց՝ մատնացույց անելով մյուսին: *Սա է Իմ Սիրելի Որդին: Լսի՛ր Նրան*:» (Ջոզեֆ Սմիթ-Պատմություն 1.17): . . .

Եթե Ջոզեֆ Սմիթի վկայությունը միակը լիներ, դա կլիներ, ինչպես Քրիստոսն ասաց Իր վկայության մասին, երբ Նա խոսում էր Իր մասին, անօգուտ. սակայն Հիսուսն ուներ Աստծո և Առաքյալների վկայությունը: Ջոզեֆ Սմիթը նույնպես ուներ այլ վկաներ, [ովքեր] հիմնավորում էին [նրա] վկայությունը, որի ճշմարտացիությունը հայտնի էր դարձվել նրանց Մորոնի հրեշտակի հայտնվելով: . . .

... Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին (նույնպես) հայտարարում է Մարգարե ԶոգեՖ Սմիթի փառահեղ տեսիլքի մասին.

«Եվ արդ, բազմաթիվ վկայու-
թյուններից հետո, որ տրվել են նրա



Աստծո Որդին է, աշխարհի Քավիչը: Ոչ մի ճշմարիտ հետևորդ չի բավարարվում ընդունելով Նրան լուր որպես մեծ բարեփոխումներ կատարողի, օրինակելի ուսուցչի կամ նույնիսկ որպես միակ կատարյալ մարդու: Գալիլեացի այդ մարդը, ոչ թե փոխաբերական իմաստով, այլ *բառիս բուն իմաստով*, կենդանի Աստծո Որդին է: . . .

Իսկապես վերստին ծնվել

Ոչ մի մարդ չի կարող անկեղծորեն վճռել իր ամենօրյա կյանքում կիրառել Նազովրեցի Հիսուսի ուսմունքները, առանց փոփոխություն զգալու իր ողջ էության մեջ: «Վերստին ծնվել» արտահայտությունը ավելի խորը նշանակություն ունի, քան շատ մարդիկ տալիս են դրան: . . . Երջանիկ է այն անձնավորությունը, ով իսկապես զգացել է վեհացնող, վերափոխող զորությունը, որն առաջ է գալիս Փրկչին մոտ լինելուց, կենդանի Քրիստոսին նմանվելուց: Ես երախտապարտ եմ, որ գիտեմ, որ Քրիստոսը իմ Քավիչն է: . . .

Հարության ուղերձը . . . ամենամիսիթարիչն է, ամենափառահեղը, որ երբևէ տրվել է մարդուն, քանի որ երբ մահը սիրելի մեկին հեռացնում է մեզանից, մեր տառապող սրտերն ամոքվում են հույսով և աստվածային հավաստիացմամբ, որոնք արտահայտվում են հետևյալ բառերում. «*Նա այստեղ չէ. նա յայտնի է առաջ*» [տես Մատթեոս ԻԸ.6, Մարկոս ԺԶ.6]:

Իմ ողջ հոգով ես գիտեմ, որ Հիսուս Քրիստոսը հաղթել է մահին, և քանի որ մեր Քավիչն ապրում է, մենք նույնպես կապրենք: ■

Ենթավերնագրերը փոփոխված են. մեծատառերը և կետադրությունը ստանդարտացված է:

մասին, սա է վկայությունը, ամենավերջինը, որ մենք տալիս ենք Նրա մասին. Որ, նա ապրում է: (Վեճ. 76.22): . . .

Նման անառարկելի վկայությունների լույսի ներքո, որոնք տրվել են վաղեմի Առաքյալների կողմից, վկայություններ, որոնց հանդիպում ենք այդ իրադարձություններից մի քանի տարի անց, ապրող Քրիստոսի վերաբերյալ մեր ժամանակների այդ ամենահրաշալի հայտնության լույսի ներքո, իսկապես դժվար է թվում հասկանալը, թե ինչպես կարող են մարդիկ շարունակել մերժել Նրան և կասկածի տակ առնել մարդու անմահությունը:

Ինչ է մեզ անհրաժեշտ այսօր

Այսօր աշխարհի ամենակարևոր կարիքը անսասան հավատքն է առ Քրիստոսը: Դա ավելին է, քան սոսկ զգացմունքը: Զորությունն է, որ մղում է գործողության, և պետք է լինի մարդկային կյանքի բոլոր դրդող ուժերից ամենահիմնականը: . . .

Եթե մարդիկ միայն «կատարեին Նրա կամքը», մութ ու մռայլ գերեզմանին անհույս նայելու փոխարեն, նրանք իրենց աչքերը կդարձնեին դեպի երկինք և կիմանային, որ Քրիստոսը հարություն է առել: . . .

Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Մրբերի Եկեղեցին հայտարարում է ողջ աշխարհին, որ Քրիստոսը

ԿԱՆԱՆՑ ՆՈԳԵՎՈՐ

*«Մենք կոչ ենք անում Եկեղեցու կանանց միասին պայքարել արդարակեցության
համար: . . . Ես տեսնում եմ սա որպես աշխարհում մի պայծառ փայլող հույս»:*

—Նախագահ Գորդոն Բ. Հինքլի (1910–2008)



ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ



*Արդյոք մենք գիտենք, թե որքան
զորավոր է մեր հոգևոր ուժը:*

Սթարլա Ավերբամի Բաթեր

Բազմաթիվ հրաշալի, խոնարհ կանայք եկեղեցում մատուցում են նվիրված ծառայություն, առանց գիտակցելու իրենց կյանքի ունեցած հետևանքներով լի ազդեցությունը, որպես աշխարհիկ ծառայության օրինակներ, նաև որպես հոգևոր ուժի ժառանգություն: Նման մի կին է իմ տատիկը՝ Չերի Պետերսենը: Նա հավատարմորեն ծառայել է փոքր կոչումներում իր ողջ կյանքի ընթացքում: Եթե դուք հարցնեիք նրան, նա կպնդեր, որ չունեի շատ տաղանդներ աշխարհին առաջարկելու: Այնուամենայնիվ, երբ ես սկսեցի ուսումնասիրել նրա կյանքը, ես պարզապես հասկացա, թե որքան էր նրա հոգևոր ուժն ազդել իմ կյանքի վրա:

Չերիի ծնողները դադարել էին եկեղեցի հաճախել և ամուսնալուծվել էին, երբ նա դեռ շատ երիտասարդ էր, ուստի, նա մեծացել էր իր մոր՝ Ֆլորենսի մոտ, ով միշտ աշխատում էր: Ֆլորենսն իր մանկության տարիներին էլ ավելի անտեսված էր եղել, քանի որ նա մեծացել էր գիշերօթիկ դպրոցում, մինչ նրա մայրը՝ Ջորջիան ապրում էր աշխարհիկ կյանքով: Անկախ իր դաստիարակության հետ կապված մարտահրավերներից, Չերին շարունակեց ապրել ավետարանով, հավատարմորեն եկեղեցի հաճախելով իր մեծ տատիկի՝ Էլիզաբեթի ընտանիքի կամ իր ընկերների հետ: Նա տեսավ նրանց ընտանիքներում այն, ինչը կցանկանար իր ընտանիքի համար: Նա հաստատ չգիտեր, թե ինչպիսին պիտի լինեին ընտանիքը, սակայն նա գիտեր, թե ինչպիսին այն չպիտի լինեին, և նա որոշել էր, որ իր հետագա ընտանիքը պետք է այլ լինեին:

Չերիի ամուսինը՝ իմ պապիկ Դեյլը, մի անգամ ասաց ինձ. «Վկայություն ունենալու համար դու պետք է ցանկանաս դա: Չերին միշտ ցանկացել է վկայություն ունենալ»: Չնայած, որ նրանց ամուսնության առաջին տարիները լի էին դժվարություններով, նրանք որոշել էին ամուր մնալ որպես ընտանիք: Դեյլի աշխատանքային գրաֆիկի պատճառով նրանք քիչ ակտիվ էին իրենց ամուսնության առաջին տարվա ընթացքում, սակայն Երեխաների Խմբում ծառայության կանգնելը ոգեշնչեց Չերիին սկսել հաճախել, և Դեյլը շուտով միացավ

ՍՏԱՐԼԱ ԱՎԵՐԲԱՄԻ ԲԱԹԵՐ, ՊԵՏԵՐՍԵՆ, ԶԵՓՈՐԱՆՈՒՄԵՆ

նրան եկեղեցում որպես սարկավագների քվորումի խորհրդական: Այդ ժամանակվանից սկսած նրանք երկուսն էլ ակտիվ են եղել եկեղեցում: Չերիի ծառայելու ցանկությունը և ամուր ընտանիք ունենալու որոշումը օգնել են իմ մորը դառնալու այնպիսի ուժեղ կին, ինչպիսին է նա հիմա, և իմ մոր օրինակը օգնել է իմ ընտանիքին, հատկապես այժմ, երբ ես կազմում եմ իմ իսկ ընտանիքը:

Մենք՝ կանայք, կարող ենք հոգևոր մեծ ազդեցություն ունենալ նրանց վրա, ովքեր շրջապատում են մեզ: Իսկապես, Ջոզեֆ Սմիթն ուսուցանել է, որ մեր դերը «ոչ միայն աղքատներին սատարելն է, այլ հոգիներ փրկելը»:¹ Հիսուս Քրիստոսը կանչել է Իր եկեղեցու կանանց լինելու Իր աշակերտները և լինելու հոգևորապես ուժեղ: Մեր հոգևոր ուժը և ազդեցությունը արժեքավոր են փրկության աշխատանքի առաջընթացի համար, և մենք պետք է հնարավորություններ փնտրենք հոգևորապես ամրապնդելու նրանց, ովքեր շրջապատում են մեզ: Երբ մենք անենք դա, մեր հավատքի և արդարակեցության ազդեցությունը կանցնի մեզ համար տեսանելի սահմաններից:

Կանչված՝ լինելու աշակերտներ

Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ջեյմս Ի. Թալմիջը (1862–1933) գրել է. «Կանանց ամենամեծ պաշտպանն աշխարհում Հիսուս Քրիստոսն է»:² Մտածեք, օրինակ, թե Նոր Կտակարանում ինչ սովորեցրեց Նա Իր երկու կին աշակերտներին՝ Մարիամ և Մարթա քույրերին: *Իմ արքայության դուստրերը* գիրքը բացատրում է. «Ղուկաս Ժ գլուխը պարունակում է Մարթայի պատմությունը, թե ինչպես էր նա իր տան դռները բացել Հիսուսի համար: Նա ծառայում էր Տիրոջը՝ հոգ տանելով Նրա նյութական կարիքների համար, իսկ Մարիամը նստել էր Ուսուցչի ոտքերի մոտ և ուշադիր լսում էր Նրա ուսմունքները:

Այնպիսի մի ժամանակաշրջանում, երբ կանանցից հիմնականում ակնկալվում էր մատուցել միայն նյութական ծառայություններ, Փրկիչն ուսուցանեց Մարթային և Մարիամին, որ կանայք կարող էին նաև հոգևորապես մասնակցել Իր աշխատանքին: Նա հրավիրում էր նրանց դառնալ Իր աշակերտները և ճաշակել փրկությունից՝ «այդ բարի բաժնից», որ երբեք չէր վերցվի նրանցից»:³

Մարթայի նման, մենք էլ երբեմն սխալմամբ մտածում ենք, որ կանանց հիմնական դերը կայանում է

նյութական ծառայություն առաջարկելու մեջ, ինչպես օրինակ կերակուր պատրաստելը, կարելի և ուրիշների համար մաքրություն անելը: Այս ծառայությունը արժեքավոր և նվիրական գոհաբերություն է. այնուամենայնիվ, կարող և եփող քույրերից առավել Տերն ունի հոգևոր գործություն ունեցող կանանց կարիքը, ում հավատքը, արդարակեցությունը և գթությունը փայլում են իրենց կյանքում:

Նա գիտի, որ մեզանից յուրաքանչյուրը շատ բան ունի առաջարկելու: Հիսուս Քրիստոսը կանչում է *քույրիս* զարգացնել մեր հոգևոր ուժը և կարողությունը՝ ստանալու հայտնություն և գործելու ըստ այդմ, որպեսզի օգնենք առաջ տանել Նրա գործը: Միովիտը Միության գերագույն նախագահ Լինդա Ք. Բրոքընը քույրերին ասել է.

«Դուք երկիր եք ուղարկվել այս ժամանակի տնտեսությունում նրա շնորհիվ, թե ով եք դուք և ինչ եք պատրաստվել անելու: Անկախ նրանից, թե Մատանան ինչ կփորձի համոզել մեզ մտածել այն մասին, թե ով ենք

մենք, մեր իսկական ինքնությունը Հիսուս Քրիստոսի աշակերտը լինելն է»:⁴

Տերը գիտի մեզ և մեր իրավիճակները, և Նա մեզանից յուրաքանչյուրի համար գործ է նախատեսել, որ պետք է անենք այս աշխարհում: Ոչ մի քրոջ գիտելիքները կամ տաղանդները խիստ սահմանափակ չեն՝ բարու համար հոգևոր ուժ հանդիսանալու և ուրիշներին Քրիստոսի մոտ բերելու համար: Այսպիսի աստվածային ներուժով մենք պարտավոր ենք դառնալու մեր տների և համայնքների հոգևոր ղեկավարները: Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Մ. Ռասսել Բալլարդը հայտարարել է. «Այս եկեղեցում յուրաքանչյուր քույր, ով ուխտեր է կապել Տիրոջ հետ, աստվածային հանձնարարագիր ունի՝ օգնելու փրկել հոգիներ, առաջնորդել աշխարհի կանանց, ամրացնել Միոնի տները և կառուցել Աստծո թագավորությունը»:⁵

Կարիք չկա, որ մենք լինենք բարձր դիրքերում կամ անենք անսովոր բաներ, որպեսզի օգնենք մեր շուրջը գտնվողներին կատարելու ընտրություններ, որոնք կառաջնորդեն նրանց ավելի մոտենալ Հիսուս Քրիստոսին, որը մեր ամենակարևոր պարտականությունն է: Թե ամենամեծ և թե ամենափոքր բաները, որոնք մենք անում ենք մեկ կամ երկու մարդու կյանքում, նույնիսկ պարզապես մեր իսկ ընտանիքում, կարող են ունենալ շատ մեծ ազդեցություն:



Չորս սերունդներ. Էլիզաբեթ (ձախից), գրկել է իր թոռնուհուն՝ Ֆլորենսին: Էնկին (կենտրոնում) Յուտա է եկել իր ծնողների հետ և Էլիզաբեթի մայրն է: Ջորջիան (աջից) Էլիզաբեթի դուստրն է, սակայն Ջորջիան և Նրա դուստր Ֆլորենսը հեռացել էին եկեղեցուց: Հավատարիմ Էլիզաբեթն էր, որ օգնեց իր ծոռնուհուն՝ Չերիին, և Չերիի սերունդները վերադարձան դեպի ավետարանը:

17



ամուսնանալու իր ցանկությունը: Երեց Մքոթը, ով նախկինում գրեթե չէր մտածել միսիա ծառայելու մասին, մեծապես ազդվել էր: «Ես գնացի տուն և չէի կարողանում այլ բանի մասին մտածել: Ես արթուն էի ողջ գիշերվա ընթացքում: . . . Շատ աղոթքներից հետո ես որոշեցի հանդիպել իմ եպիսկոպոսի հետ և սկսել լրացնել իմ միսիոներական դիմումը»:⁸ Չնայած, որ Ջենիկը տվեց նրան առաջնորդություն և հուշում, որի կարիքը նա ուներ, Երեց Մքոթն ասաց. «Ջենիկը երբեք չի խնդրել ինձ ծառայել միսիայում *իր համար*: Նա բավականաչափ սիրում էր ինձ, որպեսզի կիսվեր իր համոզմունքով և այնուհետև հնարավորություն տար ինձ ծրագրել իմ սեփական կյանքը: Մենք երկուսս էլ ծառայեցինք միսիայում և ավելի ուշ կնքվեցինք տաճարում: Ջենիկի խիզախությունն ու նվիրվածությունն իր հավատքին մեր միասնական կյանք բերեցին մեծ տարբերություն: Ես վստահ եմ, որ մենք չէինք գտնի այն երջանկությունը, որը մենք

*Միտելի օրհներգում նշվում է.
«Հրեշտակների գործը տրվել է կանանց. Սա է պարզը, որը պահանջում ենք»:
Մենք շատ բան կարող ենք առաջարկել նրանց կյանքում, ում սիրում ենք:*

վայելում էինք, եթե չլիներ առաջին հերթին Տիրոջը ծառայելու սկզբունքի նկատմամբ նրա ամուր հավատքը: Նա հիանալի, արդարացի օրինակ է»:⁹

Այս հրեշտակային կանանց հոգևոր ազդեցությունն էր նրա կյանքում, որ օգնեց գուտ մեկ երիտասարդ տղամարդու՝ Երեց Մքոթին, կատարելու իր կյանքի ամենակարևոր որոշումներից մի քանիսը՝ մկրտվել, միսիա ծառայել և ամուսնանալ տաճարում:

Մենք կարող ենք օգնել ուրիշներին ցանկանալ կատարել լավ ընտրություններ մեր օրինակով, գործերով, խոսքերով և անձնական արդարակեցությամբ: Սփոփող Միության գերագույն նախագահության առաջին խորհրդական Քույր Քերոլ Մ. Սթեֆենսը հայտարարել է. «Մենք Տիրոջ արքայության ուխտյալ դուստրերն ենք, և մենք կարող ենք գործիքներ լինել Նրա ձեռքում: Ամեն օր մասնակցում ենք փրկության աշխատանքին փոքր և հասարակ ուղիներով՝ հոգ տանելով, ամրացնելով և ուսուցանելով միմյանց»:¹⁰ Երբ մենք

վստահենք Հոգուն և առաջ մղվենք անկեղծ ու խոնարհ ջանքերով մեր շուրջը գտնվողներին օգնելու համար, որ ավելի մոտենան Քրիստոսին, մենք ուղղություն կստանանք, թե ինչ կարող ենք անել, և մեզ ուժ կտրվի դա անելու համար, և մենք կզգանք Տիրոջ զավակներին Նրա մոտ բերելու ուրախությունը:

Դառնալ հոգևոր ազդեցություն

Մեր պարտականությունն իմանալով մենք պետք է հարցնենք հին օրերի աշակերտների նման. «Ի՞նչ անենք» (Գործք Բ.37) հոգևոր ազդեցություն լինելու համար: Վերջին գերագույն համաժողովի ժամանակ Քույր Բրոքթընը հրավիրեց քույրերին պատկերացնել «փրկության աշխատանքի հետ կապված «պահանջվում է օգնություն» վերնագրով հոգևոր ցուցանակներ.

- Պահանջվում է օգնություն ծնողներից՝ դաստիարակելու իրենց երեխաներին լույսի և ճշմարտության մեջ
- Պահանջվում է օգնություն՝ դուստրերից . . . , քույրերից, . . . հորաքույրերից . . . , զարմիկներից, տատիկներից ու պապիկներից և ճշմարիտ ընկերներից՝ ծառայելու որպես խորհրդատուներ և օգնող ձեռք առաջարկելու ուխտի արահետով ընթանալիս
- Պահանջվում է օգնություն՝ նրանցից, ովքեր լսում են Սուրբ Հոգու հուշումները և գործում ստացած հուշումներին համաձայն
- Պահանջվում է օգնություն՝ նրանցից, ովքեր ապրում են ավետարանով ամեն օր փոքր և հասարակ ուղիներով
- Պահանջվում է օգնություն՝ ընտանեկան պատմության և տաճարային աշխատողներից՝ ընտանիքները հավերժորեն կապելու համար
- Պահանջվում է օգնություն՝ միսիոներներից և անդամներից՝ տարածելու «Բարի լուրը» Հիսուս Քրիստոսի ավետարանը
- Պահանջվում է օգնություն՝ փրկողներից՝ գտնելու նրանց, ովքեր կորցրել են իրենց ճանապարհը
- Պահանջվում է օգնություն՝ ուխտը պահողներից՝ ամուր կանգնելու ճշմարտության համար
- Պահանջվում է օգնություն՝ Տեր Հիսուս Քրիստոսի ճշմարիտ աշակերտներից:¹¹

Սրանք նոր բաներ չեն, սակայն, երբ մենք հնարավորություններ փնտրենք փրկության աշխատանքին մասնակցելու համար, մենք կբարելավենք մեր շուրջը գտնվողներին օգնելու մեր ունակությունը: Երեց Բալլարդն ասել է. «Այս աշխարհում չկա ոչ մի բան այնքան անձնական, այնքան դաստիարակչական կամ այնքան կյանքը փոխող, որքան արդարակյաց կնոջ ազդեցությունն է»:¹² Երբ մենք զարգացնում ենք մեր հոգևոր զորությունը անձնական աղոթքի և սուրբ գրությունների ուսումնասիրության, հաստատակամ հնազանդության

միջոցով և հավատարմորեն պահում ենք մեր ուխտերը, մենք թողնում ենք այդ ազդեցությունը:

Մեր տեսադաշտից այն կողմ

Նախագահ Բրիգամ Յանգն (1801–1877) ասել է. «Կարո՞ղ եք ասել, թե որքան բարիք կարող են անել մայրերն ու դուստրերն Իսրայելում: Ոչ, դա անհնարին է: Եվ բարին, որ նրանք կանեն, կհետևի իրենց ողջ հավերժության մեջ»:¹³

Իմ տատիկի արդար որոշումները ազդել են նրա ընտանիքի սերունդների վրա ավելի, քան նա կարող էր տեսնել որպես երիտասարդ կին: Այնուամենայնիվ, իմ ընտանիքի կանանց հոգևոր ազդեցությունը գնում է դեպի ավելի հեռավոր անցյալը: Չերին իր սեփական հոգևոր ուժի մեծ մասը ձեռք էր բերել իր նախատատիկին՝ (իմ երրորդ նախատատիկին) Էլիզաբեթին հետևելուց: Էլիզաբեթի հավատքի և վկայության օրինակը հասնում է անցած երկու սերունդների ոչ ակտիվության միջով, որպեսզի օգնի իր ծոռնուհուն՝ Չերիին, բացելու քայքայված ընտանիքների կծիկը և վերադառնալու Եկեղեցի:

Երբ մենք հոգևոր ուժ ենք դառնում մեզ շրջապատողների համար, մեր ազդեցությունը անցնում է մեզ համար տեսանելի սահմաններից: Նախագահ Գորդոն Բ. Հինքլին ասել է. «Մենք կոչ ենք անում Եկեղեցու կանանց միասին պայքարել արդարակեցության համար: Նրանք պետք է սկսեն իրենց տներից: Նրանք կարող են այն ուսուցանել իրենց դասարաններում: Նրանք կարող են այդ մասին բարձրաձայնել իրենց համայնքներում: . . .

Ես տեսնում եմ սա որպես աշխարհում մի պայծառ փայլող հույս, որը սրընթաց գնում է ինքնակործանման դեմ»:¹⁴

Երբ մենք կատարենք այս պատվիրանը, Տիրոջ աշխատանքն առաջ կընթանա և մեր շուրջը գտնվող աշխարհում, և, ամենակարևորը, մեր ընտանիքներում և նրանց կյանքում, ում մենք սիրում ենք: ■

Հեղինակն ապրում է Յոտուսում, ՄՄՆ:

ՀՂՈՒՄՆԵՐ

1. *Եկեղեցու Նախագահների Ուսումնականը. Չոզեֆ Սմիթ* (2007), 453:
2. James E. Talmage, *Jesus the Christ*, 3rd ed. (1916), 475.
3. *Իմ արքայության դաստիարակը. Սկիզբից Միության պատմությունը և աշխատանքը* (2011), 3–4:
4. Լինդա Կ. Բրոքթըն, «Պահանջվում են ձեռքեր և սրտեր աշխատանքն արագացնելու համար», *Հիստորիա*, մայիս 2014, 122–123:
5. M. Russell Ballard, “Women of Righteousness,” *Liahona*, Dec. 2002, 70.
6. «Միտնի քույրերը», *Օրինվողներ*, համար 309:
7. Ռիչարդ Գ. Սքոթ, «Ես ձեզ օրինակ տուի», *Հիստորիա*, մայիս 2014, 32:
8. Ռիչարդ Գ. Սքոթ, «Ես ձեզ օրինակ տուի», 33:
9. Ռիչարդ Գ. Սքոթ, «Ես ձեզ օրինակ տուի», 33:
10. Քերոլ Մ. Սթեֆենս, «Մենք ուրախանալու մեծ պատճառ ունենք», *Հիստորիա*, նոյ. 2013, 117:
11. Լինդա Կ. Բրոքթըն, «Պահանջվում են ձեռքեր և սրտեր աշխատանքն արագացնելու համար», 124:
12. Մ. Ռասսել Բալլարդ, «Մայրեր և դուստրեր», *Հիստորիա*, մայիս 2010, 18:
13. *Discourses of Brigham Young*, sel. John A. Widtsoe (1954), 216.
14. Գորդոն Բ. Հինքլի, «Կանգնեք ամուր ու անասան», *Նկարագրների համաշխարհային ուսուցում*, հունվ. 10, 2004, 20:

ԹՈՒՅԼ ԼԻՆԵԼԸ

ՄԵՂՔ Է

Վենդի Ուլրիխ

«**Մ**րդյո՞ք ես իսկապես արժանի եմ մտնելու Մատոժ տունը: Ինչ-պե՞ս կարող եմ արժանի լինել, եթե ես կատարյալ չեմ»:

«Կարո՞ղ է Աստված իմ թուլությունն իսկապես ուժեղ կողմ դարձնել: Ես ծով եմ պահել և աղոթել եմ օրեր շարունակ, որպեսզի այս խնդիրը հեռացվի ինձանից, սակայն թվում է, թե ոչինչ չի փոխվում»:

«Միսիայի ժամանակ ես ապրում էի ավետարանով ավելի հետևողականորեն, քան իմ կյանքի որևէ այլ ժամանակահատվածում, սակայն ես երբևէ ավելի շատ չէի զգացել իմ թերությունները, քան այդ ժամանակ: Ինչո՞ւ, երբ ես այդքան լավ էի անում ամեն բան, ես ինձ երբեմն շատ վատ էի զգում»:

Երբ մենք խորհում ենք նման հարցերի շուրջ, շատ կարևոր է հասկանալը, որ մինչդեռ *մեղքն* անխուսափելիորեն հեռացնում է մեզ Աստծուց, *թուլությունը*, որքան էլ անհեթեթ թվա, կարող է տանել մեզ Նրա մոտ:

Տարբերել մեղքը թուլությունից

Մենք սովորաբար մեղքի և թուլության մասին այն կարծիքն ունենք, որ դրանք պարզապես տարբեր չափերի սև կետեր են մեր հոգու կտորի վրա, օրինազանցության տարբեր աստիճաններ: Սակայն սուրբ գրությունները տեղեկացնում են, որ մեղքը և թուլությունն ըստ էության տարբեր են, պահանջում են տարբեր հատուցումներ և ունեն տարբեր արդյունքներ առաջ բերելու ներքո:

Մեզանից շատերն ավելի շատ ծանոթ են մեղքին, որքան էլ տխուր

լինի դա խոստովանելը, սակայն եկեք վերանայենք այն. Մեղքը Աստծո պատվրաններին չհնազանդվելու կամ մեր մեջ Քրիստոսի Լույսի դեմ ապստամբելու ընտրություն է: Մեղքը ընտրություն է վստահելու Աստծո փոխարեն Սատանային, որը թշնամություն է մտցնում մեր և մեր Հոր միջև: Ի տարբերություն մեզ, Հիսուս Քրիստոսը

*Սահմանափակումները և
անհատապատասխանությունները
մեղքեր չեն և չեն զրկում
մեզ մաքուր և Հոգուն արժանի
լինելուց:*





Մինչդեռ մեղքն
անխուսափելիորեն
հեռացնում է մեզ
Աստծուց, թուլությունը,
որքան էլ անհեթեթ թվա,
կարող է տանել մեզ
Նրա մոտ:



կատարելապես զերծ էր մեղքից և կարող էր քավել մեր մեղքերը: Երբ մենք անկեղծորեն ապաշխարում ենք, ընդգրկելով մեր միտքը, սիրտը և վարքը փոխելը, պատշաճորեն ներողություն խնդրելը կամ խոստովանելը, հնարավորության դեպքում փոխհատուցելը և այդ մեղքն ապագայում չկրկնելը, Հիսուս Քրիստոսի Քավությունը հասանելի է դառնում մեզ և մենք կարողանում ենք ներվել Աստծո կողմից և կրկին լինել մաքուր:

Մաքուր դառնալը խիստ կարևոր է, քանի որ ոչ մի անմաքուր բան չի կարող լինել Աստծո ներկայությունում: Սակայն, եթե մեր միակ նպատակը լինեիր այնքան անմեղ դառնալը, որքան մենք եղել էինք Աստծո ներկայությունից հեռանալիս, մենք բոլորս էլ, ավելի լավ կլինեիր, որ մեր կյանքի մնացած մասը հարմարավետ պառկած մնայինք մեր օրորոցներում: Դրա փոխարեն մենք եկել ենք աշխարհ, որպեսզի մեր փորձառությունների շնորհիվ սովորենք տարբերել բարին չարից, ձեռք բերենք ավելի մեծ իմաստություն և հմտություններ, ապրենք այն արժեքներով, որոնք կարևոր են մեզ համար և զարգացնենք աստվածային բնավորություն՝ առաջընթաց, որը մենք չենք կարող ունենալ մեր հարմարավետ



ՔԱՎՈՒԹՅԱՆ ՆՈՍՏՈՒՄԸ

«Վերականգ-
նելը այն, ինչը
դուք չեք կարող
վերականգնել,

բուժելը վերջը, որը դուք չեք
կարող բուժել, նորոգելը այն,
ինչը դուք կոտրել եք և չեք կարող
նորոգել, Քրիստոսի քավության
հիմնական նպատակն է: . . .

Ես կրկնում եմ, որ բացի այն
մի քանիսից, այն շատ քչերից,
ովքեր կորստի են մատնվում ամ-
բողջությունն իմանալուց հետո,
չկա սովորույթ, չկա կախվածու-
թյուն, չկա ըմբոստություն,
չկա օրինազանցություն,
չկա ուխտադրություն, ոչ
էլ հանցանք, որը զերծ
լինի լիովին ներվելու խոս-
տումից: Դա Քրիստոսի
քավության խոստումն է»:

**Նախագահ Բոյդ Զ. Փաքեր, Տաս-
ներկու Առաքյալների Զվորումի
Նախագահ, "The Standard
of Truth Has Been
Erected," Liahona,
Nov. 1995, 20:**

ու ապահով օրորոցներում:

Մարդկային թուլությունը կարևոր
դեր է խաղում մահկանացության
այս առանցքային նպատակներում:
Երբ Մորոնիին անհանգստանում
էր, որ գրելու իր թուլությունը պատ-
ճառ կարող էր հանդիսանալ, որ
Հեթանոսները ծաղրեին սուրբ
բաները, Տերը դիմեց նրան հետևյալ
խոսքերով.

«Եվ եթե մարդիկ գան ինձ մոտ,
ես նրանց ցույց կտամ իրենց թու-
լությունը: Ես մարդկանց թուլություն
եմ տալիս, որպեսզի նրանք խո-
նարի լինեն. և իմ շնորհը բավական
է բոլոր մարդկանց համար, ովքեր
իրենց խոնարհեցնում են իմ առջև.
քանզի, եթե նրանք խոնարհեցնեն
իրենց իմ առջև, և հավատք ունե-
նան ինձանում, այն ժամանակ,
նրանց թույլ կողմերը ես
կդարձնեմ ուժեղ» (Եթեր
12.27, տես նաև Ա Կորնթա-
ցիա ԺԵ.42-44, Բ Կորնթա-
ցիա ԺԲ.7-10, 2 Նեմիի 3.21
և Հակոբ 4.7):

Այս ծանոթ սուրբ գրու-
թյան հետևանքները
շատ մեծ են և

հրավիրում են մեզ զանազանել
մեղքը (որը խրախուսվում է Մատա-
նայի կողմից) թուլությունից (որն
այստեղ նկարագրվում է որպես մի
վիճակ, որը մեզ «տալիս» է Աստված):

Մենք կարող ենք սահմանել թու-
լությունը որպես մեր իմաստության,
զորության և սրբության սահմանա-
փակում, որը մարդկային էության
արդյունքն է: Որպես մահկանացու-
ներ մենք ծնվել ենք անօգնական
և կախվածության մեջ՝ տարբեր
ֆիզիկական թերություններով և
հակումներով: Մեզ մեծացնում և
շրջապատում են այլ թույլ մահկա-
նացուներ, և նրանց ուսմունքները,
օրինակները և վերաբերմունքը մեր
հանդեպ թերի են և երբեմն վնա-
սակար: Մեր թույլ, մահկանացու
վիճակում մենք տառապում ենք
ֆիզիկական և էմոցիոնալ հիվան-
դության, սովի և հոգնածության
պատճառով: Մենք ունենում ենք
մարդկային զգացմունքներ, ինչ-
պիսին են բարկությունը, վիշտը
և վախը: Մենք զգում ենք իմաս-
տության, հմտությունների, տոկու-
նության և ուժի պակաս: Եվ մենք
ենթարկվում ենք տարբեր տեսակի
գայթակղությունների:

Չնայած, որ Հիսուս Քրիստոսն
անմեղ էր, Նա լիովին միացավ մեզ՝
ենթարկվելով մահկանացու թուլու-
թյանը (տես Բ Կորնթացիա ԺԳ.4):
Նա ծնվեց որպես անօգնական մի



ՏԱՐԲԵՐԵԼ ՄԵՂԶԸ ԹՈՒՆՈՒԹՅՈՒՆԻՑ

	Մեղք	Թուլություն
Սահմանում:	Հոժարակամորեն Աստծուն չհնազանդվելը	Մարդկային սահմանափակումներ, թուլություններ
Աղբյուր:	Խրախուսվել Սատանայի կողմից	Մեր մահկանացու էության մի մասը
Օրինակներ	Գիտակցաբար չպահել Աստծո պատվիրանները, հավատալ Սատանային ավելի, քան Աստծուն	Գայթակղությանը, զգացմունքին, հոգևածությանը, ֆիզիկական կամ բարոյական հիվանդությանը, անգիտությանը, հակումներին, վնասվածքների, մահին հեշտությամբ ենթարկվելը
Հիսուսն ունե՞ր	Ոչ	Այո
Մեր արձգանքը պիտի՞ լինի	Ապաշխարություն	Խոնարհությունը, հավատքի առ Քրիստոսը և հաղթահարելու ջանքերը
Իր հերթին Աստծո պատասխանը	Ներում	Շնորհը՝ հնարավորություն տվող զորությունը
Ինչի՞ արդյունքում է	Մեղքից մաքրված լինելը	Ձեռք բերել սրբություն, ուժ

մանուկ մահկանացու մարմնում և Նրա համար հոգ էին տանում անկատարները: Նա պետք է սովորեր քայլել, խոսել, աշխատել և շփվել ուրիշների հետ: Նա քաղց և ծարավ էր զգում, ունենում էր մարդկային զգացմունքներ և կարող էր հիվանդանալ, տառապել, արյունահոսել և մահանալ: Նա «ամեն բանով փորձուած [էր] մեր նմանութեամբ, բայց առանց մեղքի», ենթարկելով իրեն մահկանացությանը, որպեսզի Նա կարողանար «մեր տկարություններին հետ կարեկից լինիլ» և սատարել մեզ ըստ *մեր* թուլությունների և թերությունների (Եբրայեցիս Դ.15, տես նաև Ավմա 7.11–12):

Մենք չենք կարող պարզապես ապաշխարել թույլ լինելու համար, և թուլությունն էլ ինքնին մեզ անմաքուր չի դարձնում: Մենք չենք կարող հոգևորապես աճել, մինչև մենք չենք *մեղքում* մեղքը, սակայն մենք նաև չենք աճում հոգևորապես, մինչև մենք չենք *ընդունում* մարդկային թուլության մեր վիճակը, արձագանքում դրան խոնարհաբար և հավատքով և մեր թուլության միջոցով սովորում վստահել Աստծուն: Երբ Մորոնին անհանգստանում էր գրելու իր թուլության համար, Աստված չասաց նրան, որ նա ապաշխարե: Այլ Տերը սովորեցրեց նրան լինել խոնարհ և հավատք ունենալ առ Քրիստոսը: Երբ մենք հեզ ենք և հավատարիմ, Աստված շնորհ է առաջարկում, ոչ թե ներում, որպես թուլության հատուցում: Աստվածաշնչի բառարանը շնորհը սահմանում է որպես Աստծուց եկող հնարավորություններ տվող զորություն՝ անելու այն, ինչը մենք չենք կարող անել ինքնուրույն (տես Աստվածաշնչի բառարան, «Շնորհ»), համապատասխան աստվածային հատուցում, որի միջոցով Նա կարող է «թույլ կողմերը դարձնել ուժեղ»:

Կիրառել հեզություն և հավատք

Մեր Եկեղեցու վաղ շրջանից մեզ ուսուցանվել են ապաշխարության կարևոր տարրերը, սակայն ինչպե՞ս

ենք մենք զարգացնում հեզություն և հավատք: Խորհեք հետևյալ բաների շուրջ.

- **Խորհեք և աղոթեք:** Քանի որ մենք թույլ ենք, մենք միգուցե չնկատենք, որ *մեղք* ենք գործում (ցանկանալով մտքի, սրտի և վարքի անհապաղ և ամբողջական փոփոխություն) կամ *թուլություն* ենք ցուցաբերում (խրախուսելով խոնարհ, հետևողական ջանքեր, սովորելու և կատարելագործվելու ցանկություն): Այս ամենի հանդեպ մեր վերաբերմունքը կարող է հիմնված լինել մեր դաստիարակության և հասունության վրա: Մեկ վարքագծի մեջ կարող են նույնիսկ լինել թե մեղքի և թե թուլության տարրեր: Ասելը, որ մեղքն իրականում թուլություն է, առաջ է բերում պատճառաբանություններ՝ ապաշխարելու փոխարեն: Ասելը, որ թուլությունը մեղք է, կարող է արդյունքում առաջ բերել ամոթ, մեղադրանք, հուսահատություն և Աստծո խոստումների հանդեպ թերահավատություն: Խորհե՛ք և աղոթե՛ք օգնում են մեզ զանազանել դրանք իրարից:
- **Առաջնահերթություններ սահմանեք:** Քանի որ մենք թույլ ենք, մենք չենք կարող միանգամից կատարել բոլոր անհրաժեշտ փոփոխությունները: Երբ մենք խոնարհաբար և հավատարմորեն մեկ առ մեկ հաղթահարում ենք մեր մարդկային թույլ կողմերը, մենք կարող ենք աստիճանաբար նվազեցնել անգիտությունը, լավ օրինակները դարձնել սովորություններ, լավացնել մեր ֆիզիկական և էմոցիոնալ առողջությունը և բարձրացնել տոկոսությունը, և ամրացնել մեր վստահությունն առ Տերը: Աստված կարող է մեզ օգնել իմանալ, թե որտեղից սկսել:
- **Ծրագրեք:** Քանի որ մենք թույլ ենք, ավելի ուժեղ դառնալը կպահանջի ավելի, քան արդար

ցանկությունը, և մեծ ինքնատիրապետում: Մենք նաև պետք է ծրագրենք, սովորենք մեր սխալներից, զարգացնենք ավելի արդյունավետ ռազմավարություն, վերանայենք մեր ծրագրերը և կրկին փորձենք: Մենք ունենք սուրբ գրությունների, պատշաճ գրքերի և այլ մարդկանց օգնության կարիքը: Մենք սկսում ենք փոքր քայլերով, ուրախանում ենք առաջընթացի համար և ռիսկի ենք դիմում (չնայած, որ նրանք մեզ ստիպում են խոցելի և թույլ զգալ): Մեզ աջակցություն է անհրաժեշտ, օգնելու մեզ կատարել լավ ընտրություններ, նույնիսկ, երբ մենք հոգնած ենք կամ հուսալքված, և ծրագրեր կազմել ճիշտ ուղու վրա վերադառնալու համար, երբ սայթաքում ենք:

- **Գործադրենք համբերություն:** Քանի որ մենք թույլ ենք, փոփոխությունը կարող է ժամանակ պահանջել: Մենք պարզապես չենք հրաժարվում մեր թուլությունից այնպես, ինչպես մենք հրաժարվում ենք մեղքից: Խոնարհ աշակերտները հոժարությամբ անում են այն, ինչ պահանջվում է, սովորում են տոկալ, շարունակում են փորձել և չեն հիասթափվում: Խոնարհությունը օգնում է մեզ համբերատար լինել ինքներս մեզ հետ և ուրիշների հետ, ովքեր նույնպես թույլ են: Համբերությունը առ Տերն ունեցած մեր հավատքի դրսևորումն է, երախտագիտությունը մեր հանդեպ Նրա վստահության համար և վստահություն նրա խոստումների հանդեպ:

Նույնիսկ երբ մենք անկեղծորեն ապաշխարում ենք մեր մեղքերի համար, ձեռք ենք բերում ներում և կրկին դառնում ենք մաքուր, մենք մնում ենք թույլ: Մենք շարունակում ենք ենթակա լինել հիվանդությանը, զգացմունքներին, անգիտությանը, հակվածություններին, հոգնածությանը և գայթակղությանը: *Մակայն, սահմանափակումները և անհամապատասխանությունները մեղքեր չեն և մեզ հեռու չեն պահում մաքուր և Հոգուն արժանի լինելուց:*

Թուլությունից մինչև ուժ

Մինչդեռ Մատանան մեծ ցանկություն ունի օգտագործելու մեր թուլությունը և գայթակղելու մեզ մեղք գործել, Աստված կարող է օգտագործել մարդկային թուլությունը մեզ ուսուցանելու, ամրացնելու և օրհնելու



**ԶԱՆԱԶԱՆԵԼ ԱՊԱԶԻՆՈՂ ՄԵՂԹԻ ԶԳԱՑՈՒՄԸ (ԱՍՏԿԱԾԱՅԻՆ ԹԱԽԻԾԸ) ԵՎ
ԽՈՆԱՐՀՈՒԹՅՈՒՆԸ ԱՄՈԹԻ ԱՆՕԳՈՒՏ ՀԱԿԱՍԱԿԱՆ ԶԳԱՑՈՒՄՆԵՐԻՑ**

Ապաքինող մեղքի զգացում՝ աստվածային թախիծ մեղքի համար	Հավատք և խոնարհություն՝ Զրիստո- սանման հեղություն թուլության մեջ	Կործանող ամոթ՝ անօգուտ հակասություն
Մենք հակված ենք • Խղճի խայթ զգալ մեր բարոյական չափանիշները խախտելու համար • Ապաշխարել, փոխել մեր միտքը, սիրտը, վարքը: • Բացել մեր սիրտը, խոստովանել մեր սխալները, փոխհատուցել: • Աճել և սովորել: • Տեսնել մեզ որպես բնությունից լավ, արժանիքների տեր: • Ցանկանալ համապատասխանեցնել մեր վարքը մեր դրական ինքնագնահատականին: • Լիովին վստահել Զրիստոսի Զավու-թյան փրկագնող զորությանը:	Մենք հակված ենք. • Վստահել մեր ուժերին և ընդունել մեզ այնպիսին, ինչպիսին կանք՝ բոլոր թերություններով հանդերձ: • Ռիսկի դիմել աճելու և ներդրում ունե-նալու համար: • Պատասխանատվություն վերցնել սխալների համար, ցանկանալ կատարելագործվել: • Սովորել սխալներից և կրկին փորձել: • Զարգացնել հումորի զգացում և վայելել կյանքը և ուրիշների հետ հարաբերությունները: • Տեսնել մեր թուլությունը որպես ուրիշների հետ մի հարթության վրա գտնվելու առիթ: • Համբերատար լինել ուրիշների թուլու-թյունների և թերությունների հանդեպ: • Մեծացնել վստահությունը Աստծո սիրո և օգնության հանդեպ:	Մենք հակված ենք. • Զգալ անարժան, ընկճված լինել: • Փորձել ուրիշներից թաքցնել մեր թուլությունները: • Վախենալ հանրության դատին ելքարկվելուց: • Խնդիրների մեջ մեղադրել ուրիշներին: • Խուսափել դիսկի դիմելուց, ձախողումը տեսնելով որպես նվաստացում: • Մրցակցել և համեմատվել ուրիշների հետ: • Պաշտպանողական դիրք ընդունել և համար լինել կամ ինքնամփոփ դառնալ: • Լինել ծաղրող կամ չափից դուրս լուրջ: • Մտահոգվել մեր թերությունների կամ առավելությունների համար: • Վախենալ Աստծուց մերժվելուց և Նրա զայրույթից:

համար: Հակառակ այն բանին, թե ինչ մենք կարող ենք ակնկալել կամ հուսալ, Աստված միշտ չէ «թույլ կողմերը դարձնում ուժեղ» մեզ համար՝ սահմանափակելով մեր թուլությունը: Երբ Պողոս Առաքյալը շարունակ աղոթում էր, որ Աստված հեռացներ «մարմնի համար խայթը», որը Սատանան օգտագործում էր նրան բռնացքով ծեծելու համար, Աստված ասաց Պողոսին. «Բաւական է քեզ իմ շնորհքը, որովհետեւ իմ գործիքները տկարութեան մեջ է կատարվում» (Բ Կորնթացիս ԺԲ.7, 9):

Կան բազմաթիվ ուղիներ, որոնցով Տերը «թույլ կողմերը դարձնում է ուժեղ»: Թեև Նա կարող է վերացնել թուլությունը անակնկալ բուժումով, որի հույսը մենք ունենք, սակայն իմ փորձառությունից ելնելով կարող եմ ասել, որ հազվադեպ է այդպես լինում: Օրինակ, ես չեմ տեսնում ոչ մի փաստ, որ Աստված վերացրեց գրեյուլ հետ կապված Մորոնիի թուլությունը Եթեր 12-ի հայտնի հատվածից հետո: Աստված նաև կարող է թույլ կողմերը ուժեղ դարձնել, օգնելով մեզ աշխատել մեր թուլությունների վրա, ձեռք բերել դրանց հետ կապված պատշաճ հումորի զգացում կամ հեռանկար, և աստիճանաբար հաղթահարել դրանք ժամանակի ընթացքում: Նաև ուժեղ կողմերը և թուլությունները հաճախ կապված են իրար հետ (ինչպես հաստատակամությամբ ուժը և համառության թուլությունը), և մենք կարող ենք սովորել զնահատել ուժեղ կողմը և զսպել թուլությունը, որը գուցեորդում է դրան:

Կա մեկ այլ, նույնիսկ ավելի զորեղ միջոց, որի օգնությամբ Աստված մեր թույլ կողմերը դարձնում է ուժեղ: Եթեր 12.37-ում Տերը Մորոնիին ասում է. «Եվ քանի որ դու տեսար քո թուլությունը, դու ուժեղ կդարձվես, մինչև իսկ նստելու այն տեղում, որը ես պատրաստել եմ իմ Հոր ապարանքներում»:

Այստեղ Աստված չի առաջարկում փոխելու Մորոնիի թույլությունը, այլ փոխելու Մորոնիին: Մարդկային թույլության մարտահրավերն ընդունելով Մորոնին և մենք կարող ենք սովորել զթություն, կարեկցանք, հեզություն, համբերություն, քաջություն, երկայնամտություն, իմաստություն, տոկունություն, ներողամտություն, ճկունություն, երախտագիտություն, ստեղծարարություն և բազմաթիվ այլ արժեքներ, որոնք մեզ օգնում են ավելի ու ավելի նմանվել մեր Երկնային Հորը: Սրանք այն արժեքներն են, որ մենք եկել ենք երկիր զարգացնելու համար, Քրիստոսաման հատկանիշները, որոնք պատրաստում են մեզ վերնում գտնվող ապարանքի համար:

Ոչ մի այլ տեղ Աստծո սերը, իմաստությունը և փրկագնող գործությունն ավելի ակնհայտ չեն, քան Նրա ունակության մեջ՝ դարձնելու մարդկային թուլության հետ կապված մեր պայքարը անգնահատելի աստվածային արժեքներ և ուժեղ կողմեր, որոնք մեզ դարձնում են Նրան ավելի նման: ■

Հեղինակին սպորում է Յուուսպում, ԱՄՆ:





Երեց
Վ. Քրիսթոֆեր
Վադել
Յոթնասունևից

ՍՈՒՐԲ

Կրոնասիրություն

Անեսասեր ծառայությունը՝ ինքներս մեզ մոռանալը, ուրիշի կարիքներին արձագանքելը և մեր կյանքը նրանց ծառայությանը նվիրելը, միշտ եղել է Հիսուս Քրիստոսի աշակերտներին բնորոշ գիծը:

Սատթեոսի 11-րդ գլխում Փրկիչը մեզ ուսուցանում է կարևոր մի դաս Հովհաննես Մկրտչի աշակերտների բարձրացրած հարցին ի պատասխան Իր *չուլած* պատասխանով:

«Եւ Յովհաննէսը բանտումը Քրիստոսի գործերը լսելով, իր աշակերտներից երկուսին ուղարկեց:

Եւ նորան ասեց, Դո՞ւ ես այն որ գալու էիր, թէ ուրիշի սպասենք:

Եւ Յիսուսը պատասխան տուաւ եւ նորանց ասեց. Գնացե՛ք Հովհաննէսին պատմեցե՛ք ինչ որ լսում էք եւ տեսնում էք:

Կոյրերը տեսնում են, եւ կաղերը գնում են, բորոտները սրբվում են, եւ խուլերը լսում են, մեռելները յարութիւն են առնում, եւ աղքատներին աւետարան է քարոզվում» (Մատթեոս ԺԱ.2-5):

Հակիրճ վարդապետական բացատրություն տալու փոխարեն, նկարագրելով որ Նա էր, իսկապէս, «այն որ գալու էր», Փրկիչը պատասխանեց Իր գործերով՝ Իր ծառայության օրինակով:

2014թ. ապրիլի գերագույն համաժողովին Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ռիչարդ Գ. Մքոթը հիշեցրել է մեզ. «Մենք արդյունավետ կերպով ծառայում ենք մեր Երկնային Հորը՝ արդարությամբ ներգործելով ուրիշների վրա ու ծառայելով նրանց: Ամենամեծ օրինակը, ով երբևէ քայլել է երկրի վրա, մեր Փրկիչն է՝ Հիսուս Քրիստոսը»:¹

Անեսասեր ծառայությունը՝ ինքներս մեզ մոռանալը, ուրիշի կարիքներին արձագանքելը և մեր կյանքը նրանց ծառայությանը նվիրելը, միշտ եղել է Հիսուս Քրիստոսի աշակերտներին բնորոշ գիծը: Ինչպէս Բենիամին թագավորն ուսուցանեց Փրկչի ծննդից ավելի քան 100 տարի առաջ՝ «Երբ դուք ձեր մերձավորների ծառայության մեջ եք, դուք սոսկ ձեր Աստծո ծառայության մեջ եք» (Մոսիա 2.17):

Հակոբոսը հիշեցնում է մեզ, որ «սուրբ կրօնասիրությունը» արտացոլվում է ուրիշներին մատուցած մեր ծառայության մեջ, երբ մենք «որբերին եւ այրիներին այցելում ենք նորանց նեղութեան մեջ» (Հակոբոս Ա.27): «Սուրբ կրոնասիրությունը» ավելին է, քան հավատքի մասին հայտարարելը, դա հավատք ցուցաբերելն է:

Սիրեք ձեր ճամփորդության ընկերակցին

1984թ. հուլիսի կեսերին, Լոս Անջելես Կալիֆորնիա Տաճարում իմ կնոջ՝ Քերոլի հետ մեր ամուսնությունից ընդամենը շաբաթներ անց, մենք ճանապարհվում էինք դեպի Յուտա, որտեղ ես սկսելու էի իմ կարիերան և Քերոլը ավարտելու էր իր քոլեջի կրթությունը: Մենք վարում էինք առանձին մեքենաներ: Երկու մեքենաներով մենք տեղափոխում էինք այն ամենը, ինչ ունեինք:

ճանապարհի կեսին Քերոլը հավասարվեց իմ մեքենային և սկսեց շարժումներով ինչ-որ բան հասկացնել ինձ: Սա բջջային հեռախոսների, սմարթֆոնների,

հաղորդագրությունների և թվիթերների ժամանակներից առաջ էր: Նրա մեքենայի պատուհանի միջով նրա դեմքի արտահայտությունը տեսնելով, ես կարող էի ասել, որ նա իրեն լավ չէր զգում: Նա հասկացրեց ինձ, որ կարող էր շարունակել վարելը, սակայն ես անհանգստանում էի իմ նոր հարսնացուի համար:

Երբ մենք մոտեցանք Յուտայի Բիվեր փոքրիկ քաղաքին, նա կրկին հավասարվեց իմ մեքենային և ես կարող էի ասել, որ նա կանգ առնելու կարիք ուներ: Նա իրեն վատ էր զգում և չէր կարող շարունակել: Մենք ունեինք հագուստով և հարսանեկան նվերներով լի երկու մեքենա, սակայն, ցավոք սրտի, մենք քիչ փող ունեինք: Հյուրանոցային սենյակը մեր բյուջեից վեր էր: Զգիտեի ինչ անել:

Մեզանից ոչ մեկը նախկինում չէր եղել Բիվերում, և չիմանալով, թե ինչ էինք փնտրում, մենք մի քանի բուլեվարում էինք մեքենան, մինչև ես մի գեոսայգի տեսա: Մենք կանգ առանք ավտոկայանատեղում և գտանք ստվեր զգող մի ծառ, որտեղ ես մի վերմակ փռեցի, որպեսզի Քերոլը կարողանար հանգստանալ:

Մի քանի բուլեվար անց մեկ այլ մեքենա մոտեցավ ավտոկայանման տեղին և կանգնեց մեր երկու մեքենաների կողքին: Մի կին, մոտավորապես մեր մայրերի տարիքին, իջավ իր մեքենայից և հարցրեց, թե արդյոք ինչ-որ բան է պատահել և թե կարող էր նա օգնել: Նա նշեց, որ նկատել էր մեզ, մինչ անցնում էր մեր կողքով և զգացել էր, որ պետք է կանգ առնել: Երբ մենք բացատրեցինք մեր իրավիճակը, նա անմիջապես հրավիրեց մեզ հետևել իրեն մինչև իր տուն, որտեղ մենք կարող էինք հանգստանալ որքան պետք էր:

Մենք շուտով գտանք մեզ նրա տան հով նկուղում գտնվող ննջասենյակի հարմարավետ անկողնում: Հենց որ տեղավորվեցինք, այս հրաշալի քույրը նշեց, որ նա բազմաթիվ գործեր ուներ անելու և որ մեզ մի քանի ժամով մենակ էր թողնելու: Նա ասաց մեզ, որ եթե քաղցած էինք, մենք կարող էինք օգտվել խոհանոցում եղած ամեն բանից, և որ եթե մենք գնայինք մինչև նրա տուն վերադառնալը, խնդրում էր փակել մուտքի դուռը:

Որոշ ժամանակ քնելուց հետո Քերոլը ավելի լավ զգաց իրեն և մենք շարունակեցինք մեր ճամփորդությունը առանց ճաշելու: Երբ մենք հեռացանք, բարի կյանք դեռևս տուն չէր վերադարձել: Ցավոք սրտի, մենք չէինք գրառել հասցեն և երբեք պատշաճորեն երախտագիտություն չհայտնեցինք մեր իսկ բարի սամարացուն, ով կանգնեց ճանապարհին և բացեց իր տան դռները կարիքի մեջ գտնվող օտարականների առջև:

Երբ ես անդրադառնում եմ այս փորձառությանը, հիշում եմ Նախագահ Թոմաս Մ. Մոնսոնի խոսքերը, ով մարմնավորում է Փրկչի հորդորը՝ «գնա, դու էլ այնպես արա» (տես Ղուկաս Ժ.37) առավել, քան որևէ մահկանացու: «Մենք չենք կարող իսկապես սիրել Աստծուն, եթե մենք չենք սիրում այս մահկանացու կյանքի ճանապարհորդության մեր ընկերակից ճամփորդներին»:²

Որտեղ էլ մենք հանդիպենք «ճամփորդության ընկերակցի»՝ ճանապարհին կամ մեր տներում, խաղաղաշատում կամ մեր դպրոցներում, աշխատավայրում կամ եկեղեցում, եթե մենք փնտրենք, տեսնենք և գործենք, մենք ավելի շատ կնմանվենք Փրկչին՝ օրհնելով և ծառայելով ճանապարհին:

Փնտրել

Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Նիլ Ա. Մաքսվելն (1926–2004) ուսուցանել է.

«Մենք հաստատ չենք կարող մեր թանկագին Փրկչի նման քավել մարդկության մեղքերը: Ավելին, մենք հաստատ չենք կարող տանել մահկանացու հիվանդությունները, թուլությունները և վշտերը (տես Ալմա 7.11–12):

Այնուամենայնիվ մեր հնարավորությունների չափով, ճիշտ ինչպես Հիսուսն է հրավիրել, մենք իսկապես կարող ենք ձգտել դառնալու «ճիշտ ինչպես [Նա է]» (3 Նեփի 27.27)»:³

Երբ մենք ձգտում ենք դառնալ ճիշտ Նրա նման, անկեղծ ցանկությամբ օրհնելու «մեր ճամփորդության ընկերակցին», մեզ հնարավորություններ կտրվեն մոռանալու ինքներս մեզ և բարձրացնելու ուրիշներին: Այս հնարավորությունները հաճախ կարող են դժվարություններ առաջ բերել, փորձելով մեր անկեղծ ցանկությունը ավելի շատ նմանվելու Տիրոջը, ում բոլոր ծառայություններից ամենամեծը՝ Նրա անսահման Քավությունը, ամենադժվարն էր: «Այնուամենայնիվ, - ասում է Նա, - փա՛ռք լինի Հորը, և ես ճաշակեցի ու ավարտեցի իմ նախապատրաստությունները մարդկանց զավակների համար» (ՎեՌԻ 19.19):

Անկեղծորեն ձգտելը ավելի շատ նմանվելու Փրկչին մեզ թույլ կտա տեսնելու այն, ինչն այլ կերպ մենք չէինք կարող տեսնել: Մեր բարի սամարացին բավականաչափ մոտ էր ապրում Հոգուն՝ արձագանքելու ոգեշնչմանը և օգնության հասնելու կարիքի մեջ գտնվող օտարականին:

Տես

Հոգևոր աչքերով տեսնել նշանակում է տեսնել բաներն այնպես, ինչպես իրականում կան և հասկանալ կարիքները, որոնք մենք այլ կերպ չէինք կարող նկատել: Ոչխարների և այծերի առակում, ոչ նրանք, ովքեր «օրհնածներ» էին, և ոչ էլ նրանք, ովքեր «անիծեալներ» էին, չէին ճանաչել Տիրոջը նրանց մեջ, ովքեր սոված էին, ծարավ, մերկ կամ բանտում: Նրանք արձագանքեցին իրենց հատուցումներին, հարցնելով. «Ե՞րբ տեսանք քեզ»: (Տես Մատթեոս ԻԵ.34–44:)

Միայն նրանք, ովքեր տեսել էին հոգևոր աչքերով, նկատել էին կարիքը, գործել և օրհնել էին նրանց, ովքեր տառապում էին: Մեր բարի սամարացին նկատել էր կարիքը, քանի որ նա նայում էր հոգևոր աչքերով:

Գործել

Մենք կարող ենք տեսնել մեր շուրջը գտնվող կարիքները, սակայն անհարմար զգանք արձագանքելու, ենթադրելով, որ այն, ինչը մենք կարող ենք առաջարկել, բավարար չէ: Երբ մենք ձգտում ենք դառնալ ճիշտ Նրա նման, և երբ մենք տեսնում ենք մեր ճամփորդության ընկերակիցների կարիքները հոգևոր աչքերով, մենք պետք է վստահենք, որ Տերը կարող է գործել մեր միջոցով, և ապա մենք պետք է գործենք:

Տաճար մտնելով Պետրոսը և Հովհաննեսը հանդիպեցին մի մարդու՝ «իր մօր որովայնիցը կաղ», ով նրանցից ողորմություն խնդրեց (տես Գործք Գ.1-3): Պետրոսի պատասխանը օրինակ և հրավեր է՝ ուղղված մեզանից յուրաքանչյուրին:

«Արձաթ եւ ոսկի չ'ունիմ. բայց ինչ որ ունիմ, այն քեզ կ'տամ. Յիսուս Քրիստոսի՝ Նազովրեցու անունովը վեր կաց եւ ման եկ:

Եվ աջ ձեռքիցը բռնեց՝ վերկացրեց նորան» (Գործք Գ.6-7):

Մենք կարող ենք գործել, տալով մեր ժամանակը և տաղանդները, բարի խոսքը կամ ուժեղ մեջքը: Երբ մենք փնտրենք և տեսնենք, մենք կողովենք այնպիսի պայմաններում և իրավիճակներում, որտեղ կարող ենք գործել և օրհնել: Մեր բարի սամարացին գործեց: Նա տարավ մեզ իր տուն և տվեց մեզ այն ամենն, ինչ ուներ: Ըստ էության նա ասաց. «Ինչ որ ունիմ, այն քեզ կ'տամ»: Դա հենց այն էր, ինչի կարիքը մենք ունեինք:

Նախագահ Մոնսոնն ուսուցանել է այս նույն սկզբունքները:

«Մեզանից յուրաքանչյուրը մահկանացու կյանքի ճամփորդության ընթացքում կճամփորդի իր իսկ Երիքովի ճանապարհով: Ինչպիսի՞ն կլինի ձեր փորձառությունը: Ինչպիսի՞ն կլինի իմը: Արդյո՞ք ես կթերանամ նկատելու նրան, ով ընկած կլինի ավազակների ձեռքը և կունենա իմ օգնության կարիքը: Իսկ դո՞ւք:

Արդյո՞ք ես կլինեմ մեկը, ով տեսնում է վիրավորվածին և լսում է նրա աղերսանքը, սակայն անցնում է ճանապարհի մյուս կողմը: Իսկ դո՞ւք:

Թե ես կլինեմ մեկը, ով տեսնում է, ով լսում է, ով կանգ է առնում և ով օգնում է: Իսկ դո՞ւք:

Հիսուսը տվեց մեր նշանաբանը՝ «Գնա, դու էլ այդպես արա»: Երբ մենք հնազանդվում ենք այդ հայտարարությանը, մեր հավերժական տեսադաշտում բացվում է նմանը չունեցող և անգերազանցելի ուրախության մի տեսարան»:⁴

Երբ մենք ավելի շատ նմանվենք Փրկչին՝ փնտրելով, տեսնելով և գործելով, մենք կսկսենք հասկանալ Բենիամին թագավորի խոսքերի ճշմարտացիությունը. «Երբ դուք ձեր մերձավորների ծառայության մեջ եք, դուք սոսկ ձեր Աստծո ծառայության մեջ եք» (Մոսիա 2.17): ■

ՀՐՈՒՄՆԵՐ

1. Ռիչարդ Գ. Սքոթ, «Ես ձեզ օրինակ տուի», *Լիստնուս*, մայիս 2014, 35:
2. Թոմաս Ս. Մոնսոն, «Մեր՝ ավետարանի էությունը», *Լիստնուս*, մայիս 2014, 91:

3. Neal A. Maxwell, "Apply the Atoning Blood of Christ," *Ensign*, Nov. 1997, 22.
4. Thomas S. Monson, "Your Jericho Road," *Ensign*, May 1977, 71.

ԱՆԿԵՂՇՈՐԵՆ ՓՆՏԻԵ

ՏԵՍ ՀՈԳԵՎՈՐ ԱԶԶԵՐՈՎ

ԳՈՐԾԻՐ ԵՎ ՕՐՀՆԻՐ





«Ինձ հետ երիբ Դու

ՄԻՇՏ»

Երբ մենք չէինք իմանում, թե էլ ինչ կարող
էինք սովորեցնել, իմ զուգընկերը խորհուրդ
էր տալիս, որ երգեինք այս օրհներգը:

Ջոնաթան Ն. Վեսթոկեր

Կորեայի Բալսան քաղաքում իմ միսիայի ժամանակ մի հաճելի կիրակի օր իմ զուգընկերը և ես եկեղեցուց հետո հրաժեշտ էինք տալիս անդամներին և պատրաստվում էինք ձեռնամուխ լինել քարոզչական աշխատանքին, երբ ծխի միսիայի ղեկավարը ներկայացրեց մեզ մի 12-ամյա տղայի՝ Քոնգ Սունգ-Գյունին: Նա այդ օրը հաճախել էր եկեղեցի և ցանկանում էր ավելին սովորել ավետարանի մասին:

Իհարկե, մենք ուրախ էինք նրան ուսուցանելու հեռանկարի համար, սակայն, ես նաև անհանգստանում էի այդքան երիտասարդ մեկին ուսուցանելու համար: Մենք որոշեցինք ճշտել, որ ունեինք նրա ծնողների թույլտվությունը, ուստի, ես զանգեցի Քոնգ Սունգ-Գյունի տուն և մի կարճ զրույց ունեցա նրա մոր՝ Պակ Մի-Ջունգի հետ: Ես զարմացա, երբ նա ասաց, որ ուրախ էր, որ իր որդին ցանկանում էր եկեղեցի հաճախել և որ նա ուրախ կլիներ, որ մենք գնայինք նրան ուսուցանելու:

Անսպասելի խողներ

Հաջորդ երեկո մենք գնացինք տղայի տուն՝ պատրաստ ուսուցանելու: Մենք զարմացանք, երբ տեսանք, որ Պակ Մի-Ջունգը նաև ցանկանում էր, որ մենք ուսուցանեինք իր դստերը՝ Քոնգ Սու-Ջինին: Եվ քանի որ մենք օտարականներ էինք նրա տանը, Պակ Մի-Ջունգը ցանկացավ ներկա գտնվել դասերին: Իհարկե, մենք ուրախ էինք ուսուցանելու շատերին, ովքեր կցանկանային լսել:

Այն բանից հետո, երբ նրանք մեզ որոշ բաներ հյուրասիրեցին, մենք միասին նստեցինք և սկսեցինք խոսել: Դասն անմիջապես սկսելու փոխարեն Պակ Մի-Ջունգը ցանկացավ ավելի լավ ճանաչել մեզ և պատմել մեզ իր ընտանեկան իրավիճակի մասին: Նա պատմեց մեզ փորձությունների և դժվարությունների մասին, որոնց միջով անցնում էին վերջին ժամանակներում, ներառյալ վերջերս քաղցկեղի դեմ իր որդու մղած պայքարի մասին: Նա հաջողությամբ ստացել էր ճառագայթային բուժում, և քաղցկեղը ներկայումս չէր սպառնում նրա առողջությանը, սակայն բժիշկները նախագգուշացրել էին նրանց, որ այն կարող էր ցանկացած պահի նորից գլուխ բարձրացնել: Սա ընտանիքին մեծ վնաս հասցրեց: Նրանք բանվոր դասակարգի մի ընտանիք էին, և հայրը ստիպված էր չափազանց շատ աշխատելու, որպեսզի զուտ կարողանար տանիք ապահովել նրանց գիլավերում և ուտելիք՝ սեղանի վրա:

Ինձ ցնցեցին և տխրություն պատճառեցին նրանց ընտանիքի փորձությունները: Կյանքը հեշտ չէր նրանց համար, սակայն ընտանիքի մտերմությունը ավելի ակնհայտ էր, քան ես տեսել էի որևէ այլ ընտանիքում, որոնց հանդիպել էի Կորեայում, որը շատ բան էր ասում Կորեայի հասարակության պես ընտանեկան կողմնորոշում ունեցող երկրում: Մենք դուրս եկանք նրանց տանից այդ երեկո, ավելի լավ ճանաչելով այս յուրահատուկ ընտանիքին և հնարավորություն էինք ունեցել կիսելու նրանց հետ ավետարանի ուղերձները:

Իմ զուգընկերը և ես մի քանի անգամ այդ շաբաթ վերադարձել էինք ուսուցանելու համար, ամեն անգամ զգալով նույն ջերմությունը և մեծահոգությունը, որի փորձառությունն ունեցել էինք առաջին այցելության ժամանակ: Երբ հասավ մկրտության մասին խոսելու պահը, երեխաները երկուսն էլ Եկեղեցուն միանալու մեծ ցանկություն ունեին: Այնուամենայնիվ, նրանց մայրը չէր կիսում նրանց ոգևորությունը: Չնայած, որ մեր ուսմունքները արձագանք էին գտել նրանում և նա հուսով էր, որ դրանք ճիշտ էին, նա չէր զգում, որ կարող էր կապել և պահել այնպիսի ուխտեր, որ պահանջում էր Եկեղեցուն միանալու: Նա նաև չէր կարծում, որ պատշաճ կլինեի իր համար մկրտվելու առանց իր ամուսնու, ում մենք դեռևս պետք է հանդիպեինք: Այնուամենայնիվ, նա ավելի, քան հոժարակամ էր շարունակելու հանդիպել մեզ հետ և նաև ցանկանում էր միանալ իր զավակներին եկեղեցի հաճախելիս:

Այդ երկրորդ շաբաթվա վերջում, մինչ մենք շարունակում էինք ուսուցանել նրա տանը, մենք հանդիպեցինք նրա ամուսնուն՝ Քոնգ Քուք-Վոնին, մի խոնարհ, գթառատ և մեծահոգի մարդու: Նա միացավ մեզ վերջին մի քանի դասերի ժամանակ և իսկույն հավատաց ամեն ինչին, ինչ մենք ուսուցանում էինք, ներառյալ վարդապետությունները, որոնք ոմանք երբեմն դժվար էին համարում, ինչպիսին էին տասանորդը և Իմաստության Խոսքը: Չնայած իրենց թշվառության հասնող ֆինանսական վիճակին, նրանք սկսեցին տասանորդ վճարել: Հոր միակ խոչընդոտն այն էր, որ ստիպված էր աշխատել կիրակի օրերին: Նա աշխատում էր Մետլի Միջազգային Օդակայանում ամեն կիրակի, ուստի, նա չէր կարողանում ընտանիքի մնացած անդամների հետ միասին եկեղեցի հաճախել: Չնայած իր աշխատանքային գրաֆիկի, նա և իր կինը հաջորդ կիրակի ներկա գտնվեցին իրենց երեխաների մկրտությանը:

Երեխաների մկրտությունից հետո մենք շարունակեցինք հաճախակի հանդիպել այդ ընտանիքի հետ իրենց տանը: Մենք ընտանեկան տնային երեկո էինք անցկացնում, կիսվում էինք սուրբ գրություններով և ոգեշնչող փորձառություններով, և ծանոթացնում էինք նրանց ծխի անդամների հետ: Այնուամենայնիվ, չնայած շարունակվող հոգևոր փորձառություններին, ծնողները դեռևս մկրտվելու մտադրություն չունեին:

Ժամանակի ընթացքում իմ զուգընկերը տեղափոխվեց մեկ այլ տեղ, և իմ նոր զուգընկերը մի երեք էր, ով գալիս էր ուղիղ միսիոներների ուսուցման կենտրոնից: Նա լի էր հավատքով, եռանդով և խանդավառությամբ, և ես, անկեղծ ասած, դժվարանում էի հետևել նրա օրինակին: Մի քանի առիթներով Քոնգ Քուք-Վոնին և Պակ Մի-Ջունգին հանդիպելուց հետո իմ զուգընկերը



Հոգին շատ ուժեղ էր սենյակում, երբ մենք ավարտեցինք վերջին քառյակը: Պակ Մի-Ջունգը նայեց ուղիղ իմ աչքերի մեջ և ասաց. «Ես պետք է մկրտվեմ»:

մոտեցավ ինձ և հարցրեց, թե արդյոք իմ նախկին զուգընկերը և ես ծոմ էինք պահել նրանց հետ միասին: Մենք դա չէինք արել: Բացի դրանից, նման բան իմ մոտքով չէր էլ անցել: Ուստի, մենք հանդիպեցինք այդ ընտանիքի հետ և առաջարկեցինք ծոմ պահել: Ես ցնցված էի, երբ պարզեցինք, որ նրանք ինքնուրույն պարբերաբար ծոմ էին պահել և իրենց տղայի առողջության համար, և աշխատանքային գրաֆիկի փոփոխության համար, որը Քոնգ Քուք-Վոնին թույլ կտար հաճախել եկեղեցի: Այն բանից հետո, երբ իմ զուգընկերը և ես միացանք նրանց ծոմապահությանը, մեր աղոթքները պատասխանվեցին, և Քոնգ Քուք-Վոնի աշխատանքային գրաֆիկը փոխվեց: Սակայն Պակ Մի-Ջունգը դեռևս շարունակում էր անհողորդ մնալ չմկրտվելու իր որոշման մեջ:

Ոգեշնչված գաղափար

Իմ գուգրնկերն այնուհետև ունեցավ մեկ այլ փայլուն գաղափար: Նա հանեց իր գրպանի փոքրիկ երգարանը և հարցրեց, թե կարող էինք արդյոք երգել նրանց հետ: Չնայած, որ նախկինում մենք երգել էինք նրանց հետ, ես երբեք չէի տեսել Պակ Մի-Ջունգին երգելիս և պարզապես ենթադրել էի, որ նա չէր սիրում երգել կամ հարմար չէր գտնում երգելը, քանի որ երաժշտությունն անծանոթ էր նրան: Իմ գուգրնկերը հարցրեց նրան, թե արդյոք նա ուներ սիրած օրհներգ, և, ի զարմանս ինձ, նա պատասխանեց, որ դեռևս մանկուց նրա սիրած օրհներգը եղել է «Ինձ հետ եղիր Դու միշտ» երգը (*Hymns*, no. 98): Մենք սկսեցինք երգել չորս ձայնով. հայրը երգում էր մեղեդին, մայրը երգում էր ալտո, իմ գուգրնկերը երգում էր տենոր և ես երգում էի բաս:

Հոգին շատ ուժեղ էր սենյակում: Երբ մենք երգեցինք երրորդ տունը, զգացմունքները հաղթեցին նրան և նրա ձայնն աստիճանաբար մարեց, մինչ մենք շարունակում էինք:

*Ինձ հետ եղիր Դու միշտ
Ամեն վայրկյան,
Սուսնգ Քեզ կյանքն է զուր,
Անխիտ մի բան:
Ինձ հետ եղիր Դու միշտ, Տեղ,
Քեզ միշտ կարոտ եմ ես,
Օրհնիր ինձ, իմ Փրկիչ,
Գալիս եմ Քեզ:*

Երբ մենք ավարտեցինք չորրորդ և հինգերորդ քառյակները, նա հեկեկում էր: Մինչ նրա ամուսինը փորձում էր մխիթարել նրան, նա վերջապես կարողացավ հանգստանալ: Նա նայեց ուղիղ իմ աչքերի մեջ և ասաց. «Ես պետք է մկրտվեմ»:

Քոնգ Քուք-Վոնի և Պակ Մի-Ջունգի մկրտությունը, որ ը տեղի ունեցավ այդ կիրակի օրը, իմ միսիայի ամենահոգևոր ծառայություններից մեկն էր: Նրանց երեխաներն ընդգրկված էին ծրագրում, և այդ տարածքի բազմաթիվ անդամներ այցելել էին, ցույց տալու իրենց աջակցությունը իրենց ծխի ամենանոր դարձի եկած ընտանիքին: Իմ գուգրնկերը և ես

պատրաստել էինք հատուկ երաժշտական համար՝ «Ինձ հետ եղիր Դու միշտ»:

Ի վերջո, ես ավարտեցի իմ միսիան և տուն վերադարձա: Քուեջում մեկ տարի սովորելուց հետո ես վերադարձա Կորեա ամառային պրակտիկա անցկացնելու համար և ամեն հանգստյան օրերի նախատեսում էի այցելել բազմաթիվ յուրահատուկ ընկերների և ընտանիքների, որոնց հանդիպել էի իմ միսիայի ընթացքում: Մի քանի շաբաթ անց ես վերադարձա Բալսան և հանդիպեցի այս յուրահատուկ ընտանիքի հետ: Նրանց տուն մտնելուն պես ես նկատեցի, որ ինչ-որ մեկը բացակայում էր. դա նրանց որդին էր: Արցունքներն աչքերում Պակ Մի-Ջունգը հայտնեց ինձ այդ լուրը. նրանց որդու քաղցկեղը գլուխ էր բարձրացրել և 14 տարեկան հասակում պարտության էր մատնել նրան:

Մինչ ես փորձում էի արտահայտել իմ ցավակցությունն ու նաև հարմարվել այն ցավի հետ, որը ես զգացի, Քոնգ Քուք-Վոնը վստահեցրեց ինձ, որ ամեն բան լավ էր լինելու: Նրանք սիրեցին ավետարանը, հավատքով հաճախեցին եկեղեցի և սպասեցին այն օրվան, երբ իրենց ընտանիքը կարող էր միասին կնքվել Մեուլ Կորեա Տաճարում: Չնայած նրանց սրտերը շատ էին ցավում, ընտանիքը գիտեր, որ իրենք կրկին կտեսնեին Քոնգ Սունգ-Գյունին և կրկին միասին կլինեին: Պակ Մի-Ջունգը նաև ասաց ինձ, որ ամեն օր օրհներգեր երգելն օգնել էր իրեն պայքարելու համար ուժ գտնել և զգալ խաղաղությունը, որ Հոգին էր բերում:


Երբ ես այդ երեկո հեռացա նրանց տանից, ես կրկին անդրադարձա Պակ Մի-Ջունգի սիրած օրհներգի բառերին: Ես երախտապարտ եմ, որ Երկնային Հայրը օրհնել է այդ ընտանիքին խաղաղությամբ Քոնգ Սունգ-Գյունի մահից հետո, և ես հատկապես երախտապարտ եմ Պակ Մի-Ջունգի դարձի գալու չնայած ունեցած դերի համար, որը ընտանիքին հնարավորություն տվեց որակվելու տաճարի հավերժական օրհնությունների համար: ■

Հեղինակն ապրում է Յոնսյոնում, ԱՄՆ:

ՕՐՇՆԵՐԳԵՐԸ ՍՓՈՓՈՒՄ ԵՆ ՎԻՇԵԸ

«Ամենամեծ քարոզներից մի քանիսը քարոզվել են օրհներգեր երգելու միջոցով: Օրհներգերը առաջնորդում են մեզ դեպի ապաշխարություն և բարի գործեր, ամրացնում են վկայությունը և հավատքը, մխիթարում են հոգևածին, սփոփում են վիշտը և ոգեշնչում են մեզ համբերել մինչև վերջ»:

**«Առաջին Նախագահության Նախաբանը»,
Օրհներգեր ix:**



Մենք հաճախ փորձում ենք լուծել հանցանքի հետ կապված խնդիրը, մի-մյանց և ինքներս մեզ ասելով, որ դա ոչ մի նշանակություն չունի: Սակայն, ինչ-որ կերպ, մեր հոգու խորքում մենք չենք հավատում սրան: Ոչ էլ մենք հավատում ենք ինքներս մեզ, եթե ասում ենք դա: Մենք ամեն -ինչ ավելի լավ գիտենք: Դա ունի նշանակություն:

Մարգարեները միշտ ուսուցանել են ապաշխարություն: Ալման ասել է. «Եվ, ահա նա գալիս է փրկագնելու նրանց, ովքեր կմկրտվեն ապաշխարության համար, նրա անվան հանդեպ հավատքի միջոցով» (Ալմա 9.27):

Ալման բացահայտորեն ասաց իր կամակոր որդուն. «Արդ, ապաշխարությունը չէր կարող գալ մարդկանց, եթե չլիներ մի պատիժ, որը հավերժական էր, ինչպես հոգու կյանքը պիտի լինի՝ սահմանված ի հակադրություն երջանկության ծրագրին» (Ալմա 42.16):

Մահկանացու կյանքն ունի երկու հիմնական նպատակ: Առաջինը մարմին ստանալն է, որը կարող է, եթե մենք ցանկանանք, մաքրվել և վեհացվել և հավերժ ապրել: Երկրորդ նպատակը փորձվելն է: Փորձվելիս մենք միանշանակ սխալներ թույլ կտանք: Սակայն, եթե մենք ցանկանանք, մենք կարող ենք սովորել մեր սխալներից: «Եթե ասենք թե մեղք չգործեցինք, ստախոս ենք անում նորան, եւ նորա խօսքը մեզանում չէ» (Ա Հովհաննես Ա.10):

Դուք, հավանաբար, կարող եք անհամաձայնություն զգալ ձեր մտքում և մարմնում և անհանգստանալ կամ բեռնավորված լինել որոշակի հոգևոր խնդիրներով, որոնք նշվում են որպես «անցած բաներ»: Երբ դուք լուռ մտորումների պահին անկեղծանում եք ինքներդ ձեզ հետ (ինչից մեզանից շատերը փորձում են խուսափել), կա՞ն արդյոք որոշ չպարզաբանված բաներ, որոնք անհանգստացնում են ձեզ: Դուք ունե՞ք ինչ-որ բան ծանրացած ձեր խղճի վրա: Դուք դեռևս որևէ աստիճանով հանցավո՞ր եք որևէ փոքր կամ մեծ բանում:

Խիստ հաճախ մենք նամակներ ենք ստանում նրանցից, ովքեր ողբերգական սխալներ են գործել և բեռնավորված են: Նրանք աղերսում են. «Ես երբևէ կներվե՞մ: Ես երբևէ կփոխվե՞մ»: Պատասխանն է՝ այո:

Պողոսն ուսուցանեց Կորնթացիներին. «Ձեզ ուրիշ փորձություն չէ պատահել բացի մարդկային փորձությունից. բայց Աստուած հաւատարիմ է, որ չի թողի ձեզ ձեր կարողությունիցը վեր փորձու-լու, այլ փորձութան հետ ելքն էլ կաւա-րաստէ, որ կարողանաք համբերել» (Ա Կորնթացիս Ժ.13):

Ավետարանը մեզ սովորեցնում է, որ կարող ենք ազատվել տառապանքից և հանցանքից ապաշխարության միջոցով: Բացառություն են կազմում այն քչերը, այն շատ քչերը, ովքեր կորստի են մատնվում ամբողջությունն իմանալուց հետո, չկա սովորույթ, չկա կախվածություն, չկա ըմբոստություն, չկա օրինազանցություն, ոչ էլ մեծ ու փոքր հանցանք, որը զերծ լինի լիովին ներվելու խոստումից: Անկախ նրանից, թե ինչ է պատահել ձեր կյանքում, Տերը ձեզ համար վերադառնալու ուղի է պատ-րաստել, եթե դուք լսեք Սուրբ Հոգու հուշումները:

Ոմանք լցված են համակող ցանկություններով, գայթակղություններով, որոնք պտտվում են մտքում, հավանաբար սովորություն, ապա կախվածություն դառնալու միտումով: Մենք հակված ենք որոշ օրինազանցությունների և մեղքի և նաև պատճառաբանության, որ մենք մեղավոր չենք, քանի որ մենք այդպիսին ենք ծնվել: Մենք ընկնում ենք ծուղակը, և այդտեղից էլ գալիս է ցավն ու տառապանքը, որը միայն Փրկիչը կարող է հուժեղ: Դուք ունե՞ք կանգ առնելու և փրկվելու գործությունը:

Սատանան հարձակվում է ընտանիքի վրա

Նախագահ Մարիոն Գ. Ռոմնին մի անգամ ինձ ասաց. «Նրանց մի ասիր

ուղղակի այնպես, որ նրանք կարողանան հասկանալ, ասա նրանց այնպես, որ նրանք չկարողանան սխալ հասկանալ:

Նեփիին ասել է. «Քանզի իմ հոգին հրճվում է պարզությամբ, քանզի Տեր Աստված այս ձևով է գործում մարդկանց զավակների մեջ: Քանզի Տեր Աստված տալիս է լույս հասկացողությանը» (2 Նեփի 31.1):

Այսպիսով, լսեք: Ես պարզ կխոսեմ, որպես մեկը, ով կանչված է և այդ անելու պարտականությունն է կրում:

Դուք գիտեք, որ կա հակառակորդ: Մուրթ գործությունները բնորոշում են նրան հետևյալ տերմիններով. «Այն հին օձը, որը դևն է, . . . բոլոր ստերի հայրը» (2 Նեփի 2.18): Նա դուրս էր գցվել ի սկզբանե (տես ՎեՌԻ 29.36–38) և գրկվել էր մահկանացու մարմին ստանալու հնարավորությունից: Նա երդվել է կործանել «երջանկության մեծ ծրագիրը» (Ալմա 42.8) և դառնալ ամեն արդարակեցության թշնամին: Նա իր հարձակումները կենտրոնացնում է ընտանիքի վրա:

Դուք ապրում եք այն օրերում, երբ պոռնոգրաֆիայի պատուհասը սրընթաց տարածվում է ողջ աշխարհով մեկ: Դժվար է գերծ մնալ դրանից: Դոմոնոգրաֆիան կենտրոնանում է ձեր էության այն մասի վրա, որի միջոցով դուք գործություն ունեք կյանք արարելու:

Դոմոնոգրաֆիային անձնատուր լինելը հանգեցնում է դժվարությունների, ամուսնալուծության, հիվանդության և հազար ու մի տեսակի վտորդանքների: Չկա դրա մեջ ոչ մի անմեղ մասնիկ: Այն հավաքելը, դիտելը կամ որևէ ձևով այն անընդհատ ձեռք հետ ունենալը հավասարագոր է ձեր պայուսակում բռնաբերելու օձ պահելուն: Այն ունենում է ձեռք վրա մի այնպիսի անխուսափելի ազդեցություն, որը հոգևոր առումով համարժեք է օձի խայթոցի մահացու թույնի ազդեցությանը: Նկատի ունենալով այն փաստը, թե ինչպիսին է աշխարհն այսօր, կարելի է հեշտությամբ հասկանալ, որ դուք կարող եք գրեթե անմեղորեն ենթարկվել դրա ազդեցությանը, կարդալ այն կամ դիտել այն՝ առանց սարսափելի հետևանքները գիտակցելու: Եթե դա նկարագրում է ձեռք,



*Մարդկության
ողջ պատմու-
թյան տարեգ-
րության մեջ
եղել է միայն
Մեկը, ով եղել է
լիովին անմեղ,
որակված պա-
տասխանելու
ողջ մարդկու-
թյան մեղքերի
և օրինազան-
ցությունների
համար:*

ես զգուշացնում եմ, որ կանգ առնեք: Կանգ առեք հենց հիմա:

Մորմոնի Գիրքն ուսուցանում է, որ բոլոր «մարդիկ բավականին ուսուցանված են, որ բարին տարբերեն չարից» (2 Նեփի 2.5): Դա ներառում է նաև ձեզ: Դուք գիտեք, թե ինչն է ճիշտ և ինչն է սխալ: Ուշադիր եղեք, որ չանցնեք այդ գիծը:

Չնայած, որ սխալներից շատերը կարող են զաղտնի կերպով խոստովանվել Տիրոջը, կան որոշ օրինազանցություններ, որոնց ներքոնք պահանջում է դրանից ավելին: Եթե մեծ սխալներ եք գործել, հանդիպեք ձեր եպիսկոպոսի հետ: Այլապես, կարվի սովորական խոստովանություն՝ լուր և անհատա-կան: Սակայն հիշեք, որ ներման հրաշալի առավոտը միգուցե միանգամից չգա: Եթե սկզբում դուք դժվարանաք, չհանձնվեք: Հիասթափությունը հաղթահարելը վտոր-ձաշրջանի մի մասն է: Անձնատուր մի եղեք: Եվ ինչպես ես խորհուրդ եմ տվել նախկի-նում, երբ դուք խոստովանում և թողնում եք ձեր մեղքերը, ետ մի նայեք:

Փրկիչը տառապել է մեր մեղքերի համար

Տերը միշտ այնտեղ է: Նա տառապել և վճարել է տույժը, եթե դուք կամենաք ընդու-նել Նրան որպես ձեր Քավիչ:

Որպես մահկանացուներ, մենք միգուցե չկարողանանք, ավելի ճիշտ չենք կարող լիովին հասկանալ, թե *ինչպես* է Փրկիչն իրականացրել Իր քավող գոհաբերությունը: Սակայն, այժմ *ինչպես*ն այնքան կարևոր չէ, որքան Նրա տառապանքի *ինչու*ն: Ինչ-չո՞ւ Նա դա արեց ձեզ համար, ինձ համար, ողջ մարդկության համար: Նա արեց դա Հայր Աստծո և ողջ մարդկության հանդեպ ունեցած սիրո պատճառով: «Ոչ ով նորանից ատելի մեծ սէր չունի, որ մեկն իր անձը դնէ իր բարեկամների համար» (Հովհաննես ԺԵ.13):

Գեթսեմանիում Քրիստոսն առանձնացավ Իր Առաքյալներից, որպեսզի աղոթեր: Այն, ինչ տեղի ունեցավ, վեր է մեր հասկացողու-թյան գործությունից: Սակայն մենք գիտենք, որ Նա ավարտին հասցրեց Քավությունը:

Նա հոժար էր Իր վրա վերցնել ողջ աշխարհի սխալները, մեղքերը և հանցանքները, կասկածներն ու վախերը: Նա տառապեց մեզ համար, որպեսզի մենք չտառապենք: Շատ մահկանացուներ տանջանքներ են կրել և մահացել ցավոտ, սոսկալի մահով: Սակայն Նրա տառապանքը գերազանցեց այդ ամենին:

Իմ այս տարիքում ես հասկացել եմ, թե ինչ է ֆիզիկական ցավը, և դա զվարճալի բան չէ: Ոչ ոք չի անցնում այս կյանքն առանց իմանալու մեկ կամ երկու բան չարչարանքների մասին: Սակայն անձնական տառապանքը, որը ես չեմ կարող տանել, այն է, երբ ես սկսում եմ գիտակցել, որ իմ պատճառով մեկ ուրիշը տառապել է: Այդ ժամանակ է, որ ես սկսում եմ ըմբռնել տառապանքի նշույլները, որոնք Փրկիչն ունեցավ Գեթսեմանի պարտեզում:

Նրա տառապանքը տարբերվում է նախքան այդ կամ դրանից հետո տեղի ունեցած մնացած բոլոր տառապանքներից, քանի որ Նա Իր վրա վերցրեց բոլոր պատիժները, որոնք երբևէ դրվել են մարդկության ընտանիքի վրա: Պատկերացրեք դա: Նա պարտ չունեւր վճարելու: Նա ոչ մի սխալ բան չէր արել: Այնուամենայնիվ, բոլոր հանցանքները, կսկիծն ու վիշտը, ցավն ու վիրավորանքը, բոլոր մտավոր, էմոցիոնալ և ֆիզիկական չարչարանքները, որոնք հայտնի են մարդուն, Նա տարավ այդ ամենը: Մարդկության ողջ պատմության տարեգրության մեջ եղել է միայն Մեկը, ով եղել է լիովին անմեղ, որակված պատասխանելու ողջ մարդկության մեղքերի և օրինազանցությունների համար և ցավը տանելու համար, որը ներառում էր նաև դրանց համար վճարելը:

Նա նվիրաբերեց Իր կյանքը և իրականում ասաց. «Քանզի այդ ես եմ, որ վերցնում է իր վրա աշխարհի մեղքերը» (Մոսիա 26.23): Նա խաչվեց. Նա մահացավ: Նրանք չէին կարող վերցնել Նրանից Իր կյանքը: Նա համաձայնվեց մահանալ:

Լիարժեք ներումը հնարավոր է

Եթե դուք սայթաքել եք կամ նույնիսկ որոշ ժամանակ մոլորված եք եղել, եթե դուք զգում եք, որ հակառակորդն այժմ ձեզ գերի է վերցրել, դուք կարող եք առաջ շարժվել հավատքով և այլևս աշխարհում այս ու այն կողմ չթափառել: Կան մարդիկ, ովքեր պատրաստ կանգնած են ձեզ ետ առաջնորդելու համար դեպի խաղաղություն և ապահովություն: Նույնիսկ Աստծո շնորհը, ինչպես խոստացված է սուրբ գրություններում, զալիս է «այն ամենից հետո, ինչ մենք կարող ենք անել» (2 Նեփի 25.23): Իմ կարծիքով, դրա հնարավորությունն իրական է, որն իրոք արժե իմանալ:

Ես խոստանում եմ, որ ներման պայծառ առավոտը կարող է զալ: Այդ ժամանակ «Աստուծոյ խաղաղութիւնը, որ ամեն մտքից վեր է» (Փիլիպպեցիս Դ.7) մեկ անգամ ևս կգա ձեր կյանք, արևածագի նման մի բան, և՛ դուք, և՛ Նա «քո» մեղքերը այլ եւս պիտի չհիշեք» (Երեմիա ԼԱ.34): Ինչպե՞ս դուք կիմանաք: Դուք կիմանաք: (Տես Մոսիա 4.1-3):

Մա այն է, ինչ ես եկել եմ սովորեցնելու ձեզ, ովքեր փորձանքի մեջ են: Նա կգա և կլուծի խնդիրը, որը դուք չեք կարողանում լուծել, սակայն դուք պետք է վճարեք գինը: Դա տեղի չի ունենա առանց դա անելու: Նա շատ բարի կառավարիչ է այն առումով, որ վճարել է անհրաժեշտ գինը, սակայն Նա ցանկանում է, որ դուք անեք այն, ինչ պետք է անեք, նույնիսկ եթե դա ցավոտ է:

Ես սիրում եմ Տիրոջը և սիրում եմ Հորը, ով ուղարկեց Նրան: Մեր հիասթափության, մեղքի և հանցանքի բեռները կարող են դրվել Նրա առջև, և Նրա առատաձեռն պայմաններով, հաշվի չորաքանչյուր կետ կարող է նշվել որպես «լիովին վճարված»:

«Հիմա եկեք ու վիճաբանենք, ասում է Տերը, եթե ձեր մեղքերը կրկնակի կարմիրի պես լինին, ձիւնի պես պիտի սպիտականան. եթե նորանք որդան

[illegible]

ԵՐԳԵՔ ԶԵՐ ՍԻՐԵԼԻ ՕՐՇՆԵՐԳԸ

Ես հենց նոր էի ծննդաբերել մեր դստերը՝ Ռեբեկային: Իմ ծննդաբերության ցավերն ուժեղ էին և ես ուժասպառ էի եղել:

Երբ Ռեբեկային դրեցին իմ ձեռքերի մեջ, ինձ պարուրեց մի անհաղթահարելի զգացում, որ պետք է երգեի «Աստծո զավակն եմ» իմ սիրելի օրհներգը (*Հիմներ և մանկական երգեհոն*, էջ 58): Իմ առաջին արձագանքն էր. «Ոչ ես շատ եմ հոգնած: Ես հետո կերգեմ այն»: Բայց հետո այդ միտքը կրկին եկավ: Այսպիսով, չնայած ես ուժասպառ էի, ես սկսեցի երգել առաջին տողը: Ամուսինս և մայրս միացան ինձ:

Երբ ես ավարտեցի երգը, զգացի մի հատուկ զգացում սենյակում: Նույնիսկ բժիշկը, ով մինչև այդ պահը պրոֆեսիոնալ էր և բավականին զուսպ, նրա դեմքի վրայով արցունքներ սկսեցին հոսել: Նա շնորհակալություն հայտնեց մեզ այդպիսի գեղեցիկ երգ երգելու համար: Նա ասաց, որ բոլոր այն տարիների ընթացքում, որ նա երեխաներ էր ազատել, նա երբեք չէր զգացել այնպես, ինչպես նա զգաց այդ պահին:

Ես մտորում էի այդ փորձառության մասին և մտածեցի, որ գտնեմ այդ հիմնի մի ձայնագրություն և տամ նրան: Դժբախտաբար ես զբաղվեցի կյանքի գործերով և մոռացա այդ մասին:

Ապա եկավ հետծննդաբերական ստուգման ժամանակը: Երբ բժիշկը ներս մտավ սենյակ, նրա դեմքը պայծառացավ և նա ինձ գրկեց: Նա ասաց, որ չէր կարողացել այդ երգը հանել իր մտքից և նույնիսկ փորձել էր գտնել երաժշտությունը ինտերնետում, որպեսզի երգեր այն իր ընտանիքի համար: Հենց այդ ժամանակ Մուրֆ Հոգին հիշեցրեց ինձ, որ ես պետք է այդ երաժշտության մի օրինակ գտնեի նրա համար: Ես խոստացա, որ շաբաթվա ընթացքում կվերադառնայի այդ երգի հետ:

Այդ երեկո ես աղոթեցի օգնության համար, որպեսզի գտնեի այդ երգի մի կատարում, որը


լավագույնը կլիներ նրա համար: Հաջորդ օրը կեսօրին ես պատվիրեցի այդ երգի ձայնասկավառակը: Երբ այն տեղ հասավ փոստով մի քանի օր հետո, ես չէի կարողանում համբերել այն նրան տալու համար:

Նա հուզված էր այն ստանալու առթիվ և շնորհակալություն հայտնեց նվերի համար: Նա ինձ ասաց, որ համոզված չէր, թե ինչու, բայց այդ երգը շատ կարևոր էր իր համար, որ տար իր ընտանիքին: Երբ մենք շարունակում էինք խոսել, ես կիսվեցի ոչ միայն իմ սիրով այդ երգի հանդեպ, այլ նաև իմ վկայությամբ այն պարզ ճշմարտությունների վերաբերյալ, որոնք այն ուսուցանում է:

Երբ ես մեքենայով տուն էի վերադառնում, ես զգացի Երկնային Հոր սերն Իր դուստրերից մեկի՝ իմ բժշկի հանդեպ: Նա գիտի և սիրում է նրան, և Նա կամենում է, որ նա հասկանա, որ կարող է նաև սփռադառնալ՝ կրկին ապրելու Իր հետ: ■

Սևջելա Օլսեն Սենթր, Օհայո, ԱՄՆ

Երբ մենք ավարտեցինք երգը, բժիշկը, ով մինչև այդ պահը պրոֆեսիոնալ էր և բավականին զուսպ, նրա դեմքի վրայով արցունքներ սկսեցին հոսել:



Ինչո՞ւ Երկնային
Հայրը «միշտ»
չի հսկում մեզ և
նախազգուշացնում
մեզ:



«ՄԻՇՏ» Ի ՆՐԱ ԽՈՍՏՈՒՄԸ

Երբ ես նստած էի հաղորդության ժողովին՝ խորհելով հացի վրայի աղոթքը, խոսքերը շարունակում էին կրկնվել ինքնաբերաբար իմ մտքում, «որպեսզի նրանք նրա Հոգին միշտ իրենց հետ ունենան» (Մորոնի 4.3, ՎևՈՒ 20.77):

Ասվում է «միշտ», ոչ թե ուղղակի որոշ դեպքերում: Ապա ինչու, մի քանի ամիս առաջ ամուսինս և ես չհուշվեցինք այն բանի վերաբերյալ, թե ինչպես պաշտպանեինք մեր 11 տարեկան որդուն, նախքան նա կգոհվեր հեծանիվի ու ավտոմեքենայի վթարից: Ինչո՞ւ Երկնային Հայրը «միշտ» չի հսկում մեզ և նախազգուշացնում մեզ:

Ինձ ուսուցանվել էր Երեխաների Միությունում և ես հավատացել էի, որ Սուրբ Հոգին կպաշտպանի մեզ: Նա կօգտագործի մեղմ և հանդարտ ձայնը՝ հսկելու, առաջնորդելու և նախազգուշացնելու մեզ վտանգի մասին: Այս միտքը իմ ուղեղում էր Բենի մահվանից սկսած: Ես նրան շատ էի կարոտում և սիրտս հասկացողություն և խաղաղություն էր փափագում:

Որտե՞ղ էր իմ նախազգուշացնող ձայնը: Որտե՞ղ էր Սուրբ Հոգին: Ես

զգում էի, որ մենք անում էինք մեր լավագույնը արդարակյաց լինելու համար: Մենք վճարում էինք մեր տասանորդը, հաճախում էինք մեր ժողովներին և ծառայում էինք, երբ որ մեզ խնդրվում էր: Մենք հեռու էինք կատարյալ լինելուց, բայց մենք անցակցնում էինք ընտանեկան երեկոներ և սուրբ գրությունների ուսումնասիրություն: Մենք փորձում էինք:

Գրեթե այդ պահին ես նստած էի Սփոփող Միության դասին, երբ ուսուցիչը պատմեց մի պատմություն մոտիկ բարեկամներից մեկի մասին: Լուսացույցին սպասելիս բարեկամը զգացել էր հստակ տպավորություն, մնալ որտեղ նա կանգնած էր, երբ լույսը փոխվել էր կանաչ: Նա հնազանդվել էր հուշումին և գրեթե անմիջապես մի մեծ բեռնատար սլանալով անցել էր խաչմերուկը կարմիր լույսի տակով: Եթե նա լսած չլիներ և հնազանդված այդ ձայնին, նա և նրա երեխաները հավանաբար վնասված կլինեին կամ նույնիսկ մահացած:

Այս պատմությունը ինձ հարվածեց ուժեղ, բայց երբ նստած էի

աթոռիս արցունքների մեջ՝ պատրաստվելով կանգնել և հեռանալ սենյակից, մի մեծ հանգստություն իջավ ինձ վրա: Ես խաղաղություն զգացի, որ Սուրբ Հոգին, իսկապես, ինձ հետ էր եղել: Իմ դեպքում Նա եղել էր ինձ հետ ոչ թե որպես նախազգուշացնող ձայն, այլ որպես մխիթարող:

Բենի վթարից հետո ես զգացել էի ուժ իմ սեփականից վեր և մխիթարվել էի իմ Երկնային Հոր կողմից: Ես չէի հասկանում երբեմն, թե ինչու են որոշ բաներ պատահում, բայց ես երբեք չէի կասկածել Նրա սիրուն:

Ես ունեմ հավատք, որ Աստված հասկանում է բոլոր բաները և երբեք ինձ չի թողնի անմխիթար: Սուրբ Հոգին շատ դերեր է խաղում մեր կյանքում: Նա կարող է պաշտպանել մեզ, բայց Նա նաև առաջնորդում է մեզ, մխիթարում մեզ, ուսուցանում և տալիս հասկացողություն և այլ օրհնություններ:

Ես հասկացա, որ Երկնային Հայրն իսկապես պահում է Իր խոստումները: Նա «միշտ» եղել էր ինձ հետ: ■

Ռոբին Կասպեր, Յուտա, ԱՄՆ



ՀՈԳԻՆ ՇՇՆՋԱՑ ԻՆՁ

«Հեյ, տղաներ, վերադարձե՛ք»,- գոչեց մի վրդովված ձայն:

Ես շրջվեցի նկատելով երկու տղաների՝ մոտ հինգ և յոթ տարեկան, որոնք վազում էին խանութի ավտոկայանատեղով դեմքերի վրայով հոսող արցունքներով: Վաճառողը մտահոգված էր երևում, երբ կանչում էր նրանց ետևից:

Երբ ես ետ շրջվեցի դեպի իմ մեքենան, Հոգին շջնաց. «Դու կարող ես այստեղ օգնել»: Շշունջը հանգիստ էր սակայն այնքան հստակ, որ մի ակնթարթ հետո ես վազում էի կայանատեղի միջով դեպի տղաները:

Ես գտա ավագ եղբորը կանգնած մի դարչնագույն փոքր ավտոբուսի կողքին: Ես մոտեցա և ծնկի եկա նրա կողքին:

«Ողջույն Իմ անունը Քրիստինա է Քեզ հետ ամեն ինչ լա՞վ է»:

Իմ խոսքերի վրա նա ավելի ուժեղ լաց եղավ և թևով ծածկեց երեսը: Վաճառողը և մյուս տղան միացան մեզ:

«Կարծում եմ, նրանք միայն ֆրանսերեն են խոսում», -ասաց վաճառողը: «Մենք հենց նոր նրանց գտանք խանութում կորած վազելիս»:

Ես կրկնեցի իմ խոսքերը երեխաներին ֆրանսերեն: Ֆրանսերենը իմ առաջին լեզուն էր, բայց ես չէի խոսել այն ժամանակից ի վեր ինչ որդեգրվել էի մի անգլիախոս ընտանիքի կողմից, երբ փոքր երեխա էի: Իրականում, իմ ֆրանսերենը աղքատիկ է: Մակայն այդ պահին այն ոչ անբնական էր, ոչ էլ անճոռնի: Խոսքերը հստակ էին իմ մտքում և իմ ձայնում, երբ ես հանգստացնում էի տղաներին:

Հեկեկոցների միջից ավագ եղբայրը բացատրեց խոսքերի արագ հոսքով, որ նա և նրա եղբայրը չէին կարողանում գտնել իրենց ծնողներին որևէ տեղ խանութում և դուրս էին վազել նրանց փնտրելու: Երբ լսում էի, ես աղոտ գիտակցում էի, թե որքան զարմանալի էր, որ ես ոչ միայն ազատ զրուցում էի ֆրանսերեն, այլ նաև հեշտորեն հասկանում էի և մխիթարում երկու վախեցած երեխաներին:

«Նրանք կորցրել են իրենց ծնողներին և ցանկանում են սպասել նրանց այստեղ իրենց մեքենայի մոտ», - ասաց վաճառողը: Փոքրիկ տղան տվեց իր ծնողների անունները, որը ես տվեցի վաճառողին,

Ես շրջվեցի նկատելով երկու տղաների՝ մոտ հինգ և յոթ տարեկան, որոնք վազում էին խանութի ավտոկայանատեղով՝ դեմքերի վրայով հոսող արցունքներով:

որպեսզի նա կարողանար նրանց կանչել: Մի քանի րոպե անց տղան տեսավ իր հորը, որը դուրս էր գալիս խանութից և վազեց նրան ընդառաջ:

Երբ ես հետևեցի տղային՝ մոտենալով նրա հորը ես հասկացա, որ այլևս չէի կարողանում նույնիսկ ցտեսություն ասել ֆրանսերենով: Ես գուր փորձեցի որևէ բան ասել տղաներին, որ նրանք հասկանալի, բայց ես չկարողացա ասել որևէ բան բացի հատուկեմտ խոսքերից: Ի վերջո, ես անցա անգլերենի, ասելով տղային. «Ցտեսություն, հաճելի էր ծանոթանալ քեզ հետ»:

Երբ ես երեխաներին թողեցի իրենց հոր հետ, ես լցված էի երախտագիտությամբ: Երկնային Հայրը իմ միջոցով գործեց մխիթարելու Իր երկու փոքրիկներին: Ես ինձ խոնարհված էի զգում, որ Տերը կարողացավ ուժեղացնել իմ սահմանափակ ունակությունները՝ իրականացնելու Իր նպատակները: Ես երախտապարտ էի ականատես լինելով, թե ինչ կարող է պատահել, երբ մենք Նրան ենք մատուցում ինքներս մեզ, երբ կանչվում ենք, նույնիսկ ամենաանհավատալի իրավիճակներում: ■

Քրիստինա Ալբրեխտ Էրիարթ, Վաշինգտոն, ԱՄՆ

ՄԵՆՔ ԱՅԺՄ ՊԵՏՔ Է ՏԱՃԱՐ ԳՆԱՆՔ

Մի կիրակի առավոտ նոր մկրտված մի անդամ ներբկայացվեց ծխին: Նրա անունը Լիդիա էր: Նա անմիջապես գրավեց մեր սրտերը:

Լիդիան տարեց էր և կույր՝ տարիներ շարունակ պայքարելով շաքարախտի դեմ: Նա արագ սկսեց ճանաչել ծխի անդամներին նրանց ձայներից և քայլվածքից: Նա սովորաբար ասում էր մեր անունները և սեղմում մեր ձեռքը, և մենք երբեք չէինք ակնարկում այն փաստը, որ նա կույր էր:

Անհրաժեշտ մեկ տարվա սպասումից հետո, Լիդիան հանդիպեց եպիսկոպոսին և ցցի նախագահին՝ ստանալու իր տաճարային երաշխավորագիրը: Մի կիրակի Մփոփող Միությունում, նա ինձ նստացրեց իր կողքին և բացականչեց. «Ցցի նախագահն ասաց ինձ, որ ես պետք է որքան հնարավոր է շուտ տաճար գնամ: Դուք ինձ կտանե՞ք»:

Դա դեկտեմբերի առաջին շաբաթն էր՝ զբաղված ժամանակ մեզ բոլորիս համար: Ես փորձեցի սովորական արդարացումներ գտնել և ասացի. «Չե՞նք կարող սպասել մինչև հունվար»:

«Ցցի նախագահն ասաց ինձ, որ ես պետք է որքան հնարավոր է շուտ տաճար գնամ», ասաց Լիդիան: «Դուք ինձ կտանե՞ք»:

«Ոչ, մենք այժմ պետք է տաճար գնանք»

Կանանց մի խումբ տաճար էր գնում ամեն ամիս, այսպիսով ես մոտեցա նրանց, որպեսզի պայմանավորվեի Լիդիայի ուղևորության համար: Նրանք նույնպես շատ զբաղված էին: Բայց Լիդիան արցունքն աչքերին նորից ասաց, որ ցցի նախագահն ասել էր իրեն, որ որքան հնարավոր է շուտ գնար:

Այդ ժամանակ մենք բոլորս համաձայնվեցինք կատարել այդ 241 կիլոմետրանոց ուղևորությունը հաջորդ շաբաթ: Ճանապարհին մենք լցրեցինք երթուղային ավտոբուսը ութ կանանց շատախոսությամբ և ընկերասիրությամբ: Լիդիան բավականություն զգաց իր տաճարային փորձառությունից և իր օժտումը ստանալու օրհնությունից:

Հունվարի առաջին շաբաթվա ընթացքում Լիդիայի վիճակը վատթարացավ և նա հիվանդանոց ընդունվեց շտապ օգնության

համար: Մեկ շաբաթ անց նա հեռացավ կյանքից: Բայց Լիդիան գնաց հավերժական օրհնություններով, որոնք նա ստացել էր տաճարում՝ հենց մի քանի շաբաթ առաջ:

Հետագայում, ես պատմեցի ցցի նախագահին մեր ուղևորության պատմությունը և ասացի նրան, թե որքան տպավորված էի, որ նա զգացել էր հուշում՝ ասելով Լիդիային, որ նա պետք է անմիջապես տաճար գնար:

«Ես իրականում ի նկատի չունեի, որ նա պետք է այժմ գնար», պատասխանեց նա: Ես միշտ ասում եմ նոր երաշխավորագիր կրողներին, որ նրանք շուտ գնան տաճար: Հոգին խոսել է Լիդիայի և ոչ թե ինձ հետ»:

Լիդիան սովորեցրեց մեզ բոլորիս լսել Հոգուն և անմիջապես անել դա: Ես շնորհակալ եմ ցածր ու հանդարտ ձայնին լսելու նրա հիշեցման համար: ■

Մարի Հովսեփ Յունես,
Կալիֆորնիա, ԱՄՆ





Երեց
Էսթոնի Դ. Փերքիս
Յոթանասուկից

ԱՌԱՋ ԳՆԱՑԵՔ հավատքով

Դուք երիտասարդ չափահասներդ այժմ ապրում եք այսպես կոչված «Ռոքշումների տասնամյակում»: Դուք ընդունում եք ձեր կյանքի կարևոր որոշումներից շատերը, ինչպես օրինակ՝ «տաճար գնալը, միսիա ծառայելը, կրթություն ստանալը, մասնագիտություն ընտրելը և գույրներ ընտրելը և սուրբ տաճարում ժամանակի և ողջ հավերժության համար կնքվելը»:¹

Ես հատկապես խոսում եմ նրանց համար, ովքեր մաքառում են այս կարևոր որոշումներից մեկի կամ մի քանիսի հետ, - ոմանք սխալ որոշում ընդունելու վախից հավանաբար գրեթե կաթվածահար են կամ կարիք ունեն ամրապնդման՝ նախկինում կայացրած որոշմանը համոզված մնալու համար:

Նեփիի կողմից ոգեշնչված որոշում ընդունելու չորս դասերը կիրառվելու դեպքում, կարող են նվազեցնել ձեր երկյուղները և մեծացնել առաջ շարժվելու ձեր վստահությունը:

1. Հնազանդվեք պատվիրաններին:

Նեփիի սրբազան հիշատակաբանի վերջին հատվածն ամփոփում

է նրա կյանքը. «Քանզի այսպես է պատվիրել ինձ Տերը և ես պետք է հնազանդվեմ» (2 Նեփի 33.15):

Նեփիի հավատքն ու սերը Փրկչի հանդեպ ակնհայտ է Աստծո պատվիրաններին հնազանդվելու նրա օրինակից: Նա աղոթում էր (տես 1 Նեփի 2.16) Նա կարդում էր սուրբ գրությունները (տես 1 Նեփի 22.1): Նա ուղղություն էր փնտրում և հետևում ապրող մարգարեին (տես 1 Նեփի 16.23-24): Այդպիսի հնազանդությունը թույլ էր տալիս, որ Սուրբ Հոգին գործությամբ ընկերակցեր Նեփիին իր ողջ կյանքի ընթացքում և ենթարկվում էր շարունակվող անձնական հայտնությանը:

Դուք ևս պետք է մոտ մնաք Տիրոջը պահելով Աստծո պատվիրանները: Ես վկայում եմ, որ հետևողական հնազանդությունը փոքր բաներում, ինչպես օրինակ սուրբ գրությունները կարդալը, ամեն օր աղոթելը, Եկեղեցու ժողովներին հաճախելը, ապրող մարգարեների խորհուրդներին ականջ դնելը և ուրիշներին ծառայելը ձեզ կորակավորի Հոգու համար և այն հայտնության համար, որ այն բերում է:

**Նեփիի կողմից
ոգեշնչված որոշում
ընդունելու չորս
դասերը կարող
են նվազեցնել ձեր
երկյուղները և
մեծացնել առաջ
շարժվելու ձեր
վստահությունը:**

Կատարելությունը անհրաժեշտ նախապայման չէ անձնական հայտնության համար: Անհրաժեշտ նախապայման է ամենօրյա ապաշխարությունը (տես Հռովմայեցիս 9.23): Եթե ձեր ապաշխարությունը անկեղծ է և խորը (տես Վեմ 58.42-43), Քավության մաքրագործող ուժը կբերի Հոգին՝ առաջնորդելու ձեզ կյանքի ծանրակշիռ որոշումներում:



Նեփիի հավատքն
ու սերը Փրկչի
հանդեպ ակնհայտ
է Աստծո պատվի-
րաններին հնա-
գանդվելու նրա
օրինակից:

**ԵՐԿՅՈՒՂՆԵՐԸ
ՆՎԱԶԵՑՆԵԼՈՒ ԵՎ
ՎՍՏԱՀՈՒԹՅՈՒՆԸ
ՄԵԾԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ**

1. Հնազանդվեք
պատվիրաններին:
2. Առաջ գնացեք հավատքով
3. Ապրեք ներկայում
4. Ուրիշներից ուժ վերցրեք:

2. Առաջ գնացեք հավատքով

Պատկերացրեք ձեզ Նեփիի իրավիճակում: Ձեր հայրն ասում է ձեզ, որ Տերը պատվիրել է ձեր ընտանիքին թողնել ձեր հարստությունը և հեռանալ անապատ: Մի՞թե չէիք կամենա իմանալ ձեր ճանապարհորդության և նպատակակետի մասին:

Կարծում եմ Նեփին հիացած կլինեք, եթե Տերը հստակ բացահայտեր նրա ապագան: Բայց Աստված այդպես չգործեց Նեփիի հետ և Նա այդպես չի գործի ձեզ հետ:

Երբ Նեփիի ընտանիքը ճանապարհորդում էր անապատում, նրան հրահանգներ էր տրվում միայն «Ժամանակ առ ժամանակ» (1 Նեփի 16.29; 18.1): Առջևում համոզվածությամբ տեսնելով իր կյանքի ճանապարհորդությունը, չէր տա նրան հոգեկան լարվածության և հավատք ձևավորող այն փորձառությունները, որոնք օգնեցին նրան դառնալ ավելի Քրիստոսաման մարդ:

Եթե դուք սպասում եք, որ Աստված բացահայտի, թե ինչ լուրջ գիտական աստիճանների հետամուտ լինեք, ում հետ ամուսնանաք, ինչ աշխատանք կատարեք, որտեղ ապրեք, արդյոք գնաք ավարտական դպրոց, և քանի երեխա

ունենաք, դուք հավանական է երբեք չթողնեք ձեր բնակարանը: Ես վկայում եմ, որ անձնական հայտնությունը կգա միայն «Ժամանակ առ ժամանակ»:

Մեր Երկնային Հայրը կամենում է, որ մենք աճենք, իսկ դա ներառում է փաստերը կշռադատելիս մեր ունակությունները զարգացնելը, դատողություններ անելը և որոշումներ կայացնելը: Սակայն Նա նաև հրավիրում է մեզ բերել մեր որոշումները Իր առջև աղոթքով (տես Վեմ 9.7–9): Երեց Ռիչարդ Գ. Սքոթ՝ Տասներկու Առաքյալների Քվորումից. ուսուցանել է, որ մեր աղոթքների պատասխանները գալիս են *«երեք»* ուղիներից մեկով:²

Հաստատող համոզվածություն

«Առաջինը», ասել է Երեց Սքոթը, «դուք կարող է զգաք խաղաղություն, հանգստություն և համոզվածություն, որոնք հաստատում են, որ ձեր որոշումը ճիշտ է»:³ Կինս՝ Քրիսթին և ես պարզել ենք, որ կյանքի վրա ազդող վճռական որոշումների համար համոզվածությունը կարող է հաղորդվել սուրբ գրությունների միջոցով, հաճախ տաճարային երկրպագությունից հետո:

Օրինակ շատ խորհելուց և աղոթելուց հետո, մենք որոշեցինք թողնել մեր երազած տունը Տեխասում, ընդունել այլ աշխատանքի անցնելը և տեղափոխվել վեց փոքրահասակ երեխաների հետ Բեյջինգ, Չինաստան: Բայց մենք ծայրահեղորեն ցանկանում էինք հոգևոր հաստատում ստանալ այդպիսի կարևոր քայլի համար: Աստվածային համոզվածությունը եկավ մեզ տաճարում, երբ մենք կարդացինք հետևյալ խոսքերը Վարդապետություն և Ուխտերում. «Դա իմ կամքն է, որ դու պետք է . . . շատ չլմնաս այս վայրում, . . . մի մտահոգվիր քո ունեցվածքի համար: Գնա արևելյան հողերը» (Վեմ 66.5–7):





**Կարծում եմ Նեփիին հիացած
կլիներ, եթե Տերը հստակ բա-
ցահայտեր նրան իր ապա-
գան: Բայց Աստված այդպես
չգործեց Նեփիի հետ և Նա
այդպես չի գործի ձեզ հետ:**

Սուրբ գրություններում Հիսուս Քրիստոսի ձայնը, ուղեկցվելով Սուրբ Հոգու հզոր զգացողություններով, հաստատեց, որ Չինաստան տեղափոխվելու մեր որոշումը ճիշտ էր:

Անորոշության զգացում

Երկրորդ ուղին, որ Երկանյին Հայրը պատասխանում է աղոթքներին՝ «անորոշության զգացումն է, մտքի արգելակումը, ցույց տալով, որ մեր ընտրությունը սխալ է»:⁴

Տայվանում իմ միսիայից հետո, ես կարծում էի միջազգային օրենքը լավ կարիերայի ընտրություն կլիներ: Երբ Քրիսթին և ես մտածեցինք այդ հնարավոր ապագայի մասին, մենք հասկացանք, որ առջևում ունեինք ևս հինգ տարիների թանկարժեք կրթություն:

ԱՄՆ-ի տնտեսությունը խորն անկման մեջ էր և մեր ֆոնդերը սահմանափակ էին, այսպիսով մենք մտածեցինք որ Օդային ուժերին ROTC միանալը իմաստուն ընտրություն կլիներ՝ վճարելու իմ ուսման համար: Բայց, երբ ես հանձնեցի պահանջվող ստուգարքները և լրացրեցի փաստաթղթերը,

մենք ուղղակի չկարողացանք հարմարավետ զգալ այդ պարտավորությունը վերցնելիս: Ոչ մի մտքի արգելակում կամ մութ զգացումներ չեկան, միայն խաղաղության բացակայություն:

Այդ թվացյալ անտրամաբանական ֆինանսական որոշումը մասամբ ոգեշնչվեց, որովհետև ես կղաճնայի սոսկալի փաստաբան:

Աստծուն վստահել

Աստված պատասխանում է աղոթքներին երրորդ ձևով՝ ոչ մի պատասխան: «Երբ դուք արժանի եք ապրում և ձեր ընտրությունը համապատասխանում է Փրկչի ուսմունքներին դուք պետք է գործեք», ասել է Երեց Սքոթը, «առաջ զնացեք հավատքով»:⁵

Արույրե թիթեղները ձեռք բերելու Նեփիի վերջին փորձը ցույց է տալիս, թե ինչպես է պետք շարունակել Աստծուն վստահելով: Նա գրել է.

«Եվ ես առաջնորդվում էի Հոգու կողմից՝ նախապես չիմանալով բաները, որոնք պետք է անեի:

Այնուամենայնիվ ես առաջ զնացի» (1 Նեփի 4.6–7):

Պահեր կգան ձեր որոշումների տասնամյակում, երբ դուք այլևս չեք կարող հետաձգել և պետք է գործեք: Ես սովորեցի այդ, երբ Երեց Դավիթ Ն. Օուփսը՝ Տասներկու Առաքյալների Քվորումից, ուսուցանեց. «մենք հուշումներ կստանանք Հոգուց, երբ անենք այն ամենը ինչ կարող ենք, ավելի շուտ, երբ մենք դրսում արևի տակ աշխատում ենք, քան սովերում նստած աղոթում ենք՝ առաջին քայլն անելու վերաբերյալ ուղղորդման համար»:⁶

Ինչպես Նեփիի դեպքում, հոգին պատշաճ ժամանակին կհաստատի կամ կնախագուշացնի ձեր ընտրած ուղու վերաբերյալ:

3. Ապրեք ներկայում

Նեփիի նվիրվածությունը դեպի խոստացված երկիր ճանապարհորդությանը բացարձակ հակադրության մեջ էր գտնվում իր եղբայրների՝ Լամանի և Լեմուելի հետ: Նրանք որոշում կայացրեցին գնալ, բայց նրանց սրտերը երբեք չթողեցին Երուսաղեմը: Նեփին վերանորոգում էր իր աղեղը՝ ուտելու բան որսալու համար և ձգտում հանքաքար գտնել նավը կառուցելու համար, մինչ նրա եղբայրները կարծես թե հանգստանում էին վրանում:

Այսօր աշխարհը շատ Լամաններ և Լեմուելներ ունի: Բայց Տերը կարիք ունի Նեփիի նման նվիրված տղամարդկանց և կանանց: Դուք ավելի մեծ առաջընթաց կունենաք կյանքում, երբ դուք ամբողջապես նվիրվեք ձեր որոշումներին և ձգտեք աչքի ընկնել ձեր ներկա հանգամանքներում, նույնիսկ եթե դուք բաց աչքով նայում եք դեպի ապագան:

Նեփին օրինակ է հանդիսանում Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնի իմաստուն խորհրդի համար. «Անըջելով անցյալի մասին և տենչալով ապագայի համար կարող է հարմարավետություն տալ, բայց

չի կարող գրավել ներկայումս ապրելու տեղը: Մա է մեր հնարավորության օրը, և մենք պետք է որսանք այն»:⁷

4. Ուրիշներից ուժ վերցրեք

Նույնիսկ հետո, երբ մենք որոնել ենք Հոգին, առաջ ենք ընթացել մեր որոշման մեջ և լիովին նվիրված ենք եղել դրան, կասկածներ միևնույն է կարող են ծագել և ստիպել մեզ հարցականի տակ դնել մեր որոշումը: Այդպիսի հանգամանքներում ընտանիքի հավատարիմ որևէ անդամ կամ ընկեր կարող է խորհուրդ և ուժ տալ՝ մնալու ուղու վրա: Կարծում եմ ճանապարհորդության ընթացքում Նեփիի



Այդպիսի հանգամանքներում ընտանիքի հավատարիմ որևէ անդամ կամ ընկեր կարող է խորհուրդ տալ և ուժ՝ մնալու ուղու վրա:

հարսնացուն դարձավ նրա վստահելի խարիսխը:

Նեփիի կնոջ հանդեպ շնորհակալությամբ լցվեցի, երբ այցելեցի Եկեղեցու Պատմության Թանգարանը: Ես այնտեղ ցնցվեցի մի նկարից, որտեղ Նեփին կապված էր նավի կայմից, մինչև ոսկորները թրջված մոլեգնող փոթորիկից:⁸

Նեփիի կողքին էին նրա կինը և երեխաներից մեկը: Նա կրում էր նույն մարտահրավերներն ու փոթորիկը ինչպես Նեփին, բայց նրա աչքերը համարձակ էին և նրա ուժեղ ձեռքերը պաշտպանողական ձևով գրկել էին նրա ուսերը: Այդ պահին ես հասկացա, որ ես ևս օրհնված էի՝ ունենալով հավատարիմ կողակից, որն ուժ էր տալիս ինձ իմ փորձությունների ժամանակ: Ես հուսով եմ, որ ես նույնպիսի ուժ եմ նրա համար:

Եղբայրներ, պահպանելով և զորացնելով հոգևոր ուժը, որը դուք զարգացրել էք (կամ դեռ կզարգացնեք) որպես միախմբված կամ որևէ արդար այլ ծառայությունում, ձեր լավագույն արժանիքն է՝ ցանկալի ամուսին և հայր դառնալու համար: Քույրեր, հոգևոր զգայունությունը,

հավատքը և Հիսուս Քրիստոսին հետևելու քաջությունը, որպես կին և մայր ձեր լավագույն հատկանիշներից են:

Ես կոչ եմ անում ձեզ, դառնալ այնպիսի անձնավորություն, որպեսզի ձեր ներկա կամ ապագա ամուսինը կարողանա իմաստուն խորհուրդ և ուժ վերցնել: Առաքինի տղամարդը և արժանավոր կինը, ովքեր կնքվել են ժամանակի և ողջ հավերժության համար տաճարում, կարող են անել դժվար բաներ որպես հավասար զուգընկերներ:

Ես խոստանում եմ, որ եթե դուք կիրառեք Նեփիից և ժամանակակից մարգարեներից վերցված դասերը՝ որոշումներ կայացնելիս, դուք «ժամանակ առ ժամանակ» կառաջնորդվեք անձնական հայտնությամբ: Երբ դուք առաջնորդվեք ձեր որոշման տասնամյակում, թող որ դուք Նեփիի նման ունենաք հավատք ասելու:

Եվ ես առաջնորդվում էի Հոգու կողմից՝ նախապես չիմանալով բաները, որոնք պետք է անել:

Այնուամենայնիվ ես առաջ գնացի» (1 Նեփի 4.67): ■

2014թ. փետրվարի 4-ին *Բրիզան Յանգ Համալսարանում «Այնուամենայնիվ ես առաջ գնացի» ելույթից: Մեղեքին լեզվով ողջ հոդվածը կարդալու համար այցելեք speeches.byu.edu կայքը:*

ՀՂՈՄՆԵՐ

1. Robert D. Hales, "To the Aaronic Priesthood: Preparing for the Decade of Decision," *Liahona*, May 2007, 48.
2. Ռիչարդ Գ. Սքոթ, «Օգտագործել աղոթքի մեծագույն պարզը», *Լիստիկա*, մայիս 2007, 10:
3. Ռիչարդ Գ. Սքոթ, «Օգտագործել աղոթքի մեծագույն պարզը», 10:
4. Ռիչարդ Գ. Սքոթ, «Օգտագործել աղոթքի մեծագույն պարզը», 10:
5. Ռիչարդ Գ. Սքոթ, «Օգտագործել աղոթքի մեծագույն պարզը», 10:
6. Դավիթ Հ. Օուքս, «Բր իսկ ժամանակին, Իր իսկ ձևով», *Լիստիկա*, Օգ. 2013, 26:
7. Թոմաս Ս. Մոնտոն, «Գանձի որոնումներում», *Լիստիկա*, մայիս 2003, 20:
8. Stu Helpmeet, by K. Sean Sullivan, in "The Book of Mormon: A Worldwide View," *Liahona*, Dec. 2000, 37.



ՓՆՏՐԵՔ ՆՐԱՆ

«Ի՞նչ եք կենդանին մեռելների մէջ որոնում:
Այստեղ չէ, այլ հարություն առավ»:
(Ղուկաս ԻԴ.5-6)



ՋՈՋԵՖԻ ՇՆՈՐՀԻՎ

*Բացահայտեք վեց ուղիներ, որոնց միջոցով ձեր
կյանքը տարբեր է ի շնորհիվ Մարգարե Ջոզեֆ Սմիթի
(կամ կարող է տարբեր լինել):*

Թեղ Բարևս

Քահանայության Բաժին

Ջոզեֆ Սմիթը մահացել է 170 տարի առաջ: Նա ապրեց ընդամենը 38 տարի, անցկացնելով այդ ժամանակի մեծ մասը այնպիսի տեղերում, որոնք այնքան անհայտ են, որ դուք հավանաբար չեք գտնի դրանք որևէ քարտեզի վրա, բացի ամենամանրամասն քարտեզներից: Եվ դուք գուցե ծանոթ եք շատ բաների հետ, որոնք նա արեց իր կյանքում: Բայց երբևիցե դուք մտածե՞լ եք, թե ինչպես են դրանք ազդել ձեզ վրա անձնապես: Չնայած այդ ուղիները խիստ բաժանաբար են՝ հաշվելու համար, դուք կարող եք սկսել այս վեցով:

Ջոզեֆ Սմիթի շնորհիվ.

1. Դուք հասկանում եք, թե ով է Աստված և Հիսուս Քրիստոսն իրականում:

Եթե նույնիսկ, Ջոզեֆ Սմիթի միջոցով չէ դա, դուք գուցե այնուամենայնիվ հավատում եք Հայր Աստծուն և Հիսուս Քրիստոսին: Դուք գուցե ունեք Աստվածաշնչի վայությունները: Բայց մտածեք, թե որքան ավելի խորն է ու ավելի հարուստ ձեր հասկացողությունը այն բանի շնորհիվ, ինչ Ջոզեֆ Սմիթը վերականգնեց՝ Մորմոնի Գրքի, Վարդապետություն և Ուխտերի և Թանկագին Մարգարիտի համարձակ, հաստատող վկայություններով: Օրինակ, դուք գիտե՞ք մի բան, որը աշխարհի մեծ մասը չգտիտի, որ հարություն առած Փրկիչը հայտնվեց Ամերիկաներում՝ ապացուցելով Իր խոսքերով, որ Նա ոչ միայն «Իսրայելի Աստվածն է [այլ նաև] ողջ երկրագնդի Աստվածը» (3 Նեփի 11.14):

Մտածեք, թե որքան է ձեր վկայությունը երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի հանդեպ զորանում Նեփիի, Ալմայի, Մորմոնիի հզոր վկայություններից, չեմ ասում էլ Ջոզեֆ Սմիթի մասին, ով հայտարարեց. «Նա ապրում է»: «Քանզի մենք տեսանք նրան, նույնիսկ Աստծո աջ կողմում» (ՎևՈՒ 76.22–23): Մի օրում, երբ հավատքն առ Աստված և Հիսուս Քրիստոսը մարտահրավերի է ենթարկվում և հաճախ լքվում, ինչպիսի օրհնություն է ունենալ այս լրացուցիչ լույսը:





2. Դուք գիտեք, որ Աստծո զավակն եք, և այդպես՝ բոլոր մյուսները ևս:

Երևի ամենակարևոր ճշմարտությունը, որ Ջոզեֆ Սմիթը վերականգնեց, Աստծո հետ մեր փոխհարաբերության վերաբերյալ ճշմարտությունն էր: ¹ Նա տառացիորեն մեր Հայրն է: Երբևէ կանգ առե՞լ եք մտածելու այն բաների մասին, որոնք բխում են այդ փաստից: Դա փոխում է ուղին, թե ինչպես եք տեսնում ինքներդ ձեզ, անկախ նրանից, թե ինչ է մտածում աշխարհը ձեր մասին, դուք գիտեք, որ Աստծո սիրելի զավակն եք, Նրա հատկանիշներով ձեր ներսում: Դա փոխում է ուղին, թե ինչպես եք տեսնում ուրիշներին՝ հանկարծակի բոլորը, —բոլորը— ձեր եղբայրներն ու քույրերն են: Այն փոխում է ուղին, թե ինչպես եք նայում բուն կյանքին, բոլոր դրա ուրախությունները և փորձությունները Երկնային Հոր ծրագրի մասն են կազմում՝ օգնելու դառնալ Իր նման: Վատ չէ, որ ինչ որ բանի առթիվ, դուք երգում եք Երեկոյաների Միությունում: ²



3. Ձեր ընտանիքը կարող է հավերժական լինել:

Ինչո՞ւ են այդքան մարդիկ շփոթված ամուսնության և ընտանիքի կարևորության վերաբերյալ: Միգուցե այն պատճառով, որ չգիտեն վարդապետությունը, որը վերականգնվել էր Ջոզեֆ Սմիթի միջոցով, որ ամուսնությունն ու ընտանիքը կարգվել են Աստծո կողմից և նախատեսված են հավերժական լինելու: (տես Վևու 49.15, 132.7): Սրանք մարդկանց կողմից հորինված ավանդույթներ չեն, որը մեր հասարակությունն է աճեցրել, դրանք երկնքի հավերժական կարգի մասն են կազմում: Եվ ի շնորհիվ քահանայության բանալիների և տաճարային արարողությունների, որոնք վերականգնվել են Ջոզեֆ Սմիթի միջոցով, ձեր հավերժական ընտանիքը կարող է սկսել այստեղ՝ երկրի վրա:



4. Քահանայությունը և նրա օրհնությունները մատչելի են ձեզ համար:

Քանի որ Աստված վերականգնեց Իր քահանայությունը Ջոզեֆ Սմիթի միջոցով, դուք կարող եք մկրտվել և ստանալ Սուրբ Հոգու պարգևը: Դուք կարող եք ձգտել բժշկության, մխիթարության, և առաջնորդության քահանայության օրհնություններին: Դուք կարող եք սրբազան ուխտեր անել, որոնք կապում են ձեզ Աստծո հետ: Եվ դուք կարող եք նորոգել ձեր ուխտն ամեն շաբաթ, երբ դուք ճաշակեք հաղորդությունից: Քահանայության արարողությունների միջոցով Աստծո զորությունը մտնում է ձեր կյանք (տես Վևու 84.20–21): Սրանցից ոչ մեկը հնարավոր չէր լինի առանց այն աշխատանքի, որն իրականացվեց Ջոզեֆ Սմիթի միջոցով:



5. Դուք ազատ եք վնասակար նյութերից հակվածությունից:

Կամ առնվազն կարող եք լինել, եթե հնազանդվեք Ջոզեֆի հայտնությանը, որը ստացվել է 1833 թվականին, նախքան բժշկությունը կապացուցեր, որ թոքերի քաղցկեղն առաջանում է ծխախոտից, իսկ ոգելից խմիչքները կապված են լյարդի հիվանդության հետ: Երբ մարգարե ունեք, ով հայտնում է Աստծո իմաստությունը, ինչու սպասել աշխարհի իմաստությանը, որպեսզի ուղղեք բաց թողածը: Իմաստության Խոսքը ցույց է տալիս, որ Աստված հոգ է տանում ոչ միայն մեր հոգիների համար, այլ նաև մեր մարմինների համար (տես Վեճ 89): Ի վերջո, ինչպես ցույց տվեց Ջոզեֆ Սմիթի հայտնությունները, մարմին ունենալը մեզ դարձնում է ավելի և ոչ թե սակավ նման մեր Երկնային Հորը, ով նույնպես մսից և ոսկորներից մարմին ունի (տես Վեճ 130.22):

ՄԻԱՑԵՔ ԶՐՈՒՅՑԻՆ

ԻՆՉԻ՝ ՄԱՍԻՆ ՊԵՏՔ Է ԽՈՐՀԵԼ ԿԻՐԱԿԻ ՕՐԿԱ ՀԱՄԱՐ

- «Մարգարե Ջոզեֆ Սմիթի վերաբերյալ ինչպե՞ս կարող եմ գորացնել իմ վկայությունը»:
- Ի՞նչպես կարող եմ ավելի մեծ երախտագիտություն ցույց տալ ապրող մարգարեի հանդեպ՝ իմ խոսքերի և գործողությունների միջոցով:

ԻՆՉ ԿԱՐՈՂ ԵՍ ԴՈՒ ԱՆԵԼ:

- Եկեղեցում, ձեր ընտանիքի և ընկերների հետ, կամ հասարակական լրատվամիջոցների միջոցով, կիսվեք, թե ինչպես է Մարգարե Ջոզեֆ Սմիթն ազդել ձեր կյանքի վրա:
- Ճիշտ ինչպես Ջոզեֆ Սմիթն արեց, հարցրեք Երկնային Հորը ձեր հարցերը: Ժամանակ տրամադրեք ծնկի գալու աղոթքով և Նրանից առաջնորդություն խնդրելու: Այնուհետև, սպասեք և լսեք գաղափարներ կամ զգացումներ: Գրի առեք ձեր մտքերը ձեր օրագրում:
- Կարողացեք Տասներկու Առաքյալների Զվորումից Երեց Նիլ Լ. Անդերսենի «Ջոզեֆ Սմիթ» ելույթը, 2014 թվականի հոկտեմբերի գերագույն համաժողովից: Պլան կազմեք կիրառելու երկու գաղափարները, որոնք նա տվել է Ջոզեֆ Սմիթի մասին ձեր վկայությունը կառուցելու և կիսվելու վերաբերյալ:



6. Դուք կարող եք ինքնուրույն իմանալ ճշմարտությունը Սուրբ Հոգու միջոցով:

Երբ երիտասարդ Ջոզեֆ Սմիթը մտավ Սրբազան Պուրակ 1820 թվականին, շատ եկեղեցիների ընդհանուր համոզմունքն էր, որ հայտնությունը անցած բան է: Ջոզեֆի Առաջին Տեսիլքն ապացուցեց, որ դա սխալ է: Երկինքները բաց են ոչ միայն մարգարեների համար: Ամեն մեկն, ով հարց

ունի կարող է ստանալ պատասխան խոնարհ, ջանասեր որոնման միջոցով (տես Վեճ 42.61; 88.63): Օրինակ դուք կարող եք պարզել ձեզ համար, թե Ջոզեֆ Սմիթը Աստծո մարգարե է՞, նույն ձևով ինչպես Ջոզեֆը պարզեց Աստծուն Իրեն՝ հարցնելով:

Այս ցուցակն ընդամենը սկիզբն է: Ի՞նչ կավելացնեիք դուք: Ի՞նչպես է ձեր կյանքը տարբեր Ջոզեֆ Սմիթի շնորհիվ: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Տես *Եկեղեցու Նախագահների ուսմունքները՝ Ջոզեֆ Սմիթ (2007)*, 37-44:
2. «Աստծո զավակն եմ», *հիմներ և մանկական երգեր*, էջ 58:

«Ապրող մարգարեն ավելի կարևոր է

մեզ համար, քան մահացած
մարգարեն:...

... Ադամին տրված Աստծո հայտնությունը չիրահանգեց Նոյին, թե ինչպես տապան կառուցեր: Նոյին անհրաժեշտ եղավ իր սեփական հայտնությունը: Ուստի ամենակարևոր մարգարեն, ինչ վերաբերում է ինձ և ձեզ մեր օրերում և դարում ապրողն է, ում Տերը ներկայումս հայտնում է Իր կամքը մեզ համար: Ուստի ամենակարևոր ընթերցանությունը, որ մենք կարող ենք անել մարգարեի ամեն մի խոսքն է, որը պարունակվում է ամեն ամիս մեր Եկեղեցու ամսագրերում: Մեր քայլերի կարգախոսները վեց ամիսը մեկ գտնվում են գերագույն համաժողովի ելույթներում, որոնք տպագրվում են *[Լիահոնա]* ամսագրում...

Ջգուշացեք նրանցից, ովքեր կոնեն մահացած մարգարեների
ապրող մարգարեների դեմ, քանի որ **ապրող մարգարե-
րենքը միշտ վերցնում են առաջ-
նությունը»:**■

*Նախագահ Էդուար Թափոն Քինսոն (1899–1994),
“Fourteen Fundamentals in Following the Prophet”
(Brigham Young University devotional,
Feb. 26, 1980), 2,
speeches.byu.edu.*

Կիսվեք ձեր գաղափարներով:

Ձեզ համար ի՞նչ է նշանակում հաստատել ապրող մարգարեներին:
Կիսվեք ընտանիքի և ընկերների կամ հասարակական
լրատվամիջոցների հետ ձեր գաղափարներով:




Հնազանդության ՓՐԿՉԻ ՕՐԻՆԱԿԸ

Նրա օրինակը մեզ բոլորիս համար
հետևելու ձև է սահմանում:

«Փրկչի կյանքից սովորած բոլոր դասերից ոչ մեկն այնքան պարզ և զորավոր չէ, որքան հնազանդության դասը» ուսուցանել է Երեց Ռոբերտ Դ. Հեյլսը՝ Տասներկու Առաքյալների Քվորումից 2014թվականի ապրիլյան համոդովի ժամանակ: Փրկչի օրինակն ուսուցանում է մեզ ոչ միայն *ինչու է* հնազանդությունը կարևոր Երկնային Հոր համար, այլ նաև *ինչպես* մենք կարող ենք հնազանդ լինել: Երբ վերանայեք հետևյալ օրինակները՝ Նրա ծառայությունից, մտածեք, թե ինչպես նրանք կարող են հետևելու համար մի ուղի պատրաստել ձեզ համար ձեր կյանքում:

«ԻՄ
ԿԱՄՔԸ
ՉԵՄ ՈՐՈՆՈՒՄ,
ԱՅԼ ԻՆՉ
ՈՒՂԱՐԿՈՂ
ՀՕՐ ԿԱՄՔԸ»

(Հովհաննես Ե.30; տես նաև
Հովհաննես Զ.38, Ը.28-29; ԺԴ.31)



[illegible]



1



6



7

յՅՆՆՈՒՄՆԵՐԻՆ

«[ԹՐԻԱՏՈՍԻ]
ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ԸՆԹԱՑՔՈՒՄ «ՆԱ
ՏԱՐԱԿ
ԳԱՅԹԱԿ
ՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՍԱԿԱՅՆ ՈՒՇՔ ՉԴԱՐՉՐԵՑ
[ԴՐԱՆՑ]

8

[ՎԵԿՈՒ 20.22]:
Երեց Ռոբերտ Դ. Շեյլս



4



5



9

7. Հիսուսը միշտ հնա-
զանդ լինելով Իր Հորը,
գնաց հոգևոր աշխարհ և
այնտեղ կազմակերպեց
միսիոներական աշխա-
տանքը (տես Ա Պետրոս
Գ.18–20; 4.6):

8. Հիսուսը գայթակ-
հության ենթարկվեց
սատանայի կողմից, բայց
նա անձնատուր չեղավ
(տես Մատթեոս Դ.1–11; Վևու
Ի.22):

9. Նա շարունակում է
կատարել Հոր կամքը և
ղեկավարել Եկեղեցին
(տես Զոգե՛՛՛ Սմիթ–Պատմու-
թյուն 1.16–17, Վևու 19.2, 24):



ՀՐՇԵՋՆԵՐ ԵՎ ԱՍՏԾՈ ՄՊԱՌԱՋԻՆՈՒԹՅՈՒՆԸ

Խաղաղ օր էր իմ աշխատանքի վայրում, որտեղ ես կամավոր հրշեջ էի, այսպիսով ես որոշեցի կարդալ Մորմոնի Գիրքը: Երբ իմ աշխատակիցներից մեկը տեսավ ինձ կարդալիս, նա հարցրեց, թե արդյոք գիտեի, թե ինչպես մենք պետք է հազնենք Աստծո սպառնալիցությունը արդի ժամանակներում: Երբ մենք խոսում էինք, հնչեց ահազանգ: Հրդեհ էր բռնկվել մոտակա խանութում:

Մենք արագ հազանք հակահրդեհային համազգեստը և ուղիղ գնացինք այնտեղ: Բոցերը վիթխարի էին, և երբ մենք մոտենում էինք խանութին, ինչ որ բան պայթեց դեպի մեր ուղղությամբ: Բոցերը մեզ շրջափակեցին: Պայթյունը մի քանի րոպե շփոթեցրեց ինձ և իմ գործընկերոջը: Բայց ի շնորհիվ մեր սարքավորումների և մեր պաշտպանական հագուստների, մենք վնասվածքներ չստացանք:

Երբ մենք վերադարձանք դեպի կայան, հրդեհը հանգցնելուց հետո, ես հարցրեցի իմ գործընկերոջը, թե նա հիշո՞ւմ էր Աստծո սպառնալիցության մասին իր հարցը: Նա ասաց, որ հիշում էր, և ես բացատրեցի, որ Աստծո սպառնալիցությունը նման է մեր հակահրդեհային պաշտպանական հանդերձանքին: Մենք միշտ պետք է այն կրենք, որպեսզի դիմանանք հակառակորդի հզոր հարձակումներին: Եթե պահենք պատվիրանները, մենք կօրհնվենք Աստծո սպառնալիցության պաշտպանական զորությամբ, և Մուրբ Հոգին կլինի մեր ուղեկիցը: ■

Ֆերնանդո դե լա Ռոզա Մարրոն, Մեքսիկա



ԻՄ ՍԻՐԵԼԻ ՍՈՒՐԲ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ա Թագավորաց 16.7: «ՄԱՐԴԸ ԱՅՆՊԵՍ ՉԻ ՏԵՍՆՈՒՄ, ԻՆՉՊԵՍ ՏԵՐԸ. ՈՐՈՎԷՏԵՎ ՄԱՐԴԸ ՏԵՍՆՈՒՄ Է ԱՉՔԻ ԱՌԱՋԻՆԸ, ԲԱՅՑ ՏԵՐԸ ՍՐՏԻՆ Է ՆԱՅՈՒՄ» (Ա ԹԱԳԱՎՈՐԱՑ ԺԶ.7):

Մինչև Եկեղեցուն միանալը ես միշտ ինձ համարում էի սովորական ունակություններով սովորական մարդ: Ես զգում էի, որ ոչ մի արժեքավոր բան չունեի առաջարկելու: Ես վախենում էի ցույց տալ մարդկանց, թե ով եմ ես այն պատճառով, որ վախենում էի մերժված և վիրավորված լինել: Ես կարծում էի, որ ամեն մեկը իմ շրջապատում ավելի ուժեղ էր, ավելի խելացի և ավելի լավը, քան ես:

Բայց բոլոր այս տեսակետները փոխվեցին, երբ ես դարձա Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամ: Ես իմացա, որ մենք բոլորս Աստծո զավակներն ենք և մենք ժառանգել ենք աստվածային հատկանիշներ: Ես այժմ հասկանում եմ, որ չկա որևէ մրցություն, թե ով է ավելի խելացի, ավելի հարուստ կամ ավելի լավ արտաքինով: Տիրոջ աչքում մենք բոլորս հավասար հիմքերի վրա ենք և Նա է, որ դատում է՝ ոչ թե մեր ֆիզիկական հատկանիշների վրա հիմնվելով, այլ մեր հնազանդության և Իր սահմանած ուղու հետևելու ցանկության վրա: ■

Ջոան Ազունեսա, Ֆիլիպպիններ

ԿԱՇԽԱՏԵ՞Ք ԿԻՐԱԿԻ ՕՐԸ:

Երբ ես 15 տարեկան էի, ես ձեռք բերեցի ուժեղ վկայություն Հիսուս Քրիստոսի ավետարանի մասին և այնքան երջանիկ էի Եկեղեցուն միանալու համար: Այդ ժամանակ ես աշխատում էի իմ ընտանիքին օգնելու համար: Այնուամենայնիվ, մկրտվելուց ոչ շատ անց, ես կորցրեցի իմ աշխատանքը:

Ես պետք է շուտ գտնեի նոր աշխատանք, որովհետև իմ ընտանիքը կախված էր ինձանից, բայց ամեն աշխատանքի համար, որ ես դիմում էի, պահանջում էին, որ ես աշխատեմ կիրակի օրերը: Ես մերժեցի շատ աշխատանքների առաջարկություններ, որովհետև ես գիտեի, որ պետք է լինեի Եկեղեցում կիրակի օրերին (տես Վեճ 59.9–10):

Երկու ամիս որոնելուց հետո, ես դեռ չկարողացա գտնել աշխատանք: Մայրս Եկեղեցու անդամ չէր, և չնայած նա հավատում էր Աստծուն, նա շատ բարկացած էր, որ ես ձեռքից բաց էի թողնում այդքան շատ աշխատանքներ:

Մի գիշեր նա նայեց ինձ արցունքն աչքերին և հարցրեց. «Ինչո՞ւ է Աստված թողնում, որ այս պատահի մեզ, երբ դու այդքան հավատարիմ ես անելիս այն ինչ ճիշտ է»:

Ես պատասխանեցի. «Մամ, ես չգիտեմ, թե ինչո՞ւ է սա

պատահում մեզ հետ, բայց ես իսկապես գիտեմ, որ ես անում եմ ճիշտը, և ես գիտեմ, որ Աստված կօրհնի մեզ դրա համար»:

Հաջորդ առավոտ մեկն ինձ բավականին մեծ գումար առաջարկեց՝ երկու օր որոշ ծանր բեռներ մի տնից մյուսը տեղափոխելու համար: Աշխատանքը ծանր էր, բայց երբ ես ստացա փողը, ես ուղիղ տուն գնացի և հղեցի երախտագիտության աղոթք: Ես շուտով լավ աշխատանք գտա, որը թույլ էր տալիս կիրակի օրը համազատանալ, և ես այդ ժամանակվանից սկսած անգործ չեմ մնացել:

Ես ուրախ եմ, որ սուրբ պահեցի Հանգստության օրը: Կյանքում շատ մարտահրավերներ կան, բայց ես գիտեմ, որ եթե մենք ձգտում ենք ուժեղ լինել, չնայած այդ մարտահրավերներին, Տերը կօրհնի մեզ: ■

Սահիլ Շարմա, Նիդերլանդներ





**Երեց
Նիլ Լ. Աղադրսեն**

Տասներկու
Առաքյալների
Զվորումից

ԻՆՉՊԵՍ ԼԻՆԵԼ ԻՄԱՍՏՈՒՆ

Այսօրվա տեղեկատվության մակընթացության ալիքի մեջ, մենք սուր կարիք ունենք իմաստության, իմաստություն՝ **տնտեսականորեն և զանազանելու**, թե ինչպես կիրառել այն, ինչ մենք սովորում ենք:

Եկեք հիշենք

1. Մենք պետք է ձգտենք իմաստության:
2. Իմաստությունը բազմակողմանի է և զալիս է տարբեր չափերով և գույներով:
3. Վաղ ձեռք բերված իմաստությունը բերում է վիթխարի օրհնություններ:
4. Իմաստությունը մի ոլորտից չի կարող փոխանցվել մեկ այլ ոլորտ:
5. Աշխարհի իմաստությունը, չնայած շատ դեպքերում լինելով խիստ արժեքավոր, ամենաարժեքավորն է, երբ համեստորեն խոնարհվում է Աստծո իմաստության առջև:

Սուրբ գրությունները նկարագրում են երկու տեսակի իմաստություն՝ աշխարհի իմաստությունը և Աստծո իմաստությունը: Աշխարհի իմաստությունն ունի ինչպես դրական, այնպես էլ բացասական

բաղադրիչներ: Նկարագրելով ամենահոռետեսական գույներով, այն կարելի է բնորոշել որպես մասնակի ճշմարտություն՝ խառնված բանականության և շահարկման հետ, հասնելու եսասիրական կամ չար նպատակների:

Կա մեկ այլ տեսակի աշխարհիկ իմաստություն, որն այնքան էլ չարաղետ չէ: Իրականում, այն շատ դրական է: Այս իմաստությունը գիտակցաբար ձեռք է բերվում **ուսումնասիրության, խորհրդածման, դիտարկման և տքնաջան աշխատանքի միջոցով**: Այն արժեքավոր է և շատ օգտակար այն բաներում, որ մենք անում ենք: Բարի և օրինավոր մարդկանց այն զալիս է, երբ մենք անցնում ենք մեր մահականացու կյանքի փորձով:

Ավելի կարևոր է, որ իմաստությունը, որը բերում է հաջողություն աշխարհում, պետք է հոժար լինի ետ քաշվել Աստծո իմաստության առջև և չմտածել, որ այն կարող է փոխարինվել:

Ոչ բոլոր իմաստությունն է հավասար ստեղծվում: Մենք պետք է սովորենք, որ երբ հակասություն կա աշխարհի իմաստության և Աստծո իմաստության միջև, մենք պետք է **նստարկենք մեր կամքը Աստծո իմաստությանը**:

Առաջարկում եմ անդրադառնալ ձեր դեմ ծառացած որոշ խնդիրներին: Թղթի մեջտեղի մասով մի գիծ գծեք: Գրեք աշխարհի իմաստությունը ձախ կողմում, իսկ Աստծո իմաստությունը՝ աջ կողմում: Գրեք միմյանց հակասող խնդիրները:

Ի՞նչ ընտրություններ ենք դուք կատարում:

Վարդապետություն և Ուխտեր 45 բաժնում, որում խոսվում է այն իրադարձությունների մասին, որոնք տանում են դեպի Փրկչի Երկրորդ Գալուստը, Տերը կրկին պատմում է տասը կույսերի պատմությունը և ապա թողնում է մեզ այս խոսքերը. «Քանզի նրանք, ովքեր իմաստուն են և ընդունել են ճշմարտությունը,

և վերցրել են Սուրբ Հոգին որպես իրենց ուղեկից, և չեն խաբվել, - ճշմարիտ ասում եմ ձեզ, նրանք չափի կտրվեն և կրակի մեջ գցվեն, այլ պիտի մնան այդ օրը» (տես ՎեՌ 45.57):

Եկեք որոնենք Աստծո իմաստությունը: Հենց այժմ շատ բան կա սովորելու իմաստության մասին: Ես խոստանում եմ ձեզ, որ Տիրոջ օրհնությունները կայացնեն ձեզ, երբ դուք որոնեք իմաստություն՝ Աստծո իմաստությունը: Նա այնքան շատ է փափագում, որպեսզի կիսվի մեզ հետ իր իմաստությամբ: Եվ եթե մենք հնազանդ լինենք և աղոթքով լի և որոնենք այն, դա կգա: ■

2009թ. ապրիլի 10-ին Բրիզան Յանգ Համալսարանում կայացած հավաքի ելույթից:

ԻՆՉՊԵՍ ԵՔ ԴՈՒՅ ԿԻՐԱՌԵԼ ՍԱ:

Միշտ կա ընտրելու երկու հնարավորություն: Դուք կարող եք ընտրել այն, ինչ կամենում եք: Բայց դուք պետք է իմաստությամբ որոշեք: Ես կարող եմ ասել, որ Տիրոջ ընտրելը կարող է օգնել ձեզ ամեն օր և Սուրբ Հոգին ունենալ ձեր կողքին կարող է օգնել յուրաքանչյուր իրավիճակում: Այնպես կողմն ընտրելը կարող է տանել դեպի դժբախտ զգացողության, մի զգացում, որը կթվա երջանկության նման մի կարճ պահ, բայց հետո դուք կտեսնեք հետևանքները և դուք դառնորեն կզղջաք ձեր ընդունած որոշման համար: Մնացեք Տիրոջ կողմում: Դա միշտ չէ հեշտ, բայց արժե դա անել:

Սամուել Զ., Ավստրիա

ԿԱՐԵՎՈՐԸ



Արդյոք ընդունելի կլինի՞ գնալ պարերի կամ երեկոյեաների, որտեղ գիտեմ վատ բաներ են տեղի ունենալու, որպեսզի լինեմ լավ օրինակ:

Նարցրեք ինքներդ ձեզ. «Ինչպիսի՞ օրինակ եմ իրա-
կանում մտածում լինել այդ իրավիճակում»: Եթե դուք
մտադիր եք գնալ ինչ որ տեղ, որտեղ կլինեն թմրա-
նյութեր կամ ոգելից խմիչքներ, անհամեստ զգեստներ,
գռեհիկ բառերով երաժշտություն կամ անպարկեշտ
պարեր, ինչպե՞ս եք ցույց տալու մարդկանց, թե որքան
զվարճություն կարող են նրանք ունենալ առանց այդ
բաների: Ի՞նչ կմտածեն ըստ երևույթին ձեր շրջապա-
տում գտնվող մարդիկ. «Մի՞թե դա հավատքի կամ
չափանիշների մեծ օրինակ է» կամ «Ինչո՞ւ է այդ անձ-
նավորությունն ընդհանրապես եկել»: Շատ դեպքերում,
դուք կլինեք շատ ավելի լավ օրինակ՝ ընդհանրապես
չգնալով, որովհետև դուք դիտավորյալ և գիտակցաբար
ձեզ չեք ենթարկի գայթակղության: ■

Ի՞նչ չափով սատանան ազդեցություն ունի իմ մտքերի վրա:

Սեր Երկնային
Հայրը հավաստիա-
նում է, որ մենք ունենք
բարոյական ազատ
կամք, բարին կամ չարը
ընտրելու ունակություն:
Նա չի ստիպի մեզ բարին
գործել, իսկ դեր չի կարող
ստիպել մեզ չարը գոր-
ծել (տես *Teachings of
Presidents of the Church*:

Joseph Smith [2007], 214):
Այսպիսով, ինչ վերաբե-
րում է ձեր մտքերին, դևն
ընդամենը այնքան ազդե-
ցություն ունի ձեր մտքերի
վրա, որքան որ դուք
կամենում եք տալ նրան:
Նախագահ Ջոզեֆ Մմիթն
ասել է. «Սատանան չի
կարող մեզ հարկադրել
իր գայթակղություններով,

մինչև մենք մեր սրտե-
րում չհամաձայնվենք
և անձնատուր չլինենք»
(*Teachings: Joseph Smith*,
213): Նա ասել է նաև.
«Դեր գործություն չունի
մեզ վրա, բացառությամբ
միայն այն դեպքում, երբ
մենք թույլ ենք տալիս
նրան» (214):

Բացի այդ, սուրբ
գրություններն ասում
են մեզ, որ «չկա ուրիշ
ոչ մեկը, բացի Աստծուց,
որ իմանա քո մտքերը
և մտադրությունները
քո սրտի» (Վեճ 6.16),
այսպիսով սատանան

իրականում չգիտի, թե
ինչ եք դուք մտածում: Նա
կարող է միայն առաջար-
կել գայթակղություններ և
հրապուրանքներ: Բայց,
եթե դուք ընտրեք դրանք,
նա ձեռք է բերում ավելի
մեծ ուժ ձեզ վրա և գայ-
թակղություններն ավելի
են ուժեղանում: Նույն
ձևով, եթե դուք դիմադ-
րում եք չարին և ընտրում
եք բարին, դուք կուժե-
ղացվեք և կօրինվեք: ■

Մեկ հոտ և ՄԵԿ ՀՈՎԻՎ

Ոչխարի հոտի համար ցանկապատն ուսուցանում է մեզ՝ Իր ժողովրդի համար Փրկչի հոգատարության մասին:



Հնադարյան ոչխարների փարախ

Ի՞նչ է սա. Հասարակ փարախ՝ ցանկապատված պատերով:

Նպատակը. Պաշտպանել ոչխարների հոտը գիշատիչներից և գողերից՝ հատկապես գիշերը:

Նյութեր և շինարարություն. Քարեր, սովորաբար փշերի հետ խոզանակաձև դրվում են պատերի կատարներին: Խիտ փշե թփուտները հաճախ օգտագործվում էին նաև ցանկապատ պատրաստելու ոչխարների ժամանակավոր ինքնաշեն փարախի համար: Քարանձավները երբեմն ծառայում էին, որպես ոչխարների փարախ՝ դրանց դեմ դնելով փոքրիկ ժայռաբեկոր կամ փշե արգելքներ դնելով դրանց առջև:

ԱՍՏՎԱԾԱՇՆ- ՉՅԱՆ ՓԱՍՏԵՐ

- Ոչխարները մեծ արժեք ունեին իրենց մսի, կաթի, ճարպի, բրդի, կաշիների և իրենց կոտորների համար և հիմնականում զոհաբերության կենդանի էին համարվում:
- Իսրայելում գայլերը, բորենիները, հովազները և շնագայլերն այն գիշատիչների թվում են, որոնց թիրախը ոչխարներն են: Հնադարյան ժամանակներում առյուծները և արջերը նույնպես բնակվում էին այդ տարածքում (տես Ա Սամուել ԺԷ.33-37):
- Հովիվներն օգտագործում էին մահակ ոչխարներին առաջնորդելու համար և մի գավազան ու պարսատիկ նրանց պաշտպանելու համար:
- Հովիվը առաջնորդում էր իր ոչխարներին դեպի արտավայրերը և ջուրը օրվա ընթացքում (տես Սաղմոս ԻԳ.1-2) և ետ՝ դեպի փարախը գիշերելու համար: Հովիվը սովորաբար հաշվում էր ոչխարներին, երբ նրանք վերադառնում էին, փնտրելով մոլորվածներին, եթե որևէ մեկը բացակայում էր: Այնուհետև նա պաշկում էր փարախի դռան մուտքում՝ նրանց պաշտպանելու համար:
- Հիսուս Քրիստոսը իրեն անվանում է Բարի Հովիվ (տես Հովհաննես Ժ.11-15), որովհետև Նա վայր դրեց Իր կյանքը մեզ համար: Նա նաև Իրեն համեմատեց ոչխարների փարախի դռան հետ (տես Հովհաննես Ժ.1-9), որովհետև Նրանով է, որ մենք հոգևոր սնուցում ենք ստանում, հանգստություն, խաղաղություն, փրկություն և վեհացում:
- Պողոս Առաքյալը համեմատել է Եկեղեցին ոչխարների հոտի հետ (տես Գործք Ի.28):

ՆԱԽԴՄԱՐԴՈՒՄԸ՝ ՊԵՅԿՈՂ ՉԵԲԵՆԻ, ՀԱՏԻՍՈ՝ «ՔՐԻՍՏՈՍԸ ԵՒ ՀԱՐՈՒՄՆԵՐԻ ՄԱՐԿԱՆԻ ՄԱՐԿԱՆ»



ԱՅՆ ՈՉԽԱՐՆԵՐ

Փրկիչը խոսել է «այլ ոչխարների մասին... որոնք այս փարախիցը չեն» (Հովհաննես Ժ.16), ինկատի ունենալով Նեփիացիներին և Լամանացիներին, ովքեր հեռու էին տարվել Իսրայելի տնից (տես 3 Նեփի 15.14-24): Նա խոսել է նաև Իսրայելի կորած ցեղերին այցելելու մասին (տես 3 Նեփի 15.20; 16.1-3):

Ինչ կարող ենք մենք սովորել

Ոչխարի փարախները,

այն տեղն է, որտեղ հոտն է հավաքվում: Որպես Եկեղեցու անդամներ, մենք կիսում ենք միասնության մի կապ՝ մեր հավատքի և մեր ուխտերի միջոցով, ինչպես նաև տառա-ցիորեն միասին հավաքվելու միջոցով: Առաջին Նախագահության Առաջին Խորհրդական՝ Նախագահ Հենրի Բ. Այրինգն ուսուցանել է. «Միասնության ուրախությունը, որը [Երկնային Հայրն] այնքան շատ է ուզում տալ մեզ, անհատական չէ: Մենք պետք է մյուսների հետ փնտրենք այն և արժանի լինենք դրան: Ուրեմն զարմանալի չէ, որ Աստված հորդորում է մեզ հավաքվել, որպեսզի Նա կարողանա օրհնել մեզ: Նա ուզում է, որ մենք հավաքվենք ընտանիքներում: Նա հիմնադրել է դասարաններ, ծխեր և ճյուղեր և պատվիրել է մեզ հաճախ հանդիպել միմյանց: Այդ հավաքներում, . . . մենք կարող ենք աղոթել և աշխատել միասնության համար, որը կբերի մեզ ուրախություն և կբազմապատկի մեր ծառայելու ուժը» («Մեր սրտերը միահյուսված որպես մեկ», *Լիսինգ*, նոյ. 2008, 69):

Ապահովության և անվտանգության վայր: Հիսուս Քրիստոսում մենք «գտնում ենք հանգստություն [մեր] հոգիներին» (Մատթեոս ԺԱ.29): Նրա Եկեղեցին «պաշտպանություն է և . . . ապաստան» (Վևու 115.6): Եվ ինչպես Տասներկու Առաքյալների Քվորումի Նախագահ Բոյդ Ք. Փաքերն է ուսուցանել. «Մենք գտնում ենք ապահովություն և անվտանգություն մեզ համար . . . հարգելով մեր կապած ուխտերը և ապրելով հնազանդության սովորական գործերով, որոնք պահանջվում են Քրիստոսի հետևորդներից» («Այս բաները ես գիտեմ», *Լիսինգ*, մայիս 2013, 7):

Հսկվում են հովվի կողմից: Հիսուս Քրիստոսը Բարի Հովիվն է, ով փրկում է մեզ: Նա տառապեց և մահացավ, որպեսզի մենք կարողանանք հաղթել մեղքին և մահին և վերադառնալ մեր Երկնային Հոր մոտ: Երբ մենք գալիս ենք դեպի Քրիստոս և հնազանդվում ենք Նրա պատվիրաններին, Նա օրհնում է, առաջնորդում և պաշտպանում մեզ ինչպես անհատապես, այնպես էլ որպես Իր ուխտի ժողովրդի: ■

«Ինչպե՞ս կարող եմ այնքան անկաշկանդ զգալ ինձ, որպեսզի իմ եպիսկոպոսի հետ խոսեմ ինձ մտահոգող խնդիրների կամ հար- ցերի մասին»:

Դուք գուցե նյարդայնացած զգաք խոսելու ձեր եպիսկոպոսի հետ այն բաների մասին, որոնց հետ մաքառում եք և դա նորմալ է: Մենք հաճախ նյարդայնանում ենք նոր փորձառություններից առաջ կամ մինչև մեծահասակի հետ խոսելը:

Բայց ձեր եպիսկոպոսը կանչված է Աստծուց: Նա կանչվել է, որովհետև նա Հիսուս Քրիստոսի նվիրված աշակերտն է: Նա կանի իր լավագույնը, լինելու բարի և հասկացող: Նրա նպատակն է օգնել ձեզ գալ դեպի Փրկիչը, որպեսզի դուք կարողանաք խաղաղություն գտնել: Սկզբում, դուք կարող է ամաչեք խոսել նրա հետ ձեր հարցերի կամ մեղքերի մասին, բայց նա ձեր մասին չի փոխի իր կարծիքը: Փաստորեն նա ուրախ կլինի, որ դուք ցանկություն ունեք բարեփոխվելու: Եվ նա գաղտնի կպահի ձեր գրույցները:

Դուք չպետք է ձեր բեռները միայնակ տանեք: Ձեր եպիսկոպոսը կօգնի ձեզ պատասխաններ գտնել ձեր հարցերին և եթե անհրաժեշտ է, օգնել ձեզ ապաշխարել և հաղթահարել Քրիստոսի Քավության միջոցով, հանցանքի զգացումները, հուսահատությունը կամ անարժանությունը:

Երբ դուք գրույցեք ձեր եպիսկոպոսի հետ, դուք կզգաք նրա սերը ձեր հանդեպ: Չնայած նա պատասխանատու է ողջ ծխի կամ ճյուղի համար, նրա գլխավոր կիզակետը երիտասարդ տղամարդկանց և կանանց բարվոք վիճակն է: Դուք չեք ձանձարացնում նրան օգնություն խնդրելով:

Դուք կարող եք աղոթել Երկնային Հորը ուժի և քաջության համար ձեր եպիսկոպոսի հետ գրույցելու համար: Նա լիազորել է ձեր եպիսկոպոսին օգնելու ձեզ և ձեր եպիսկոպոսը ցանկանում է դա անել: Եթե դուք զնաք բաց սրտով և ավելի լավ լինելու ցանկությամբ, դուք կտեսնեք, որ կթողնեք նրա գրասենյակը շատ ավելի լավ զգալով, քան մինչև այդ էիք զգում:

Նա վատ բան չի մտածի ձեր մասին:

Ձեր ծխի եպիսկոպոսին տրված է լիազորություն առաջնորդելու ձեզ ապաշխարության քայլերի միջոցով: Երբեմն ձեր եպիսկոպոսին դիմելը միակ ուղին է ձեզ համար լիովին ապաշխարելու Փրկչի միջոցով: Երբ ես կարիք ունեի իմ եպիսկոպոսի հետ խոսելու, նա օգնեց ինձ գտնել Փրկչին և հաղթահարել ամենախորը վերքը, որ ես երբևէ ունեցել եմ: Ձեր եպիսկոպոսը ուզում է ձեզ օգնել: Նրա կոչումն է հոգ տանել ձեզ համար, և նա ձեր մասին վատ չի մտածի, մի բանի պատճառով, որ դուք ուզում եք նրան տեսնել:

Մադիսոն Դ., 18 տարեկան, Յոտտա, ԱՄՆ

Ձեր եպիսկոպոսը պատրաստ է ձեզ օգնել

Ես սովորաբար անհարմար էի զգում հարցազրույցների ժամանակ, բայց ես ի վերջո հասկացա, որ իմ եպիսկոպոսը միշտ պատրաստ էր օգնել ինձ իմ խնդիրները լուծելու համար: Վստահեք ձեր եպիսկոպոսին, նա է հովիվը և ծուխը նրա հոտն է:

Ջեյմ Ռ. 19 տարեկան, Կոչաբալթա, Բոլիվիա



Նա չի դավաճանի ձեր վստահությանը

Ես հասկացա, որ եպիսկոպոսը ամենավստահելի մեծահասակն է, որից դեռահասը կարող է օգնություն հայցել: Նա երբեք չի դավաճանի ձեր վստահությանը, այն ամենը ինչով կիսվում եք նրա հետ, մնում է նրա գրասենյակում: Երբեմն այնքան դժվար է կիսվել ձեր խնդիրներով, բայց խոսելով դեմ առ դեմ ինչ որ մեկի հետ, ով սիրում է ձեզ և հոգ տանում ու ցանկանում լավագույնը ձեզ համար դա շատ ավելի հեշտ է դարձնում:

Նիկոլ Մ., 18 տարեկան, Ադառո, ԱՄՆ



Դուք կարող եք ապավինել նրան
 Ձեր եպիսկոպոսը կամ ճյուղի նախագահը Տիրոջ ճշմարիտ ծառան է։ Դուք կարող եք ապավինել նրան առաջնորդության համար, երբ ոգեշնչում եք որոնում Սուրբ Հոգուց և սուրբ գրություններից։ Դուք պետք է հասկանաք, որ եպիսկոպոսն այնտեղ է՝ օգնելու համար և որ նա առաջնորդվում է Աստծուց։

Ստանիսլավ Ռ., 19 տարեկան, Դոնեցկ, Ուկրաինա



Հիշեք, որ նա սիրում է ձեզ
 Եթե դուք ունեք ինչ որ բան, որն իսկապես ուզում եք քննարկել եպիսկոպոսի հետ, ավելի հեշտ կլինի սկզբում գրուցել նրա հետ դպրոցի և այլ ընդհանուր բաների մասին։ Եթե դուք նյարդայնանում եք, որովհետև պետք է խոսեք նրա հետ ապաշխարության հարցերի շուրջ, ուղղակի հիշեք, որ նա սիրում է ձեզ։ Դուք չպետք է նյարդայնանաք, թե նա ինչ կմտածի ձեր մասին, քանի որ նա ինչու պետք է վերևից նայի ձեզ վրա՝ Քրիստոսին ավելի մոտ լինել ցանականալու համար։

Ալի Դ, 17 տարեկան, Արիզոնա, ԱՄՆ



Աղոթեք որ իմանաք
 Հարցրեք ինքներդ ձեզ, թե ինչու եք անհարմար զգում՝ եպիսկոպոսի հետ խոսելու համար։ Մի՞թե կարծում եք, թե նա չի կարողանա օգնել ձեզ լուծելու ձեր խնդիրները։ Աղոթեք, որ իմանաք, որ եպիսկոպոսը սիրում է ձեզ և կանչվել է օգնելու ձեզ։

Ադամ Հ., 13 տարեկան, Կալիֆորնիա, ԱՄՆ

Նույնիսկ, եթե դուք սխալ եք գործել
 Կարող է ծանր լինել և ամոթալի խոստովանել ինչ որ բաներ ձեր եպիսկոպոսին, բայց երբ դուք դուրս եք գալիս այդ գրասենյակից, դուք հանգստացած կզգաք, և դուք կիմանաք, որ Երկնային Հայրը սիրում է ձեզ։ Նա ուզում է, որ դուք երջանիկ լինեք, նույնիսկ, եթե դուք սխալ եք գործել։

Սանդրա Վ. 16 տարեկան, Յոտա, ԱՄՆ

Նա այստեղ է՝ օգնելու համար
 Եպիսկոպոսը ձեր ծխի հովիվն է։ Հիշեք, որ նա կանի իր լավագույնը օգնելու ձեզ և նա ունի Աստծո գործունեությունը իր կողքին։ Եթե դուք վախենում եք, դուք կարող եք աղոթել ուժի համար, որպեսզի կարողանաք խոսել ձեր եպիսկոպոսի հետ։ Վերջում, դուք ուրախ կլինեք, որ գնացիք նրա մոտ և դա արժեք անել։

Սամուել Հ., 14 տարեկան, Արիզոն, ԱՄՆ

Այս թեմայի վերաբերյալ ավելի շատ տեղեկության համար, տես Կ. Մքոթ Գրոու. «Ինչու՞ և ինչ ես պետք է խոստովանեմ իմ եպիսկոպոսին» Լիաիոնա, հոկ. 2013, 59:



ՎՍՏԱՅԵՐ ՆՐԱՆ

«Խորհուրդ փնտրեք ձեր քահանայության առաջնորդներից,

հատկապես ձեր եպիսկոպոսից։ Նա գիտի չափանիշները և նա գիտի, թե ինչ ուսուցանի ձեզ։ Որոնք առիթներ նրա հետ լինելու համար։ Դուք կարող եք ակնկալել, որ նա կհարցնի սուր, հետախուզող հարցեր։ Վստահեք Նրան։ Ապավինեք Նրան։ Խնդրեք նրան, որ նա օգնի ձեզ հասկանալ, թե ինչ է Տերն ակնկալում ձեզանից։ Պարտավորվեք ապրել ըստ Եկեղեցու բարոյական չափանիշների։ Մեծահասակ առաջնորդի հետ իմաստալի փոխհարաբերությունը կենսական է օգնելու ձեզ բարոյապես մաքուր և արժանի պահելու համար»։

Elder M. Russell Ballard of the Quorum of the Twelve Apostles, "Purity Precedes Power," Ensign, Nov. 1990, 37.

ՀԱՋՈՐԴ ՀԱՐՑԸ

«Ինձ դպրոցում ծաղրում են ՎՕՍ լինելու համար։ Ես գիտեմ, որ պետք է պաշտպանեմ այն ինչին հավատում եմ, բայց դա այնքան դժվար է։ «Ինչպե՞ս կարող եմ այնքան խիզախ դառնալ, որպեսզի ասեմ այդ մարդկանց, որ նրանք դադարեն»։

Ձեր պատասխանը և, ցանկության դեպքում, բարձրորակ լուսանկարը ներկայացրեք մինչև մայիսի 1ը, 2015թ., liahona@lds.org ում, է-փոստով liahona@ldschurch.org ում, կամ փոստով (տես հասցեն էջ 3-ում)։

Հետևյալ տեղեկությունը և թույլտվությունը պետք է ներառված լինի ձեր է-փոստի կամ նամակի մեջ. (1) լրիվ անունը, (2) ծննդյան թիվը, (3) ծովալը կամ ճյուղը, (4) ցիցը կամ շրջանը, (5) ձեր գրավոր թույլտվությունը և, եթե դուք 18 տարեկանից ցածր եք, ձեր ծնողի գրավոր թույլտվությունը (է-փոստն ընդունելի է) ձեր պատասխանը և լուսանկարը տպագրելու համար։

Պատասխանները կարող են խմբագրվել չափսերի կամ հստակության համար։

Էլլին գիտեր, ով էր իր
հերոսը, բայց վախենում
էր այդ մասին ստել:

Ո՞վ է քո

Շառլոտ Մաե Շեփարդ

Հիմնված է իրական պատմության վրա

«Պաշտպանի քո խիղճը, քո պատիվը, քո
հավատքը. կանգնիր ինչպես հերոս» (Children's
Songbook, 158):

Էլլին նյարդայնացած կրծում էր
Էդունգը: Օրիորդ Ֆիթսը դասա-
րանի շարքերով քայլելով հարցնում
էր յուրաքանչյուր աշակերտի՝ մեկ
առ մեկ:

«Ո՞վ է քո հերոսը»: Օրիորդ
Ֆիթսը հարցրեց Ջերեմիին:
Ջերեմին առանց վայրկյան
կորցնելու պատասխանեց:



հերոսը

«Հայրիկս», - ասաց նա հպարտությամբ:

Օրիորդ Ֆիթսը ժպտաց: «Իսկ քո՞նը, Սառա»:

Նա նույն արագությամբ պատասխանեց. «Աբրահամ Լինկոլնը»:

Էլլին զգաց ինչպես է իր սիրտը բաբախում, երբ Օրիորդ Ֆիթսը շարունակում էր աշակերտներին հարցնել: Նրանք ամբողջ օրը խոսում էին հերոսներից, և այժմ ամեն մեկը պետք է ասեր, ով էր իր հերոսը՝ ողջ դասարանի առաջ:

Էմբերն ու Ջասթինն ասացին, որ մայրիկն էր իրենց հերոսը: Վոլթերն ասաց, որ պապիկն էր իր հերոսը: Մի քանի աշակերտներ որպես իրենց հերոսներ նշեցին թագավորների և նախագահների:

Մի քանի աշակերտ էր մնացել և Օրիորդ Ֆիթսը կմոտենար Էլլիին: Նա պետք է արագ մտածեր՝ ով էր իր հերոսը:

Էլլին շփոթված նայեց իր կոշիկներին: Հերոս ընտրելը չէր իրական խնդիրը: Նա գիտեր, ով էր իր հերոսը: Դա Հիսուս Քրիստոսն էր: Նա բժշկեց հիվանդներին, կենդանացրեց մահացածներին և վճարեց բոլորի մեղքերի համար: Նա երբևէ ապրած մեծագույն հերոսն էր: Նա պարզապես վախենում էր այդ մասին ասել:

Էլլին կրկին կրծեց իր եղունգը, երբ մտածեց, որ պետք է ամբողջ դասարանի առաջ ասեր, որ իր հերոսը Հիսուս Քրիստոսն էր: Իսկ եթե Ջերեմին ծիծաղե՞ր իր վրա: Եվ Սառան ու Էմբերն իր ետևից փսփսայի՞ն դասամիջոցին:

Նա անշուշտ գիտեր, որ Հիսուս Քրիստոսն էր իր հերոսը: Բայց դա չէր նշանակում,

որ բոլորը պետք է իմանային այդ մասին:

Օրիորդ Ֆիթսը կանգնեց Էլլիի դիմաց և ժպտաց: «Իսկ ո՞վ է քո հերոսը, Էլլի»:

Էլլին նայեց կողքի շարքի աշակերտներին և Օրիորդ Ֆիթսին: «Աբրահամ Լինկոլնը», - շնջաց նա:

Օրիորդ Ֆիթսը պայծառ ժպտում էր: «Հրաշալի է», - ասաց նա և թեքվեց դեպի մյուս աշակերտը:

Երբ ուսուցչուհին հեռացավ իր մոտից, Էլլին թեթևացած շունչ քաշեց: Փառք Աստծուն, ամեն ինչ լավ ավարտվեց: Վերջին բանը, որ նա ուզում էր, այն էր, որ դասարանում բոլորն իմանային, որ իր հերոսն էր,-

«Հիսուս Քրիստոսը», - մի ձայն ասաց:


Էլլիի աչքերը լայնացան, և նա դանդաղ շրջվեց: Իր շարքի վերջում նստած էր խառնված մազերով մի փոքրամարմին տղա: Նա նիհար էր և ամաչկոտ, և միշտ նստում էր դասարանի վերջում: Էլլին նույնիսկ չգիտեր նրա անունը: Նա չէր հիշում, որ նա մի բառ անգամ արտասանած լիներ, մինչ այժմ:

Մի քանի աշակերտներ շրջվեցին և նայեցին այդ տղային, բայց նա ոչ մեկին չէր նկատում: Նա ուղիղ նայելով Օրիորդ Ֆիթսին՝ կրկնեց. «Իմ հերոսը Հիսուս Քրիստոսն է»:

Օրիորդ Ֆիթսն ուրախ ժպտաց և շարունակեց շարքով: Էլլին զարմացած նայեց այդ տղային: Ինքը վախեցավ ասել բոլորին, ով էր իր հերոսը, բայց այդ տղան չվախեցավ: Նա նույնիսկ իր եկեղեցի չէր այցելում: Բայց նա գիտեր, թե որքան կարևոր էր լինել Հիսուս Քրիստոսի օրինակ, անգամ երբ դա շատ դժվար էր:

Էլլին ժպտաց այդ տղային: Նա այլևս չէր վախենում ասել, թե ով էր իր հերոսը: Ի վերջո, այժմ իրենք երկուսով էին: ■

Հեղինակն ստորում է Կալիֆորնիացում, ՄՄՆ:



Աղոթքները և տաճարները

Մակքել Ջորջ

Հիմնված է իրական
պատմության վրա



«Դուք իմ աշակերտներն եք,
եթե իրար վրա սեր ունենաք» (Հովհ. 13.35):
Դանին նայեց վերև, բայց դեռ չէր կարողանում
Էտեսնել գեղեցիկ տաճարի վերևի մասը: Այս-
տեղ են գալիս այլ եկեղեցուն պատկանող
մարդիկ: Դանին չէր հասկանում, թե ինչու
էր իր ընտանիքը հաճախում եկեղեցի
ուրբաթ օրը, բայց հայրիկն ասաց,
որ իրենք գնում էին երեկոյան
ժամերգության:

«Ի՞նչ է դա», - հարցրեց Դանին:

«Մարդիկ հավաքվում են եկե-
ղեցում» երգում են, կարդում են
սուրբ գրություններ և միասին
աղոթում են», - ասաց հայրիկը, -
Ինչպես մի մեծ ընտանիք օրվա
վերջում:

Դանիին դա շատ դուր եկավ:
Նա և իր ընտանիքը եկել էին Անգ-
լիա: Անցյալ կիրակի նրանք այ-
ցելել էին մի ցից Յորք քաղաքում:
Երեխաների խմբում բոլորը գի-
տեին նույն սուրբ գրությունները
և երգերը, որոնք Դանին գիտեր:
Նա գիտեր, որ ծովսր որտեղ նա
այցելում էր Հիսուսի իսկական
եկեղեցու մաս էր, ճիշտ այնպես,
ինչպես նրանց հաճախած ծովսր:

Բայց այս եկեղեցին շատ էր
տարբերվում իր իմացած եկեղե-
ցուց: Նա նկատեց մոմերով լի մի
փոքր սեղան: Դանին տեսավ, թե
ինչպես մի տղա մոմ վառեց:

«Ինչո՞ւ ես դու մոմ վառում», -
հարցրեց Դանին:

Տղան ժպտաց: «Ես մոմ եմ
վառում, երբ աղոթում եմ հաստուկ
բաների համար: Քանի դեռ մոմը
վառվում է, հուսով եմ, որ աղոթքը
կշարունակվի լավե Աստծո
կողմից»:





«Մենք պետք է սիրենք բոլոր մարդկանց, լինենք լավ լսողներ և ցուցաբերենք մտահոգություն նրանց անկեղծ համոզմունքների հանդեպ»:

Երեց Դավիթ Ն. Օնյուս՝ Տասներկու Առաքյալների Քվորումից, «Սիրելի ուրիշներին և ապրել տարբերություններով հանդերձ», *Լիպհոնա*, նոյ. 2014, 27:

Դրանք Դանիին սովորական մոմեր թվացին: Նա փոքր-ինչ շփոթված էր, բայց ուզում էր քաղաքավարի լինել: Նա ժպտաց այդ տղային:

Դանին և իր ընտանիքը նստեցին, և շուտով երեկոյան ժամերգությունը սկսվեց: Նա տեսավ նույն տղային մի քանի շաբթ այն կողմ: Եվ շուտով հասկացավ, որ նա ոչ մի երգ չգիտի այն երգերից, որ բոլորը երգում են: Աղոթելիս նրանք կարդում էին մի փոքր գրքից: Ամեն ինչ տարբերվում էր այն ամենից, ինչին նա ծանոթ էր:

Ճիշտ է երաժշտությունն իրեն ծանոթ չէր, բայց շատ գեղեցիկ էր: Այնուհետև մի մարդ կանգնեց, որ կարդա սուրբ գրություններից: Նա կրում էր թիկնոց, և չէր հագել կոստյում և փողկապ՝ ինչպես Դանիի եպիսկոպոսը: Բայց երբ նա սկսեց, Դանին հասկացավ, որ գիտեր այդ պատմությունը: Նա կարդում էր այն մասին, թե ինչպես Հիսուսը բժշկեց 10 բորոտներին:

«Հայրիկ,- շնջաց Դանին,- Ես սիրում եմ այս պատմությունը»:

Հայրը ժպտաց,- «Ես նույնպես»:

Այնուհետև թիկնոցով մարդը աղոթք ասեց: Նա խնդրեց Աստծուն, որ օրհներ հիվանդներին և կարիքավորներին: Ճիշտ այնպես, ինչպես Դանին էր անում: Նա նաև հատուկ օրհնություններ խնդրեց իր եկեղեցու ղեկավարների համար: Դանին հիշեց, թե ինչպես նա և իր ընտանիքը միշտ խնդրում էին, որ Երկնային Հայրն օրհներ

Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնին և նրա խորհրդականներին:

Դանիի սիրտը ջերմությամբ լցվեց: Նա գիտեր, որ այդպես Երկնային Հայրն ասում էր իրեն, որ սիրում էր Իր *բնոր* զավակներին և լսում էր նրանց *բոլորի* աղոթքները, նույնիսկ եթե նրանք հաճախում էին ուրիշ եկեղեցի և չունեին ավետարանի լրիվությունը:

Երբ նրանք վեր կացան, որ գնային, հայրը ստուգեց իր հեռախոսը: Նա կարծես տխրեց, երբ կարդում էր իր հաղորդագրությունները: «Քույր Մոնսոնը մահացել է,- ասաց նա:

«Օ՛, ոչ»: Դանին մտքում արագ աղոթեց Նախագահ Մոնսոնի համար:


«Քեզ լավ ես գգում,- հարցրեց ինչ-որ մեկը: Դա այն տղան էր: Նա լսեց Դանիին, և նա մտահոգված էր երևում:

«Քույր Մոնսոնն է մահացել,- ասաց Դանին,- Նա մեր մարգարեի՝ Նախագահ Մոնսոնի կինն էր»:

«Ցավում եմ,- սիրալիր ասաց տղան,- Ես մի մոմ կվառեմ նրա համար»:

Դանին ժպտաց և շնորհակալություն հայտնեց նրան: Իր համար շատ հաճելի էր, որ այդ տղան պետք է հատուկ աղոթքեր Նախագահ Մոնսոնի համար: Նա գիտեր, որ Երկնային Հայրը կլսեր իր սրտում ասված աղոթքը և տղայի աղոթքը՝ նույնպես: ■

Հեղինակն ապրում է Յոտսայում, ԱՄՆ:





Երեց
Ռասսել Մ. Նեյսոն

Տասներկու
Առաքյալների
Քվորումից

Տասներկու Առա-
քյալների Քվորումի
անդամները Հիսուս
Քրիստոսի հատուկ
վկաներն են:


Ինչո՞ւ է ՀՆԱԶԱՆԴ լինելն այդքան կարևոր:



Պատվիրանները պահելու արդյունքում
օրհնություններ են գալիս՝ ամեն անգամ:



Պատվիրանները խախտելու արդյունքում
օրհնություններ են կորսվում՝ ամեն անգամ:



Անգամ, եթե «ամեն ոք անում
է դա», սխալը երբեք ճիշտ չէ:



Հնազանդություն դրսևորելով առ Աստված,
դուք ցույց եք տալիս ձեր հավատքը:

«Մա այն օրն է որ
Տերն արաւ, թող
ցնծանք եւ ուրախ
լինինք ստրանուն»:

—Սաղմոս 118.24

ԵՐԵՎԱՆԻ ՄԱՅՐԱՆ



Հիսուսը բուժում է բորոտին



Էրին Սանդերսոն

Մտածեք այն ժամանակի մասին, երբ դուք հիվանդ էիք: Ինչ-որ մեկը օգնե՞լ է, որ դուք ավելի լավ զգաք ձեզ:

Նոր Կտակարանում մենք կարդում ենք, թե ինչպես էր Հիսուսը բարյացակամորեն վերաբերվում հիվանդ մարդկանց: Մի օր բորոտություն կոչվող մաշկի ծանր հիվանդությամբ մի մարդ գնաց Հիսուսի մոտ: Նա գիտեր, որ Հիսուսը բոլոր հիվանդներին բուժելու ուժ ուներ: Նա հավատում էր, որ Հիսուսը նրան կբժկեր: Հիսուսը դիպավ բորոտին և ասաց. «Մբբուիք» (Մարկոս 1.41): Դա ասելուն պես այդ մարդը բժշկվեց:

Մենք կարող ենք հետևել Հիսուսին և լինել բարի ու սիրավիր այն մարդկանց հանդեպ, ովքեր հիվանդ կամ տխուր են: ■

Հեղինակն ստորում է Յոսուսյում, ԱՄՆ:

ՄՏՔԵՐ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԶՐՈՒՅՑԻ ՀԱՄԱՐ

Կարող եք օգտագործել էջ 74-ի սուրբ գրքյան կերպարները՝ Մարկոս 1.40–42-ի պատմությունը պատմելու համար: Այնուհետև կարդացեք Հուդա 1.22-ը և ծրագրեք որպես ընտանիք՝ ինչպես կարող եք տարբերություն բերել ինչ-որ մեկի կյանք: Միգուցե կարող եք որևէ մեկի համար գաղտնի ծառայություն մատուցել:

Երգ. «Պատմիր ինձ Հիսուսի մասին»
(Children's Songbook, 57)

Սուրբ գրություններ. Մարկոս 1.40–42

Տեսանյութեր. Այցելեք Biblevideos.org և դիտեք "Jesus Heals a Lame Man on the Sabbath" («Հիսուսը բժշկում է կաղին շաբաթ օրը») և "Jesus Heals a Man Born Blind" («Հիսուսը բժշկում է ի ծնե կույրին»):



ՔԱՅԼԵՆՔ ՀԻՍՈՒՍԻ ՈՏՆԱՇԵՏՔԵՐՈՎ

Ձեր ընտանիքով դերերով ներկայացրեք, թե ինչպես դուք նման իրավիճակներում սեր կցուցաբերեիք ուրիշների հանդեպ: Ինքներդ մտածեք որոշ իրավիճակներ:

Մի նոր ընտանիք է տեղափոխվել ձեր հարևանությամբ:

Դպրոցում որոշ երեխաներ վատ են վերաբերվում մի երեխայի:

Մի այցելու, որը ոչ մեկին չի ճանաչում եկեղեցում, գալիս է երեխաների խումբ:

Ձեզ կրտսեր եղբայրը կամ քույրը ոչ ոքի չունի, որ իր հետ խաղա:

Երեխան լաց է լինում, իսկ ձեր մայրը ընթրիք է պատրաստում:

Ձեր ծխից կամ ճյուղից մեկը հիվանդ է և չի կարողանում տևից դուրս գալ:

ՍՈՎՈՐԵՔ ԱՎԵԼԻՆ. ԱՎԵՏԱՐԱՆՆԵՐ


Նոր Կտակարանը ունի չորս հատուկ գիրք. դրանք կոչվում են Ավետարաններ, որոնք գրվել են Հիսուսի որոշ աշակերտների կողմից: Ավետարանները պատմում են երկրի վրա Հիսուս Քրիստոսի կյանքի մասին: Բոլորովին բժշկելու պատմությունը տրված է երեք Ավետարանի մեջ: Այն գետնոված է հետևյալ հատվածներում՝ Մարկոս 1.40–42, Նան տես Մատթեոս 8.2–4 և Ղուկաս 5.12–14:

ՍՈՒՐԲ ԳՐՔՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ. ԲԱՌԵՐԻ ՓՆՏՐՈՒՄ

Մարկոս 1.41-ում օգտագործվում է *գթալ* բառը: Երբեմն Աստվածաշնչում կհանդիպեն բառեր, որոնք դուք չեք հասկանա: Երբ հանդիպում եք ձեզ համար անծանոթ բառի, կարող եք որպես օգնություն օգտագործել Սուրբ գրքերի ուղեցույցը: Օրինակ, կարող եք գտնել «Գթալ» բառը, որպեսզի պարզեք, թե ինչ է դա նշանակում, և գտնեք այդ բառը կիրառող այլ սուրբ գրություններ: Ուրիշ ինչ բառերի բացատրություններ կարող եք գտնել այս պատմության մեջ, որտեղ Հիսուսը բժշկում է բորոտին:

Հիսուսը բուժում է հիվանդներին

Մարկոս 1.40-42;
Դուկաս 4.38-40



Ամբիս

Այս էջը ստանձնեք հաստ թղթի կամ ստվարաթղթի վրա: Որից հետո կտրեք պատկերները և փակցրեք դրանք փայտիկների կամ թղթե պարկերի վրա: Օգտագործեք դրանք Նոր Կտակարանից պատմություններ բեմադրելիս: Կարող եք ավելի շատ օրինակներ տպել hiahona.lds.org կայքից:



Հիսուս Զրիստոս



Բորոտ



Պնտրոսի զոքանչը

Գիտեն, Հիսուսը սիրում է ինձ





Ջեյն Մաքքրայդ Չոուս
Հիմնված է իրական պատմության վրա

Լեյնին փորձում
էր եկեղեցում
ակնածալից լինել:
Բայց նա հոգնել էր
և ուզում էր ոտքերը
շարժել:




Հաղորդությունն ավարվելուց հետո
Լեյնին բացեց Հիսուսի մասին իր
գիրքը: Նա գտավ նկարը, որտեղ
Հիսուսը փոքր երեխաների հետ
էր: Դա իրեն խաղաղությամբ և
ուրախությամբ լցրեց:

Շարունակությունը էջ 79-ում:



1-4 տրել



8

Գիտեմ, սիրում է Փրկիչն ինձ
Թեմի Ջեպտոն Քրիստոսը և Դերեմա Բեյ



Իմ գիրքը ՏԻՄՈՒՄԻ մասին

1

4-5 տրել



5

Քիչ առաջ իմ ընկերներս ծաղիկներ էին հավաքում



4

Քիչ առաջ իմ ընկերներս ծաղիկներ էին հավաքում



3-Օտրել

2-Օտրել




Գեղատեսիլ մի վայրում հավաքվեցին

2



Սիրտս կտամ Նրան: Գիտե՞մ, սիրում է Փրկիչն ինձ:

7



:մեղմությամբ թուր ուտեց
'դժբախտ մեղք թուր' ղոճոտող ղոսթոսդիս

3



'դուր ոք իմությունս: աշ է իմությունս

9

Ծախել

Ծախել



Հաղորդության ժողովից հետո
Լեյնին հարցրեց մայրիկին.
«Ինչո՞ւ է ավելի հեշտ լինել
հարգալից, երբ ես թերթում
եմ Հիսուսի մասին իմ
գիրքը»:

«Կարծում եմ, որովհետև այն
հիշեցնում է, թե որքան շատ
է Հիսուսը քեզ սիրում», - ասեց
մայրիկը:

Լեյնին գլխով
արեց: «Կարծում
ես Հիսուսը
գիտի՞, որ
ես էլ Նրան
եմ սիրում», -
հարցրեց նա:

Մայրիկը գրկեց
Լեյնիին: «Վստահ
եմ, որ Նա
գիտի»: ■




Հեղինակն ստորում է Կոլորադոյում, ԱՄՆ:



Երեց
Կլաուդիո Դ. Ցիվիկ
Յոթանասուկից

ՃԻՇՏ ուղին



*«Լսե՛ք խոսքերն այն Աստծո, որն արարել է ձեզ»
(Վեմ 43.23):*

Մի քանի տարի առաջ ԱՄՆ-ում ընտանիքիս հետ այցելեցինք Յուտայի Կամարների ազգային զբոսայգի: Այնտեղի ամենագեղատեսիլ և ամենահայտնի կամարներից մեկը կոչվում է Փխրուն կամար, և մենք որոշեցինք բարձրանալով սարը՝ հասնել այդ կամարին:

Մենք մեծ խանդավառությամբ սկսեցինք մեր ճանապարհը, սակայն շուտով մյուսները հանգստանալով կարիք զգացին: Այնքան մեծ էր այնտեղ շուտ հասնելու իմ ցանկությունը, որ ես մենակ շարունակեցի ճանապարհը: Առանց ուշադրություն դարձնելու այն ուղուն, որով պետք է գնայի, ես հետևեցի իմ առջևում գնացող մարդուն, ով, կարծես, գիտեր, ուր էր գնում:

Քայլելու համար ճանապարհը դառնում էր ավելի ու ավելի դժվար: Ես համոզվեցի, որ ընտանիքս չէր

կարող անցնել այն: Հանկարծ ես տեսա Փխրուն Կամարը, սակայն ի զարմանս ինձ, այն անհասանելի էր ինձ համար: Արահետը, որով ես բարձրացել էի, չէր տանում դեպի կամարը:

Հիասթափված ես բռնեցի ետդարձի ճանապարհը: Մնեմք սպասում էի, երբ էի կրկին իմ խմբին հանդիպելու: Նրանք ինձ ասացին, որ ճիշտ ճանապարհը ցույց տվող նշաններին ուշադիր և ջանասիրաբար հետևելով, նրանք հասել էին Փխրուն կամարին: Դժբախտաբար, ես գնացել էի սխալ ճանապարհով: Ինչպիսի՞ դաս ես սովորեցի:

Միշտ ձեր տեսադաշտում պահեք ձեր ուղին, որը տանում է դեպի հավերժական կյանք ձեր Երկնային Հոր հետ: Հետևեք ձեր սովորած ավետարանական սկզբունքներին և պատվիրաններին, և կմնաք ճիշտ ուղու վրա և հավերժ կապրեք Նրա հետ: ■

«Եկե՛ք չբռնե՛ք սխալ ճանապարհը» երաժիշտ, Լիախոնա, մայիս 2014, 39-41:

Այս տարի լրանում է 100 տարին այն օրից, երբ Մուսջին Նախագահությունը ոգևորեց անդամներին ընտանեկան երեկոներ անցկացնել: Ներկայացնում ենք Մուսջին Նախագահության նամակից ընտանեկան երեկոներին նվիրված հատվածը: Այն հրապարակվել է 1915թ. ապրիլին և տպագրվել է 1915թ. հունիսին Improvement Era-ում (էջեր 733–734): Մեծատառերով գրելն ու կետադրությունը ձևափոխվել են:

Հարգելի եղբայրներ և քույրեր, Մենք խորհուրդ ենք տալիս Վերջին Օրերի Սրբերին ավելի ուշադիր պահել Տիրոջ պատվիրանը, որը տրված է Վարդապետություն և Ուխտերի 68-րդ բաժնում:

«Եվ բացի այդ, որքան որ ծնողները երեխաներ ունեն Միտնում . . . որոնց չեն ուսուցանում, որպեսզի միևնույն օր տարեկանը նրանք հասկանան վարդապետությունն ապաշխարության, հավատքի՝ առ Քրիստոսը՝ կենդանի Աստծո Որդին, և մկրտության ու ձեռնադրանալը Սուրբ Հոգու պարգևի, մեղքը լինի ծնողների գլխին, . . .

Եվ նրանք նաև պետք է իրենց երեխաներին ուսուցանեն աղոթել և ուղիղ քայլել Տիրոջ առաջ» [տես Վեճ 68.25–28]:

Միտնի զավակները պետք է նաև ավելի խորը հետևեն Աստծո պատվիրանին, որը նա տվել է հին Իսրայելին և կրկնել է Վերջին Օրերի Սրբերին:

«Պատվիր թո հորը և թո մորը, որ թո օրերը երկար լինեն այն երկրի վրա, որ Տերը՝ թո Աստվածը, տալիս է քեզ» [Ելից 20.12]:

Այս հայտնությունները մեծ ուժով պետք է կիրառվեն Վերջին Օրերի Սրբերի կողմից, և այս Եկեղեցու հայրերից ու մայրերից պահանջվում է, որ այդ պատվիրանները նրանք սովորեցնեն և կիրառեն տանը:

Այդ նպատակով մենք առաջարկում և կոչ ենք անում սկսել «ընտանեկան երեկոներ» անցկացնել

ամբողջ Եկեղեցում, երբ տանը հայրերն ու մայրերը իրենց շուրջը կհավաքեն իրենց տղաներին և աղջիկներին և նրանց կուսուցանեն Տիրոջ խոսքը: Այսպիսով, նրանք ավելի ամբողջական պատկերացում կկազմեն իրենց ընտանիքների պահանջների և կարիքների մասին և միաժամանակ կձանոթանան և իրենց երեխաներին կձանոթացնեն Հիսուս Քրիստոսի ավետարանի սկզբունքներին: Ընտանեկան երեկոն պետք է

օգտագործել համապատասխան ուսանավորներ, երգեր, պատմություններ և խաղեր: Կարելի է թեթև հյուրասիրություն կազմակերպել, որը պատրաստված կլինի հիմնականում տանը:

Պետք է ամեն կերպ խուսափել ձևականությունից և կաշկանդվածությունից, և ողջ ընտանիքը պետք է մասնակցի վարժություններին:

Այս հավաքները հնարավորություն կտան փոխադարձ վստահություն զարգացնել ծնողների և

երեխաների, եղբայրների և քույրերի միջև, ինչպես նաև առիթ կհանդիսանան ծնողների համար զգուշացման և խորհրդի խոսքեր ասել իրենց տղաներին և աղջիկներին: Դա տղաներին և աղջիկներին հնարավորություն կընձեռի պատվել հորը և մորը, և իրենց երախտագիտությունը հայտնել տան օրհնությունների համար, որպեսզի իրենց տրված Տիրոջ խոստումը բառացիորեն իրագործվի և իրենց կյանքի տոարիները երկարեն և երջանկությամբ լցվեն: . . .

Մենք . . . խրախուսում ենք երիտասարդներին այդ երեկո մնալ տանը և առավել ուսանելի, շահավետ և հետաքրքիր օգտագործել իրենց էներգիան:

Եթե Սրբերը օգտագործեն այս խորհուրդը, ապա մենք խոստանում ենք, որ մեծ օրհնություններ կհետևեն դրան:

Մերը տան մեջ և ծնողների հանդեպ հնազանդությունը կաճի: Հավատքը կզարգանա Իսրայելի երիտասարդության սրտերում և նրանք ձեռք կբերեն գործություն ճակատամարտելու իրենց պաշարող չարի ազդեցությունների ու գայթակղությունների դեմ:

Ձեր եղբայրներ՝
ԶՈԶԵՖ Ֆ. ՄՄԻԹ
ԷՆԹՈՆ Հ. ԼԱՆԴ
ԶԱՐԼՁ Վ. ՓԵՆԴՈԶ
Առաջին Նախագահություն ■

Ընտանեկան երեկոն 100 ՏԱՐԵԿԱՆ Է



նվիրված լինի աղոթքին, օրհներգերի, երգերի, գործիքային երաժշտության կատարմանը, սուրբ գրությունների ընթերցանությանը, ընտանեկան թեմաների և ավետարանի սկզբունքների վերաբերյալ հասուկ հրահանգավորմանը և կյանքի բարոյական խնդիրներին, ինչպես նաև ծնողների, տան, Եկեղեցու, հասարակության և ազգի հանդեպ երեխաների պարտականություններին և պարտավորություններին: Ավելի փոքր տարիքի երեխաների համար կարելի է

ՆԵՐՇՆՁՈՒՄՆԵՐ



Ինչպե՞ս կարող եմ ընտանեկան երեկոն դարձնել առաջնահերթություն:

«Մինչ դուք փորձում եք ամրապնդել ձեր ընտանիքն ու զարգացնել խաղաղություն, հիշեք ... ամենշաբաթյա ընտանեկան երեկոյի մասին: Զգույշ եղեք, որպեսզի ձեր ընտանեկան երեկոն չդարձնեք պարզապես զբաղված օրվա ուշացած մտահղացում: Որոշեք, որ երկուշաբթի երեկոյան ձեր ընտանիքը կհավաքվի տանը երեկոյի համար: Թույլ մի տվեք որպեսզի աշխատանքային զբաղվածությունը, սպորտը, արտադպրոցական միջոցառումները, տնային առաջադրանքը կամ որևէ այլ բան ավելի կարևոր լինի, քան այն ժամանակը, որը դուք միասին անց եք կացնում տանը ձեր ընտանիքի հետ: Ձեր երեկոյի կառուցվածքն այնքան կարևոր չէ, որքան ձեր ներդրած ժամանակը: Ավետարանը պետք է ուսուցանվի և պաշտոնապես և ոչ պաշտոնապես: Ընտանիքի յուրաքանչյուր անդամի համար այն դարձրեք իմաստավոր փորձառություն»:

Երեց Ռիչարդ Գ. Սքոթ² Տասներկու Սոաքյակների Քվորումից. «Հավատքի գործադրումը դարձրեք ձեր առաջնահերթությունը», *Լիսինա*, նոյ. 2014, 94:

Նաև այս համարում

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԶԱՓԱՀԱՍՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԱՌԱՋ ԳՆԱՑԵՔ


հավատքով

Նեփիի կյանքից այս չորս դեպքերը կարող են վստահություն հաղորդել ձեզ որոշում կայացնելիս:



Էջ 44

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ



Էջ 50

ԶՈԶԵՖԻ

ՇՆՈՐՀԻՎ

Ի՞նչ է ձեր կյանքում փոխվել Մարգարե Զոզեֆ Սմիթի շնորհիվ: Մտածեք այս վեց ճանապարհների մասին:

ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԳԻՏԵՄ, ՀԻՄՈՒՍԸ ՄԻՐՈՒՄ Է ԻՆՁ

Պատրաստե՛ք ձեր գրքույկը, որը կօգնի ձեզ ակնածանք ցուցաբերել եկեղեցում:



Էջ 76



ՀԻՄՈՒՍ
ՔՐԻՍՏՈՍԻ
ՎԵՐՋԻՆ ԾՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ
ԵԿԵՂԵՑԻ